

ՆՈՐԱՅԻ
ՎԵՐԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄՍ.ՄՆ Ա.Ո.Ա.ԶԻՆ

ՆԱԽՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԻՑ
ՄԻՆՉԵՒ
ԱՐԴԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ
ԱՆԿՈՒՄԸ

Ճեղինակ՝

Թրօմ. ԽՍ.ԶԻԿ ՍԱՄՈՒԷԼԻՆ



Հրատարակիչ՝ Յ. ՄէԲէՐԵԱՆ

Տպարան ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ, Գահիրէ




ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մ.Ս.Մ Ա.Ա.ԶԻՒ

ՀՆԱԳՈՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՒ Ե. ԴԱՐԻ ՍԿԻԶԲԸ
ՆԱԽՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀԱՍՏՐԱԿՈՒԹԻՒՆԻՑ ՄԻՆՉԵՒ
ԱՐԵԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

—
Թոյլատուած է ՀՍՍՌ ԼԺԿ-ի կողմից ոռպիս ձեռնարկ
միջնակարգ դպրոցների համար



1946

ՅՊԱՐՀՄԱՆ ՍՈՎԱԿԱ-ՄԵԽՐՈՊ

Գ. Ա. Հ. Բ. Է.

A 11
83884



ԵԱՀ ԳՐԴԱՐԱԾ ՄՊՈՎԱՍԱԲ

Արտասահմանի նետ կուլտուրական կապի հայկական
ընկերութեան վարչութեան կողմէ մասնաւոր
արտօնութեամբ հրատարակուած

Ազգային ժամանակակից գործականութեան առաջնահարաբերութեան
հայութ հայութաբանական գործականութեան առաջնահարաբերութեան
աշխարհական գործականութեան

Խոհեմազ ամեա քննութեան 4003 և Կուլտուրական
տակա խմբական գործականութեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ընկ. ընկ. Ստալինի, Կիրովի եւ Ֆդանովի 1934 թ. օգոստոսի պատմական դիտողութիւններից յետոյ, ՍՍՌԴ ժողովուրդների պատմութեան ուսումնասիրութիւնը դրուեց բոլորվիճ նոր հիմքերի վրայ:

Մեր կառավարութիւնը 1936 թ. մարտի 3ին մրցում յայտարարեցին տարրական դպրոցների համար ՍՍՌԴ պատմութեան լաւագոյն դասագիրք գրելու: Այդ մրցումը լայն արձագանք գտաւ Հայկական ՍՍՌԴում եւս, որտեղ դեկալար օրկանները յանձնարարեցին Համամիութեան Գիտութիւնների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Պատմութեան եւ Նիւթական կուլտուրայի Խնսիտուտին կազմել հայ ժողովրդի պատմութեան դասագիրք՝ միջնակարգ դպրոցների համար: Այդ յանձնարարութիւնն իրականացնելու նպատակով ընթրուած յատուկ յանձնախումբը կազմեց այս ձեռնարկը, որն ընդգրկում է հայ ժողովրդի պատմութիւնը նրա սկզբնաւորումից մինչեւ մեր օրերը: Ձեռնարկը բաղկացած է երկու մասից եւ լոյս է ընծայում հայերեն եւ ուսւերեն լեզուներով: Առաջին մասն ընդգրկում է մինչեւ ԺՅ. դարի վերջը, իսկ երկրորդը՝ ԺՅ. դարից սկսած մինչեւ մեր օրերը:

Զեռնարկի առաջին մասը գրել են՝

1. ԲԵՆԻԱՄԻՆ ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ՝ Հայաստանի աշխարհագրական միջավայրը:

2. ԲԲՕՖ. ԽԱԶԻԿ ՍԱՄՈՒԵԼ ԿԵՆԱՆ՝ Նախնազարեան համայնական հասարակութիւնից մինչեւ Արևակունիների՝ բազաւորութեան անկումը.

3. ՀԱՄՕ ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ՝ Միջին դարերից մինչեւ ԺՅ. դարի վերջը:

4. ՍԵՐՈԲ ՊՈՂՈՍԵԱՆ՝ Կիլիկիայի հայկական բազաւորութիւնից մինչեւ ԺՅ. դարի վերջը:

Պատմութեան եւ Նիւթական կուլտուրայի Խնսիտուտի գիտական խորհուրդն իր մի շարք նիստերում բնել է ձեռնարկը եւ մրցել անհրաժեշտ ուղղումներ ու փոփոխութիւններ: Այնուհետև, ընդհանուր խմբագրութիւնը կատարել է Արմենանի Նախագահութեան ընթրած յատուկ յանձնաժողովը:

Հարկաւ, ձեռնարկս զերծ չի լինի թերութիւններից, ուստի բոլոր դիտուրիւնները, որոնք կ'արուեն այդ առթիւ, սիրով կ'ընդունուեն եւ նկատի կ'առնուեն հետագայ հրատարակութիւնների ժամանակ:

Ծ. Հ. Հրատարակութեան դժուարութեան պատճառով, հարկադրուեցանք գրեին առաջին մասը երեք անջատ հատուերով լոյս ընծայել: Առաջին գրչուսը՝ Հայաստանի աշխարհագրական միջավայրը, զանց առինք, որով՝ ներկայ առաջին հատուր Բրօֆ. Խաչիկ Սամուելեանի ուսումնասիրած բաժինն է՝ նախնազարեան համայնական հասարակութիւնից մինչեւ Մթակունիների բազաւորութեան անկումը:



Հ Ի Ն Շ Բ Զ Ա Ն

Ա Պ Ա Զ Ի Խ Գ Լ Ո Ւ Խ

Ն Ա Խ Ա Դ Ա Ր Ե Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ա Կ Ա Ն Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ա Բ

Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ո Ւ Մ

Ն ա խ ս ն ա դ ա ր ե ա ն
հ ա մ ա յ ն ա կ ա ն
հ ա ս ա ր ա կ ու թ ե ա ն
զ ա ր գ ա ց մ ա ն
շ ր ջ ա ն ն ե ր ի ք

Հ ն ա գ ի տ ա կ ա ն հ ե տ ա զ օ տ ո ւ թ ի ւ ն ն ե ր ը ց ո յ ց ե ն տ ա լ ի ս ,
ո ր մ ե զ ն ի ց դ ե ռ տ ա ս ն ե ա կ հ ա զ ա ր ա ւ ո ր տ ա ր ի ք ն ե ր տ ա ռ ա ջ
Հ ա յ կ ա կ ա ն բ ա ր ձ ր ա վ ս ն դ լ ա կ ո ւ մ ե ւ ս ա պ ր ե լ է ն ա խ ն ա տ
դ ա ր ե ա ն մ ա ր դ ը , Կ ա ն գ ն ա ծ լ ի ն ե լ ո վ մ ա ր դ կ ա յ ի ն հ ա ս ա
ր ա կ ո ւ թ ե ա ն զ ա ր գ ա ց մ ա ն ա մ ե ն ա ց ա ծ ր տ ա տ ի ճ ա ն ի վ ր ա յ ,
ն ա խ ն ա դ ա ր ե ա ն մ ա ր դ ը , բ ն ա կ ս ն ա ր ա ր , չ է ր կ ա ր ո ղ
թ ո ղ ն ե լ պ ա տ մ ա կ ա ն գ ր ա ւ ո ր տ ե ղ ե կ ո ւ թ ի ւ ն ն ե ր , ո ւ ս տ ի ն ր ա տ մ ա ս ի ն գ ա
զ ա փ ա ր կ ա զ մ ե լ ո ւ հ ա մ ա ր պ է տ ք է դ ի մ ե լ ն ի ւ թ ա կ ա ն կ ո ւ լ ո ւ ր ա յ ի ա յ ն
մ ն ա ց ո ր դ ն ե ր ի ն , ո ր ո ն ք յ ա յ տ ա ր ե ր ո ւ մ ե ն հ ա ս ա գ ի տ ա կ ա ն պ ե ղ ո ւ մ ն ե ր ի
ժ ա մ ա ն ա կ ի : Ն ի թ ա կ ա ն կ ո ւ լ ո ւ ր ա յ ի ա յ դ մ ն ա ց ո ր դ ն ե ր ի ո ւ ս ո ւ մ ն ա տ ի ր ո ւ
թ ի ւ ն ն ե ր ի և մ ա ր դ կ ո ւ թ ե ա ն զ ա ր գ ա ց մ ա ն ց ա ծ ր տ ա տ ի ճ ա ն ի վ ր ա յ կ ա ն գ ն ա ծ
ց ե ղ ե ր ի կ ե ն ց ա ղ ի դ ի ա ղ ո ւ թ ի ւ ն ն ե ր ի հ ի մ ա ն վ ր ա յ , պ ա տ մ ա կ ա ն գ ի տ ո ւ
թ ի ւ ն ը կ ա ր ո ղ ա ց ե լ է մ ո տ ա ւ ո ր ա յ է ս ո ւ ր ո ւ ա գ ձ ե լ ն ա խ ն ա դ ա ր ե ա ն մ ա ր դ ո ւ
տ ա ս ն ե ա կ հ ա զ ա ր ա մ ե ա կ ն ե ր ի զ ա ր գ ա ց մ ա ն ո ւ ղ ի ն :

Ա շ խ ա տ ա ն ք ի բ ա ր ե ր ա ր ա զ դ ե ց ո ւ թ ե ա ն շ ն ո ր հ ի ւ ն ա խ ա մ ա ր դ ը կ տ պ կ ի
վ ի ճ ա կ ի ց ա ն ց ե լ է մ ա ր դ ո ւ վ ի ճ ա կ ի ն և ա պ ա տ չ խ ա տ ա ն ք ի գ ո ր ծ ի ք ն ե ր
պ ա տ ր ա ս տ ե լ ո ւ և կ ի ր ա ո ւ ե լ մ ի ջ ո ց ո վ՝ հ ա ս ե լ ք ա ղ ա ք ա կ ր թ ո ւ թ ե ա ն ա ս
տ ի ճ ա ն ի ն : Գ ո ր ծ ի ք ն ե ր պ ա տ ր ա ս տ ե լ ը և ն ր ա ն ց կ ի ր ա ո ւ մ ը վ ճ ո ւ կ ա ն
ն շ ա ն ա կ ո ւ թ ի ւ ն ե ն ո ւ ն ե ց ե լ ն ա խ ն ա դ ա ր ե ա ն մ ա ր դ ո ւ զ ա ր գ ա ց մ ա ն հ ա մ ա ր ,
լ ա յ ն հ ա ր ա ս ո ր ո ւ թ ի ւ ն տ ա լ ո վ ն ր ա ն տ ի ր ա պ ե ա ե լ ո ւ բ ն ո ւ թ ե ա ն բ ա ր ի ք ն ե շ
ր ի ն և ո ւ ժ ե ր ի ն :

Հ ն ա գ ո յ ն գ ո ր ծ ի ք ն ե ր ը , ո ր պ ա տ ր ա ս տ ե լ և զ ո ր ծ է ա ծ ե լ զ ա ր գ ա ց մ ա ն
ց ա ծ ր տ ա տ ի ճ ա ն ի վ ր ա յ կ ա ն գ ն ա ծ մ ա ր դ ը , զ ի լ ա ւ ո ր ա պ է ս ք ա ր ի ց ե ն ե ղ ե լ ։
Հ ա ր ի ւ ր հ ա զ ա ր ա ւ ո ր տ ա ր ի ք ն ե ր ի ը ն թ ա ց ք ո ւ մ ք ա ր ը (փ ա յ տ ի և ո ս կ ր ի հ ե տ)

որպէս հիմնական նիւթ է ծառայել գործիքներ և զէնքեր պատրաստելու համար Երկրագունադի տարբեր մասերում հնագիտական պեղումների միջոցով երեւան են բերուել այդ քարէ գործիքների բազմաթիւ ու բազմաթեսակ մնացորդներ, որոնք իրարից տարբերում են ոչ միայն ձեւով, այլեւ կատարելութեան աստիճանով։ Քարէ այդ գործիքների ուսումնական հիման վրայ էլ գիտնականները նախնադարեան մարդու անցած կեանքի այդ շրջանն անուանում են Էարէ դար, բաժանելով այն երկու հիմնական էտապների՝ պալեոլիթի դար (յունարէն, նշանակում է հին քարէ դար) և նեոլիթի դար (նոր քարէ դար):

Պալեոլիթի գործիքները կամ ուղղակի ընտրուած են բնականից, որպէս իրենց ձեւով և կարծրութեամբ ուրծածութեան համար աւելի յարմար, կամ թէ ինքը՝ մարդը քարի կտորները չարգելու և որոշ չափով յդկելու միջոցով նրանց տուել է գործածութեան համապատասխան ձեւ։ Նեոլիթի շրջանի գործիքները լաւ յդկուած ու ձեւաւորուսծ են մարդու ձեռքով և աւելի լաւ յարմարեցուած գործածութեան համար։

Երբ նախնադարեան մարդը ձեռք է բերում մետաղներ մշակելու արուեստը և սկսում է մետաղից գործիքներ պատրաստել, ապա քարին փոխարինում է պրոնզը, որն ստացւում է գիւրութեամբ հալող երկու մետաղների պղնձի և անագի խառնուրդից։ Երկար դարերից յետոյ պըրոնզին փոխարինում է երկաթը, որը թէեւ աւելի գժուարութեամբ էր մշակւում, բայց աւելի դիմացկուն է և, բացի այդ, բնութեան մէջ աւելի մեծ քանակութեամբ ու աւելի շտա վայրերում է տարածուած։ Պըրոնզէ և երկաթէ գործիքների գործածութեան այդ շրջանները գիտնականներն անուանում են պրոնզէ դար և երկաթէ դար։

Այսպիսով, նախնադարեան շրջանն «ատորաբաժմանուելով ըստ գործիքների և զէնքերի նիւթեղէնի՝ արոնւում է քարէ դարի, պրոնզէ դարի և երկաթէ դարի»։

Նախնադարեան համարակութեան աշխատանքի գործիքների տեխնիկայի զարգացման այս աստիճաններից իւրաքանչիւրին համապատասխանում են որոշ արտադրական և սօցիալական յարաբերութիւններ։

Քարէ դարի առաջին շրջանը կոչւում է պալեոլիթ։
Պալեոլիթ Վաղ պալեոլիթի շրջանում մարդը ղեռեւս զանուում էր ամենացածր աստիճանի վրայ և իր կենցաղով քիչ էր տարբերում կապիկց։ Նա դեռեւս մեծ մասմբ տպրում էր ծառերի վրայ, այրերում, քարանձաւններում, որով պաշտպանւում էր գիշտափիչ կենդանիներից։ Նա մնուում էր իր հաւաքած պառուղներով, արմատիքով, հում մսով։ Մնունդ հայթայթելու և գագանների դէմ պայքարելու համար գործ էր ածում կոպիտ ու տնտաշ քարի կտորներ և փայտէ մահակ։ Վայրենութեան այս աստիճանում մարդիկ ապրում էին խումբերով կամ, ինչպէս ընդունուած է ասել, նախնադարեան հօտերով, հորդաններով։ Իրարհետ խօսում էին ոչ թէ լեզուով, այլ գլխաւորապէս ձեռքի շարժումնե-

բով։ Այս շրջանը, այսպէս ասած, մարդկային ցեղի մանկութեան շրջանն է։ Անցնում են հարիւր հազարաւոր տարիներ, և պալեոլիթի վերջին շրջանում (վերին պալեոլիթ) մարդն արդէն սովորում է կրտկ ստանալը, որը մեծ յեղաշրջում է առաջ բերում նրա կեանքում։ Կրտկի գործածութիւնը հնարաւորութիւն է տալիս սնունդի նոր միջացներ ձեռք բերել և բազմազանութիւն մտցնել նրա մէջ։ Սրանով մարդիկ տեկլի էին անկախութիւն ձեռք բերում կլիմայի ու տեղի նկատմամբ և կարող էին ապրել տեկլի լայն տարածութիւնների վրայ։

Հետզետէ մարդիկ ստեղծում են գործիքների զանուզան տեսակներ։ Հանդէս են գալիս քարէ մուրճը, քարէ կացինը, որպէս որսի գործիք, քարէ քերիչը՝ որսը մորթեզերծ անելու համար, և այլն։ Գործիքների այս բարդացման և աշխատանքի նոր տեսակների երեւան գորու հետեւանքու աշխատանքի բաժանում է առաջանում կանանց և տղամարդկանց միջեւ, տղամարդիկ արդէն խումբով գնում են խոշոր կենդանիների որսի, իսկ կանոյք մնում են արմտիք հաւաքելու և երախաններին խնամելու թափառական կեանքին աստիճանաւարար փոխարինում են տեւական բնակատեղիները, գլխաւորապէս քարայրները։ Արենակցօրէն իրար հետ կապուած մարդկանց խումբի կենտրոնական դէմքն այս շրջանում հետզետէ դառնում է մայրը։ Գլխաւորապէս կնոջ վրայ է ընկնում կերակուր գտնելու հոգսն ու պարտականութիւնը։ Ձեւաւորուող տոհմի արենակցութիւնը որոշում է նրա գծով։

Վերին պալեոլիթում հանդէս են գալիս յօդաբաժան լեզուն, հաւատալիքի պատկերացումը և կերպարուեստի սալմերը։

Գլխականները պալեոլիթի շրջանի տեսլութիւնը հասցնում են մինչեւ կէս միլիոն տարի։

Պալեոլիթեան մարդու բնուկատեղիներ յայտաբերուել են նաև Անդրկողկասի մի շարք վայրերում։ Արխազիայում, Թութայիսի շրջանում և այլն։

Հայաստանի սահմաններում պատահականօրէն գտնուել են հին քարեցարեան մի քանի հետքեր, որոնք, Հայաստանի հարեւան Վրաստանում գտնուած իրերի հետ միասին, հիմք են տոլիս ենթադրելու, որ Հայկական քարձրավանդակում նոյնպէս ապրել է վերին պալեոլիթի շրջանի մարդը։

Ներկրութեան այս երկրորդ շրջանում զգալի առաջդիմութիւնը ենք տեսնում նախնադարեան մարդու կենցաղում։ Պալեոլիթի կոպիտ ու անհամեմատ նախնական գործիքներին



Պալեոլիթի գործիքներ՝ զանուած Արգնիի մօտ (Հայաստանի Պետական Պատմական թանգարան):

սկսում են փոխարինել կայծքարից, օբսիդիանից և ոսկրից պատրաստուղ, աւելի կտարելագործուած՝ գեղեցիկ ու նուրբ յշկուած, բազմատեսակ գործիքներ ու զենքեր։ Քարէ կացիններն արդէն յարմարեցում են փայտէ կամ ոսկրէ կոթին։ Հազարամեակների ընթացքում իր գոյութեան համար մզած կոռուփ փորձով մարդը հնարում է նաեւ նեան ու տէգը, օբսիդիանի կամ կայծքարի մլաքով՝ հեռուից հարուածելու համար։ Բաւական սուր քարէ կացինի միջոցով հնարաւոր է լինում նոյնիսկ հաստ ծառեր կտրել և փորելով՝ տաշելով՝ նոււակներ պատրաստել։ Արդէն համեմատաբար զարգացոծ որսորդութեան հետ միտսին, կնոջ ջանքերով հանդէս է գալիս մարկեղային (Ճեռքի բրիչով) երկրագործութիւնը՝ ցանւում է ցորեն, գարի և այլ հացահատիկներ։ Վայրի կենդանիներից առաջին անգամ ընտանեցւում են չունը, այծն ու ոչխարը, խոզը, տպակովը և այլն, ու հիմք է դրւում անասնապահութեանը։ Հետզեւաէ լուծւում է կենսամթերքներով ապահովուելու հարցը, փոխում են ապրուատի և կենակցութեան ձեւերը. կտուցելում են մշտական բնակաւաներ, հիմնադրւում են փոքրիկ գիւղեր։ Հանդէս է գալիս նոյնիսկ միջտոհմային, հաւաքական փոխանակութիւն՝ իր ամենաապալ գ ձեւով։ Սյո շրջանում էլ սկսում է զարգանալ կտակործութիւնը՝ կենցաղային գանագուն տեսակի, նոյնիսկ նախշերով, ամաններ պատրաստելը։ Կաւագործութիւնը եւս նախամարդու կարեւորագոյն նուածումներից մէկն էր։

Նեռլիթի շրջանում արդէն առաջ է գալիս մայրիշխանական կամ մատրիարխական-տօնմային հասարակութեան լիտկատար ձեւակերպումը։

Կինը՝ մայրը հանդիսանում է տոհմի կենտրոնական դէմքը։ Նո ոչ միայն խնամում է երախաններին, այլև հսկում է օջախի կրակին, հաւաքում արմատիքներ, պտուղներ, ցանում և մթերում է հացահատիկների պաշար, հսկում ընտանի կենդանիներին։ Որսորդութիւնը կտպուած էր պատահական յաջողութեան հետ, և աղամարդիկ մեծ մասամբ ապրում էին կնոջ վաստակի հաշուին։ Արենակցութիւնը որոշուելով կնոջ գծով, տոհմի սովորոյթի համոձայն, տղջիկները մնում էին մայրական տոհմում, իսկ տղաները կտպում էին օտար տոհմի աղջիկների հետ և մանում նրանց տոհմի մէջ։ Սակայն հաստատուն նստակեաց կեանքի անցնելու և արօրային երկրագործութեան ու մանաւանդ անաւանպահութեան զարգացման հետեւանքով, նեռլիթի վերջում արդէն, մայրիշխանութիւնն առտիճանաբար սկսում է վերանալ և իր տեղը զիջել հայրիշխանական տոհմատիրութեանը։

Պալեռլիթի վերջին շրջանի նախնական պարզ հաւատալիքներն այս-տեղ զարգանում և վեր են ածւում կրօնական որոշ հասկացողութիւնների՝ մարդկային «հոգիների» պաշտամունքի և այլ ոգիների հաւատի։ Մեռներին այրում կամ, աւելի չուտ, սկսում են թաղել բազմազան ձեւի գամբարաններում։ տոհմն ունենում է իր յատուկ գերեզմանատունը։ Պալեռլիթի և նեռլիթի շրջանում գեռեւս չկար հասարակութեան շերտաւորում, մասնաւոր սեփականութիւն, ուստի և շահագործում։ Տիրում էին

Արարատեան դաշտում (Արմառիր, Վաղարշապատ, Կոտայք և Արշակունյաց գանձագան ժամանակներում յայտաբերուել են քարից և օսմանից շինուած նեղիթեան գործիքներ — զէնքեր, գանակներ, կացիններ, մուրճեր, սանդեր, աղօրիքներ, քարէ սղոցներ, ոսկրէ մախաթներ, հերուններ և այլն: Նեղիթեան դարի տեւելի հարուստ իրեր են ստացուել Կոտայքի Էջմիածինի, Սեւանայ լճի տփերի և Արագածի փէշերի պեղութներից: Այդ իրերի մեծ մասը կարելի է տեսնել Հայաստանի Պետական Պատմական թանգարանում: Հայտաստ է նաև նեղիթեան կերամիկան: Զեռագործ ամանների հետ հանդիպում են նաև բրուտի դրդի վրայ պատրաստած ամաններ՝ երկրաչափական զարդաքանդակներով: Գանուել է նաև մի քանի թեշիի գլուխ՝ կաւից և ոսկրից:



Գունազարդ կաւէ ամաններ՝ կարմիր վանքի նեղիթեան բնակատեղից (Հայաստանի Պետ. Պատմ. թանգարան):

Են գալիս նաև ընտանի անասունների՝ ոչխարի, այծի, կովի, ինչպէս նաև շան ոսկորներ և ցորենի ու գարու մնացորդներ:

Նեղիթով վերջանում է մարդկոյին կեանքում քարէ

Պրոնզէ դար գարը և սկսում է մետաղների գարաշրջանը, որից առաջինը պրոնզէ զարն է: Գիտութեան մէջ, կուլտուրայի առաջին օջախներում, պրոնզէ դարի սկիզբը համարւում է չորրորդից — հինգերորդ հազարամետակը (մեր թ. ա.) և շարունակում է մինչեւ երկրորդ հազարամետակը:

Նախամարդուն ծանօթ առաջին մետաղներից էին ոսկին և պղինձը: Բնածին ոսկին, բացի այն, որ շատ սակաւ էր, իր փիսրունութեան պատճառով չէր կարող պիտանի լինել գործիքների համար: Գտնելով պղինձի ձուլման գալտնիքը, նախնադարեան մարդն սկսեց մետաղէ առաջին գործիքները պատրաստել պղնձից Սակայն պղինձն իր գիւրամաշ և փափուկ լինելու պատճառով չկարողացաւ լրիւ փոխարինել քարին, և նրա օգտագործման ժամանակը երկար չտեսեց:

Հայաստանում յայտաբերուել են նաև նեղիթեան մուրդու նոյնիսկ ամրացուած բնակովայրեր և բաւական թւով գամբարաններ:

Հայաստանում այդ ժամանակի թաղման ձեւերի մէջ հանդիպում են թաղում ուղղակի հողի մէջ, դիակիդում և այլ ափի թաղումներ:

Այդ գամբարաններից, քարէ գործիքների և կաւէ անօթների հետ գուրան գալիս նաև ընտանի անասունների՝ ոչխարի, այծի, կովի, ինչպէս նաև շան ոսկորներ:



Ուռուցիկ զարդանկարներով կաւէ ամաններ՝ Շենգավթի եւ այլ նեղիթեան բնակատեղիներից

(Հայաստանի Պետ. Պատմ. թանգարան):

Հետագայում մարդը կարողացաւ պղինձը խառնել անսագ մետաղի հետ (3—10 % կամ քիչ տևելի) և ստանալ մի նոր, համեմատաբար կարծր նիւթ — անազապղիններ, որ կոչում է նաեւ պրոնց: Այս մետաղից մարդը պատրաստում է բազմատեսակ և բարձրորակ գործիքներ, զէնքեր ու զարդեր: Մետաղէ այդ գործիքներն ու զէնքերը ոչ միայն մարդուն աւելի անկախ դարձրին բնութեան ուժերից, այլեւ մեծ փոփոխութիւններ առաջացրին մարդկային ներքին յարաբերութիւնների մէջ, արտադրական յարաբերութիւնների մէջ:

Պրոնզէ դարի սկզբնական շրջանից մայրիշխանական տոհմը վերջնականապէս տեղի է տալիս հայրիշխանական տոհմին Նոր, աւելի ուժեղ զարգացում ապրող անասնապահութիւնն ու երկրագործութիւնը բաժանւում են իրարից, և մարդկային հաստրակութեան մէջ՝ տեղի է ունենում ռաշխատանքի առաջին խոչոր հասարակական բաժանումը»:

Պրոնզէ դարում ուժեղ կերպով զարգանում են աւելի հին արհեստները, ինչպէս օրինակ՝ կաւագործութիւնը՝ զերտպանցորչն ըրուափի զրգի (անիւի) վրայ — մանածագործութիւնը, և առաջ են գալիս մետաղի արտադրութեան հետ կապուած նոր արհեստներ՝ դարբնութիւն, զինագործութիւն և այլն: Զարգանում է նաեւ փայտի ու կաշիի մշակման գործը: Մասնագիտացած արհեստը բաժնւում է երկրագործութիւնից և առաջանում է աշխատանքի երկրորդ խոչոր բաժանումը:

Պրոնզէ դարում առաջ է գալիս նաեւ անիւային փոխադրական միջոցը, եզների ուժով շարժուող սայրի կողքին (որից գտնուել է Նոր-Բայազիտում) հանդէս է գոլիս ձի լծած երկանիւ ռազմակառքը: Զարգանում է փոխանակութիւնը: Շատ հեռաւոր երկրներ իրար հետ կապուած են լոյն առեւտրական յարաբերութիւններով: Պրոնզէ դարում (շատ վայրերում նրա վերջին շրջանում) սկսում է քայլքայուել նախնադարեան համայնական հասարակակարգը և սկիզբ է դրւում դասակարգային հասարակութեան:


Սովետական ու եւրոպական համարեայ բոլոր գիտնականները հին աշխարհում մետաղների մշակման առաջին հայրենիքը համարում են Առաջաւեր Ասիմն, մանաւանդ Փոքր Ասիմն, Հայտատանն ու Անդրկովկասը:

Մեզնից մօտ 4000 տարի առաջ Հայտատանում տոհմային կեանքով ապրող զանազան ցեղեր իրենց առօրեայ կեանքում սկսում են գործադրել պրոնզէ գործիքներ ու զէնքեր:

Պատմական յուշարձաններով հարուստ Հայտատանում կատարուած սակաւաթիւ պեղումներից պարզուել է, որ մեր երկրում բնակուած ցեղերը մի ժամանակ գործ են ածել նոյնիսկ մաքուր պղինձ, երբ դեռ ծանօթ չեն եղել պրոնզ ստանալու արուեստին: Այդ փաստը, ինչպէս նաեւ հարուստ պղնձանանքերը վկայում են պրոնզէ դարի հնութիւնը և զարգացումը Հայտատանում:

Արաքսի ափին, Հին-Նախիջևանի մօտ գտնուող Կարմիր վանքի

շուրջը կատարուած պեղումների ընթացքում բացուել են հնագոյն տիպի դամբարաններ՝ կարմիր գունազարդ կիրամիկայով, որոնց մէջ բոլոր զէնքերը՝ դաշոյն, դանակ, նիզակ և այլն, զուտ պղնձից են և իրենց պարզ ձեւով շատ նման են նեոլիթեան զէնքերին։ Զուտ պղնձէ զէնքեր և իրեր յայտաբերուել են նաեւ Լոռու (Ս.խթալա) պեղումներից և Լենինականում։ Ինչ վերաբերում է պրոնզէ իրերին, ասպա Հայաստանում չկայ մի շրջան, որտեղ մեծ քանակութեամբ չգտնուեն զրանցից։ Առաջմ, մանաւանդ շատ յայտնի են Լոռու, Կիրովակոնի, Դիլիջանի, Նոր-Բայազիտի և Զանգեզուրի երեք շրջանները։ Ինչպէս նաեւ Շիրակի ու Արարատեան դաշտերը։ Հայաստանում գտնուած բազմաթիւ և բազմատեսակ պրոնզէ իրերի մէջ կան կացիններ, սրեր, դանակներ, նիզակի ծայրեր, գուրզեր, մանգաղներ, եղաններ, սանձեր, տնային մանր գործիքներ՝ ասեղ, հերուն և այլն։ Հարուստ են զարդարանքները, որոնց մէջ յայտնի են Հայաստանի պրոնզէ լայն և զարդարած գօտինները, վարակալները անթիւ ապարանջանները, մանեակները, մատանիները, կոճակները, պանդոկները, մետալեռնները, չղթանները և այլն։ Հայաստանի պրոնզեզրեան կուլտուրայում զարդերի մէջ կան գեղեցիկ մշակուած նաեւ ոսկուց, արծաթից, սուրմայից պատրաստուած զարդարանքներ և մոնր իրեր։ Ուրարտացիներից մնացել են աւելի շատ բարձրորակ պրոնզէ իրեր՝ վահաններ, արձանիկներ, ամաններ, զէնքեր և այլն։ Ամենառաջգրաւ հնագիտական իրերից պէտք է համարել այն կաղապարները, որոնք գտնուել են վերջին տարինների ընթացքում։ Լենինականում և Երևանի շրջակայքում (Կարմիր-բլուր, Մուխանաթ-թափա) գըտնուել են ճիշդ այն պրոնզէ կացինների կտղապարներից, որոնց տեսակը շատ տարածուած է եղել Հայկական բարձրավանդակում և հարեւան երկրներում։ Գտնուել է նաեւ զարդարանքներ ձուլելու կաղապարը Լենինականի մոի կոմբինատի վայրում գտնուած կացնի կաղապարը գուրս է եկել հընտգրեան ձուլտրան - արհեստանոցի մօտ։



Պրոնզէ կացիններ եւ մանգաղներ։

Հայաստանի հնագոյն դամբարաններից
(Հայաստանի Պետ. Պատմ. Թանգարան):

բարական և հաթթական պետութիւններում պրոնզէ կուլտուրայի զարդացումը հստած է եղել բարձր տատիճանի։ Պրոնզէ առեւտուրը Եզիփառսի, Միջագետքի և այլ երկրների հետ շատ զարդացած էր և նոյնիսկ այդ տուեւարի մենաշնորհը գտնուել է պետութեան թագուորների ձեռքին։ Մետաղի կուլտուրայով և առեւտրով շատ յայտնի է եղել պատմա-

Մեղնից չորս հաղար և աւելի տարի առաջ Արեւմտեան Հայաստանի սահմաններում կազմակերպուած սու-

բարական և հաթթական պետութիւններում պրոնզէ կուլտուրայի զարդացումը հստած է եղել բարձր տատիճանի։ Պրոնզէ առեւտուրը Եզիփառսի, Միջագետքի և այլ երկրների հետ շատ զարդացած էր և նոյնիսկ այդ տուեւարի մենաշնորհը գտնուել է պետութեան թագուորների ձեռքին։ Մետաղի կուլտուրայով և առեւտրով շատ յայտնի է եղել պատմա-

կամ Հայաստանի Աղձնիկը, որն այն ժամանակ էլ կոչուել է Աւէի երկիր կամ Ալղինինի:


Նախնադարեան հասարակութեան անցած երրորդ և
Երկարէ դար վերջին խոշոր շրջանը սկսում է երկաթ-մետաղի
գործութիւնից: Գիտնականներն այդ շրջանը, նոյն-
պէս պայմանական ձեւով, անուանում են նոր մետաղի կամ երկաթէ դար,
որը յոշորգում է պրոնզէ դարին: Հայկական բարձրավանդակում ապրած
ցեղերն անցել են այդ շրջանները և նոյնիսկ հանդիսացել են մետաղների
մշակման առաջին պիտուերները:

Երկաթն էլ, պղնձի նման, չատ վաղուց ծանօթ է եղել մարդուն և
սառը վիճակում մշակուել է զարգերի համար՝ դեռեւս երրորդ հազար-
տարեակում (մեր թ. ա.), ինչպէս այդ ցոյց են առել եղիպատոսի պեղում-
ները: Սակայն իսկական երկաթէ դարն սկսում է Փոքր Ասիայում, Մի-
ջագետքում, Հայկական բարձրավան-
դակում և Հարաւային Կովկասում
(Աղբրէջան, Վրաստան) երկրորդ հա-
զարամետակում (մեր թ. ա.), կամ մեզ-
նից մօտաւորապէս 3500 և աւելի տու-
րի առաջ:

Հետաքրքրական է, որ պատմա-
կան Հայաստանի հարաւարեւմտեան
մասում ուժեղացած Միտանիի թագա-
ւոր Տուշրատան, ԺԴ. դարի 80ական
թուականներին (մեր թ. ա.) եղիպ-
տոսի փարաւոն Ամենիսոտեպ Գ.ին (որն
իր փեսան էր) նամակով յայտնում է,
թէ իր ուղարկած նուէրների մէջ կան
նաեւ երկաթէ դաշոյներ: Դրանից
մէկ ու կէս դար յետոյ հաթերի վեր-
ջին թագաւորներից մէկը գրում է եղիպտոսի փարաւոնին, թէ ինքը
ցաւում է, որ չի կարողացել իր բարեկամի խնդիրը կատարել, այն է՝ մա-
քուր երկաթ ուղարկել նրան:

Ուրարտացիները, որոնք Թ. դարից սկսած բուն պատմական Հայաս-
տանի հողամասում պետականօրէն կազմակերպուած, կուլտուրական և
ռազմական մի հզօր ուժ էին ներկայացնում, երկաթի արդիւնագործու-
թիւնը հասցըրին իր ժամանակին չգերազանցուած աստիճանի:

Սովետական Հայաստանի հողամասում բնակուած նախառարարական
ցեղերի թողած նիւթական կուլտուրայի մնացորդներից (բերդեր, գամ-
բարաններ և այլն) երեւում է, որ նրանք մինչեւ ուրարտացիների նուտ-
ճումը, այսինքն՝ մեզնից 2700 և աւելի տարի առաջ, ունեցել են եր-
կաթ-մետաղի մշակման կուլտուրան: Սակայն դեռեւս պրոնզէ գործիք-



Պրոնզէ դաշոյններ, նիզակնիք եւ նետիք՝
Հայաստանի նիազոյն դամբարաններից:
(Հայաստանի Գետ. Պատմ. թանգարան):

ներն ու զէնքերը կիսով չափ պահպանում էին իրենց գերը, որ նշանակում է, թէ այդ ցեղերն ապրում էին պրոնզէ գարից երկաթէ գարին անցնելու երկարատեւ շրջանը։ Հայոստանում մինչեւ այժմ պեղուած դամբարաններից չափը պատկանում են այդ կուլտուրային։

Կարծը երկաթ-մետաղի կատարած յեղաշրջումը մեծ եղաւ մարդկացին հասարակութեան կեանքում։ Երկաթէ գործիքներն ու զենքերը նոր թափ հաղորդեցին տնտեսութեան բոլոր ճիւղերի աւելի ուժեղ զարգացմանը և յառելեալ արդիինքների կուտակման գործին։ Եզների ուժով



Երկաթէ Նիզակներ Հայաստանի
հնագոյն դամբարաններից
(Հայաստանի Գետ. Պատմ. թանգարան):

Հայաստանում պեղած գոմբարան-ներից գուրս են եկել երկաթէ դանակներ, մանգաղներ, դաշոյններ (երբեմն պրոնզէ պատեանով), նիզակներ, որոնց մէջ հանդիպում ենք երկաթէ լաւ մշակուած սուսերթթեր, որոնք ունեն 60—70 սոնթիմէթր և աւելի երկարութիւն, ուստի համարեւում են ձիաւորի մարտական գէնք (գտնուած են Լուսում, Նոր-Բայազիտում և այլ վայրերում), ապա շատ քիչ մուրճեր և բազմաթիւ երկրորդական այլ իրեր ու գէնքեր:

**Նախնադարեան
համայնքական
հասարակութեան
բարեկառութեան**

Նախնագարեան համոյնական հաստիքութեան քայլացումն սկսում է պրոնզէ դարից երկաթէ դարին անցնելու ժամանակաշրջանում, որոշ վայրերում է՛լ տւելի ուշ, իսկ Առաջաւոր Ասիայի մի շարք երկրներում (Միջագեաք, Սիրիա, Արեւմտեան Հայաստան, Իրանական սարահարթ), ինչպէս նաև Եգիպտոսում այդ կաղմուտածքի քայլքայումն աւարտուեց նոյնիսկ պրոնզէ դարի առաջին շրջանում։ Բացի Եւրոպայից՝ միւս չորս մայր ցամաքներում այժմ էլ կան բազմաթիւ ցեղեր, որոնք դեռևս արտագրական յարաբերութիւնների այս տիպն են ապրում։

Անասնականութեան, մետաղի մշակման և սրանց հիման վրայ երկ-

բագործութեան աւելի զարգացումը, ինչպէս նաև արհեստների ու փոխանակութեան զարգացումը մեծ փոփօխութիւններ առաջ բերեց նախնադարքեան հասարակութեան արտադրական յարաբերութիւնների մէջ։ Արդէն տեղի էր ունեցել աշխատանքի առաջին խոշոր բաժանումը, այսինքն՝ անտանապահութեան բաժանումը երկրագործութիւնից։ Մետաղեայ կատարելագործուած գործիքներն ու զէնքերը հնարաւորութիւն էին ըստեղծում անհատական գործունէութեան, անհատական արտադրութեան համար, որը հնարաւոր չէր քարէ գործիքներով։ Անհատական գործունէութեամբ ստացուած արդիւնքն էլ նպաստում էր անհատական իւրացման՝ սպառման ձեւի առաջացմանը։ Արտադրողական ուժերի զարգացման այս աստիճանին այլեւս չէին կարող համապատասխանել նախկին արտադրական յարաբերութիւնները։

Հայրիշխանական տոհմի ներսում, նահապետական բազմանդամ զերդաստանի տրոնումով առաջացած աւելի փոքր ընտանիքների սեփական տունն իր գիւղական բակով գտանում էր այն բերդը, որտեղից յարձակում էր պատրաստում համայնական հողատիրութեան վրայ։ Հետեւաբար, գիւղական համայնքի ուժեղ ընտանիքը, ուժեղ ու փորձուած աւագով, ե՛ւ գաչում, ե՛ւ գիւղում զգալի գերակշռութիւն էր ստանում թոյլ ընտանիքների հանդէպ՝ թէ՛ անտեսական և թէ՛ զեկավարման ասպարէցում։ Անտառնների տոհմային-համայնական սեփականութիւնն աւելի վաղ ու աւելի արագ է փոխանցում մասնաւոր սեփականութեան և վերածում մինչեւ այդ չտեսնուած հարստութեան տղբիւրի։

Քայլայուղ տոհմի մէջ, միաժամանակ սկսուած արհեստների մասնագիտացմամբ, հանդէս են գալիս արհեստով զբաղուղղ յստուկ ընտանիքներ Արհեստուորներն իրենց արտադրանքը փոխանակում էին թէ՛ գիւղական համայնքի ներսում և թէ՛ դուրսը՝ իրենց անհրաժեշտ արտադրութիւնների հետ։ Այսաեղից էլ սկսում է աշխատանքի աերկրորդ խոշոր հասարակական բաժանումը», այսինքն արհեստագործութեան բաժանումը երկրագործութիւնից։

Նախկին միջազնմային պատահական և պարզ փոխանակութիւնը, մասնաւնդ պրոնզէ դարում, վեր է ածւում սիսդեմագիկ և համատարած երեւոյթի, հետզհետէ ստանալով առեւտրի բնոյթ։ Այս ծաւալուն փոխանակութեան ընթացքում ստեղծուող դժուարութիւններն առաջ են քաշում բոլորին պիտանի և յամար ապրանքներից մէկը, որը կատարում է փողի գեր ։ Զանազան վայրերում իրեւ այդպիսի ապրանք են հանդիսացել եղը, պրոնզէ ապարանջանները (որոնցից շատ է գտնուել նաեւ Հայաստանում), աղը և այլն։ Այդ գերը հետզհետէ անցնում է ազնիւ մետաղներին։ Առեւտուրն աւելի է ծաւալում, ընդգրկելով հեռաւոր երկրներ ։ «Իսկ երբ համայնքի մէջ երեւան եկաւ աշխատանքի բաժանումը, և որա անդամներից ամէն մէկն սկսեց անհատաբար պարապել որեւէ արդիւնքի արտադրութեամբ և այդ ծախել շուկայում, այն ժամանակ

ապրանք արտադրողների այդ նիւթական առանձնացման արտայայտութիւնը եղաւ մասնաւոր սեփականութեան ինստիտուտը»:

Եթէ առաջ կուտակուած գոյքը — հարսաւութիւնը պատկանում էր տոհմին, ապա այժմ այն, որպէս սեփականութիւն, ժառանգաբարար անցնում է հօրից որդիներին: Ըստանիքն սկսում է հակադրուել տոհմին:

Արտադրութեան միջոցների մասնաւոր սեփականութեան առաջացման հետեւանքով ստեղծւում են գոյքային անհաւասարութեան և մարդու կողմից մարդուն շահագործելու նոխտպայմաններ: Հասարակութիւնը բաժանեւում է շահագործող և շահագործուող դասակարգերի: Առաջանում է պետութիւնը:

Այսպիսով, նոխնագորեան տոհմային համայնական կարգերն աստիճանաբար տեղի են տալիս իրենց ծոցում ծնունդ առած և զարգացող նոր, արդէն դասակարգային հասարակական կարգերին:

Նախնագարեան համայնական հասարակակարգը անցել են աշխարհի բոլոր ժողովուրդները, բայց ո՞չ միաժամանակ և ո՞չ լիակատար համաշխափութեամբ:

Իր տեւականութեամբ մարդկութեան կեանքի այս մեծագոյն շրջանը նախորդել է դասակարգային հասարակութիւններին:

Պատմութեանը յայտնի են արտադրական յարաբերութիւնների հինգ հիմնական տիպեր՝ նոխնագարեան-համայնական, սարկասիրական, ֆէոդալական, կապիտալիստական, սօցիալիստական:

Նախնագարեան-համայնական կարգերում արտադրական յարաբերութիւնների հիմք է հանդիսանում արտադրութեան միջոցների հանրային սեփականութիւնը: Դա հիմնականում համապատասխանում է արտադրողական ուժերի բնոյթին այդ ժամանակաշրջանում: Բարէ գործիքները և յետոյ երեւան եկած աղեղն ու նետերը բացառում էին բնութեան ուժերի և գիշատիչ կենդանիների դէմ միայնակ պայքարելու հնարաւորութիւնը: Անտառում պտուղներ հաւաքելու, ջրում ձուկ որսալու, որեւէ բնակարան կառուցելու համար մարդիկ ստիպուած են միասին աշխատել, եթէ նրանք չեն ուղում սովամանութեան, գիշատիչ կենդանիների կամ հարեւան հասարակութիւնների զոն դաւնալ: Ընդհանուր աշխատանքը տանում է դէպի արտադրութեան միջոցների, հաւասարապէս և արտադրութեան արդիւնքների ընդհանուր սեփականութիւն: Այստեղ արտադրութեան միջոցների մասնաւոր սեփականութեան մասին դեռեւ գտղափար չունեն: Եթէ չաշուենք արտադրութեան մի քանի գործիքների անձնական սեփականութիւնը, — գործիքներ, որոնք դրա հետ մէկտեղ հանդիսանում են գիշատիչ գաղաններից պաշտպանուելու գործիքներ: Այստեղ չկա՞յ շահագործում, չկան դասակարգեր»:

A 83884
ii

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱԳՈՅՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՆ ՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ


1.— ՆԱԽԱՊՈՒՐԱԲՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Սեպտեմբերի արձանագրութիւններն ու վերջին տարիները կատարուած հնագիտական ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ մեր թուականութիւնից գեռերեք հաղարսմեակ տառչ Հայկական բարձրավանդակում հանդէս են եկել որոշ պետական կազմ ունեցող մի քանի ժողովուրդներ:

Հնագոյն այդ ժողովուրդներին են պատկանում սուբարիները երրորդ հազարամեակից սկսած նրանք տարածում են Հիւսխային Միջազգեաթում և Հայաստանի հարաւային մասերում: Սուբարիներն ունեցել են զարգացած կուլտուրա: Այդ ժողովրդի կուլտուրան նման է եղել Հարաւային Միջազգեաթում այդ նոյն ժամանակ ապրող սումբերական ժողովրդի կուլտուրային, որը հետագայում դարձաւ բարելական կուլտուրայի հիմքը: Սեպտեմբերի արձանագրութիւններից երեւում է, որ սուբարիները երրորդ հազարամեակի վերջերին կազմում էին բոււական ուժեղ ցեղային միութիւն: Նրանք յարատեւ պատերազմների մէջ են եղել ակադացիների և հեթիթների հետ:

Սուբարիների երկրի աշխարհագրական անունը հետագայում պահպանուել է ուրարտական (Փ. — Է. գ. դ.) Ծուպանի, հին յունական Սոֆենա և հին հայկական Ծոփի անուններում:

Միասնին մասնակիւ մի դարի (մեր թ. ա.) սկզբներին Հիւսխային Միջազգեաթում և Հայաստանի հարաւաբեւմներում կազմաւորում է մի պետութիւն, որը յայտնի է Միտանի անունով: Այս պետութիւնն իրեն է հապատակեցնում սուբարիներին և իր իշխանութիւնը տարածում դէպի արեւմուտք, ընդգրկելով Հիւսխային Ասորիքը (Սիրիան): Միտանին հզօր պետութիւն էր և, գտնուելով այն ժամանակուայ առեւտրական ճանապարհների հանգոյցի վրայ ձգտում էր դէպի Միջերկրական ծովը և շարունակ պատերազմների մէջ էր հարեւան պետութիւնների՝ Բարելոնի, Ասորեստանի և Փոքր Ասիայի հեթիթական պետութիւնների հետ Այդ անվերջ պատերազմների ընթացքում Միտանին հետզհետէ թուլանում է: Ժ. դարում (մեր թ. ա.) Ասորեստանն ուժեղանալով, մեծ հարուած է հասցնում Միտանիի պետութեանը և այնուհետեւ վերջինս մօտ երկու գոր իր գոյութիւնը պահպանում է որպէս Ասորեստանի վասարական իշխանութիւն, ներփակուելով աշխարհագրական նեղ սահմաններում:



Միտանին ժառանգում է սուբարիների զարգացած կույտուրան։ Այդ պետութիւնը միատարր է թնիկական միաւոր չէր, նրա մէջ մտնում էին տարբեր ժողովուրդներ։ Միտանիի ժողովուրդների բեկորները հետագայում պահպանուեցին մատին անունով ժողովրդի մէջ։

Միտանիի անկումից յետոյ Միջագետքում հանդէս է Նախրիի գալիս Ասորեստանը։ Նա պետականօրէն կազմուորուեց ժողովարդներ Միջագետքի միջին մասում և նուաճողական արշաւանքներ սկսեց դէպի հիւսիս։ Հիւսիսից Ասորեստանին սահմանների վրայ, Անա այդ ժողովուրդները, ասորեստանեան սեպագիր արձանագրութիւնների մէջ, ԺԴ. դարից (մեր թ. ա.) սկսած՝ անուանւում են Նախրիի ժողովուրդներ։

Ամենահին արձանագրութիւնը Սալմանասար Ա. թագաւորինն է (ԺԴ. դար մեր թ. ա.): Այդ արձանագրութեան մէջ Սալմանասար Ա. ը պատմում է Նախրիի երկրները նուաճելու մասին։ Աւելի հետաքրքրական են Թիգլաթ-Պալասար Ա.ի (ԺԲ. դար մեր թ. ա.) արձանագրութիւնները, որոնցից երեւում է, որ այդ թագաւորը երեք անգամ արշաւել է Նախրիի վրայ։ Նախրիցիները յաճախ յամուղ դիմադրութիւն են ցոյց տուել։

Թիգլաթ-Պալասարի արձանագրութիւնների մէջ Նախրիի երկրների նուաճման մասին ասուած է, «Նախրիի երկրների 23 թագաւորները ժողովեցին իրենց ռազմակառքերն ու զօրքերը և առաջացան պատերազմելու։ Հզօր զէնքիս սաստկութեամբ նրանց ճնշեցին, նրանց բազմոթիւ զօրքերի մէջ ամպրոպի նման աւերում կատարեցին։ Նաեւ Նախրիի երկրների 60 թագաւորներին, որոնք օգնութեան էին եկել նրանց, իմ նիզակով մինչեւ վերին ծովը (Վանայ լիճը) հետապնդեցին»։

Նախրին միտանական պետութիւն չէր, ոչ էլ միտարր ժողովուրդ։ Նախրիի երկրներում բնակւում էին բազմոթիւ ցեղային ու տոհմական միութիւններ։ Արտաքին նուաճողների կողմից սպառնացող վտանգի դէպքում նրանք միանում և դաշինք էին կապում։ Թիգլաթ-Պալասարի վերոյիշեալ արձանագրութեան համաձայն, նրա դէմ դաշինք էին կազմել Նախրիի մի շարք ցեղային միութիւններն

Նախրիի ժողովուրդների տնաեսութեան գլխաւոր հիմքը կազմում էին երկրագործութիւնն ու անսամապահութիւնը։ Հսոսող ջրերով հարուստ և արհեստական ջրանցքներով ոռոգուող հովիտները նպաստում էին երկրագործութեան զարգացմանը։ Լեռնալանջերն ու սարահարթները, որոնք ամառը ծածկուած էին փարթամ կանաչով, ճոխ արօտավայրեր էին անասնապահութեան համար։ Նախրիի երկրներում ապրող ժողովուրդներն զբաղւում էին նաեւ մետաղագործութեամբ ու հանքափորութեամբ։ Երկրագործութեան և անասնապահութեան հետ միասին գոյութիւն ունէր նաեւ արհեստագործութիւն։ Ասորեստանի թագաւորներն իրենց արշա-

ւանքների ժամանակ Նոհերի երկրներում աւար էին վերցնում մեծ քանակութեամբ պրոնզէ ու պղնձէ իրեր, ինչպէս և բազմոթիւ անտառներ ու երկրագործական մթերքներ:


2.- ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Աւրարտական պետարքան կազմակրութը Հայկական բարձրագանդակում Ժ. — Թ. գարերում (մեր թ. ա.) հանդէս են գալիս ուշարացիները: Մրանց պատմութիւնը մեզ յայտնի գարձաւ սոսրեսանեան եւ, մանաւանդ, հենց այդ ժողովրդի սեպագիր արձանագրութիւններից: Մինչեւ այժմ յայտաբերուած է աւելի քան 200 ուրարտական սեպագիր արձանագրութիւն: Ուրարտացիների բնակութեան կենտրոնական վայրը տարածւում էր Վանայ լճի արեւելեան կողմում և կոչում էր Բիայնա, իսկ մայրաքաղաքը՝ Տոււպա: Բիայնա անունը Վան բառի ուրարտական արտասանութիւնն է: Տոււպան հին հայ պատմութեան մէջ պահպանուել է Տոսպ անունով: Պատմագիտութեան մէջ ընդունուած է այդ ժողովրդի բնակավայրն անուանել Ուրարտու:

Ուրարտական մասին առաջին անգամ յիշատակում է Ասորեստանի Ասսուր-Նասիրաբալ թագաւորը (885—860 թ. թ.), որից յետոյ ասորեստանեան արձանագրութիւններում յաճախ կրկնուում է այդ անունը: Ասորեստանեան արձանագրութիւններից երեւում է, որ ուրարտական պետութիւնը կազմակերպուել է Թ. գարի սկզբներին (մեր թ. ա.):

Ուրարտական ժողովուրդը Նոհերի բազմաթիւ ժողովուրդներից մէկն էր: Դաստիարագային արօնումը նրա մէջ հասնում էր աւելի բարձր տատիճանի: տնտեսապէս ու քաղաքականապէս ուժեղանալով, նա սկսում է գերահշող գեր խաղալ ու իր ազգեցութիւնը տարածել Նոհերի միւս ժողովուրդների վրայ: Ուրարտացիները, յենուելով իրենց ուժի վրայ, հպատակեցնուում են մի շարք նահերեան մանր իշխանութիւններ և կողմում են իրենց պետութիւնը՝ Արամէի գլխաւորութեամբ: Թ.—Ը. գարերում (մեր թ. ա.) այդ պետութիւնը նշանաւոր գեր է խաղում Հայկական բարձրագանդուկի պատմութեան մէջ:

Ակսոծ 850 թ. (մեր թ. ա.)՝ մօտ 300 տարի կատաղի պայքար տեղի ունէր ուրարտական ու տառբերանեան պետութիւնների միջեւ: տեղի ունեցան անզերջ պատերազմներ, աւերումներ, աւարառումներ ու



Գրոնզէ վահան՝ Կարմիր-բլարի ուրարտական ամրոցից (Հայաստանի Գետ. Պատմ. թանգարան):


գերեվարումներ։ Այս պատերազմների ընթացքում փոփոխակի յաջողութիւններ էին ունենում երկու հակառակորդ կողմերը։ Աւրարտական թագաւորները ժԱ. դարի վերջից սկսած մինչեւ լ. դարի երկրորդ կէսը, մօտ 70 տարի, չափազանց նեղեցին Ասորեստանին, գրաւելով նրա միշտը հիւսիսային մարզեր։ Այդ կոհեներում նշանաւոր զեր խաղացին Մեսուա (810—778 թ. թ.), Արգիշտի Ա. (780—755 թ. թ.) և նրա որդի Սարգուր Բ. (755—730 թ. թ.) թագաւորները։

Զբաւակոմանալով վանայ լճի արեւելքում և արեւմուտքում զըստնուող հարեւան երկրների նուանումով, Մենուան, Արգիշտի Ա. և Սարգուր Բ. ուրարտական թագաւորները միշտը արշաւանքներով ընդարձակում են իրենց պետութեան սահմանները դէպի հիւսիսային կողմերը։ Անցնելով Արաքս գետը, նրանք նուանում են Արարտեան դաշտը, Շիրակն ու Սեւանայ լճի շրջակայքը, որտեղ տպրում էին բնիկ հին ցեղեր։ Այդ ցեղերից մէկն էր կրիանի շրջակայքը, որ տարածուած էր այժմեան երեւանի շրջանում ապրող բնակչութիւնը, որ տարածուած էր այժմեան քաղաքի անունը։

Ուրարտական հեծեալ եւ ռազմակառ քարմիր-բլուրում զանուած պրոնկ։

կապարճի վրայից

(Հայաստանի Պետ. Գաամ. Թանգարան):



Էր կրիանի շրջանում ապրող բնակչութիւնը, որ տարածուած էր այժմեան երեւանի շրջակայքում։ Հաւանաբար այդ անունից էլ տառաջացել է երեւան քաղաքի անունը։

Ուրարտական պետութեան սահմանները, նրա հզօրութեան շրջանում, տարածում էին հիւսիսից՝

մինչեւ Զլդըր լիճը (Վանանդի հիւսիսում), հարաւից՝ Տաւրոսի լեռները, արեւելքից՝ Ասեւանայ և Ուրմիոյ լճերը և արեւմուտքից՝ Եփրատ գետը։

Պատերազմների ընթացքում տեղի էին ունենում

անագին աւարտումներ ու գերեվարումներ։ հսկայական


հարստութիւններ էին կուտակւում ուրարտական թագաւորների ու սազմիկ

ների ձեռքում։ Արան պէտք

է տեւելացնել նաեւ պատե-

րազմական տուրքերն ու նուաճուած մողովուրդների վրայ դրուած ծանր


հարկերը։ Արարտահամ դաշտը, Շիրակը և Սեւանայ լճի մարզերն ամուր պահելու նպատակով՝ Ուրարտուի թագաւորները կառուցում են միշտը



Ուրարտացիներն անծնատուր են լինում ասորեստանցիներին, քանզակիներ՝ Բալավասի դուների վրայ (Բիթական թանգարան)։

ամրոց-քաղաքներ։ Արարատեան գաշտում կառուցւում է Արգիշտիխնիլի (հետադայում՝ Արմաւիր) քաղաքը, որը գտնում է նրանց լայնածաւալ պետութեան երկրորդ մայրաքաղաքը։

Սակայն ուրարտական պետութեան այս յաղթական նուանձումներին վերջ է տրւում, երբ Ասորեստանը թիգլաթ-Պարսասր Գ. թագաւորի



Ասորեստանցիները կողոպտում են Մոսափիի ուրարտական տաճարը. Թաղավարի դոների բանգակներից
(Թիգլաթ-Ական թանգարան):

(745—728 թ. թ.) ժամանակ վերսախն ուժեղանում է։ Հզօրացած Ասորեստանը մի շարք յաղթական պատերազմներով ուրարտացիներից ետ է նուանձում իր կորցրած մարզերը և հետագայ կտաղի յարձակումներով ու աւերտումներով չտփազանց թուլացնում նրան։

Ուրարտական հասարակութեան տնտեսութիւնը հիմնուած էր գլխաւորապէս երկրագործութեան, անասնապահութեան և արհեստագործութեան վրայ Երկրագործութեան զարգոցման ամենամեծ ապացոյցն այն ջրանցքաշինարարութիւնն էր, որ ուրարտական թագաւորները կատարում էին ո՛չ միայն կենտրոնում, այլև նուանձուած երկրներում։ Շիրակում, Արարատեան գաշտում՝ Արմաւիրի, Վաղարշապատի ու Երեւանի մօտ նրանք ջրանցքներ էին կառուցում, այդիներ անկում և խոպան հողերը մշակելի զարձնում։ Ուրարտացիների զբաղմունքի մէջ կարեւոր տեղ էր բռնում նաեւ անտանապահութիւնը։

Ուրարտական հասարակութեան մէջ արհեստագործութիւնը հասեր էր զարգոցման համեմատաբար բարձր աստիճանի։ Արհեստի բազմապիսի ճիւղերի գոյութիւնը վկայում է այն մասին, թէ ի՞նչպիսի չափերի էր հասել աշխատանքի հասարակական բաժանումը։ Արհեստների մէջ առաջնակարգ տեղ էր բռնում մետաղագործութիւնն իր զանազան ճիւղերով։ Մետաղագործութեան զարգացմանը նպաստում էր այն հանգամանքը, որ

Հայկական բարձրավանդակը հարուստ էր մետաղահանքերով՝ պղնձով ու երկաթով։ Ուրարտացիները յայտնի էին իրենց պղնձէ ու պրոնզէ իրերի արտադրութեամբ, ինչպէս նաև երկաթագործութեամբ ու զինագործութեամբ։

Այնուհետեւ զարգացած էին ոսկերչութիւնն ու արծաթագործութիւնը, որոնք, անշուշտ, ծառայում էին տիրապետող դասակարգի պերճանքին։



Պակաս նշանակութիւն չունէր կաւագործութիւնը։ մանուանդ յայտնի էր կարասների և գունաւոր կաւէ ամանների արտադրութիւնը։

Վանի շրջակայքում յայտաբերուել են կաւէ անագին կարասնինականի, Կարմիր-բըլորի և Մուխանաթթափափայի բնակատեղիներից էին գրելու համար։

(Հայաստանի Պետ. Պատմ. Թանգարան):

Արհեստաների շարքը պիտի գտնել նաև որմնագրութիւնն ու քարտաշութիւնը, որոնք զարգացել էին թագաւորների ձեռնարկած կառուցումների շնորհիւ։

Ուրարտական հասարակութիւնը Թ. դարում (մեր թ. ա.) արդէն գասակարգային կազմ ունէր, այսակեղ իշխանութիւնը կենտրոնացած էր բռնակալ թագաւորի ձեռքում։ Տիրապետող դասակարգը կազմուած էր զինուորական ու քրմական խաւերից, որոնք, թագաւորի գլխաւորութեամբ, իրենց ձեռքում էին պահում հողային ընդարձակ տարածութեամբ, իրենց ձեռքում էին պահում հողային ընդարձակ տարածութեամբ։ Տիրապետող դասակարգը շահագործում էր ո՛չ միայն իրեն ենթակայ արտադրողներին, այլև նորանոր հարատութիւններ էր ձեռք բերում պատերազմների, աւտրառումների ու զերելարումների միջոցով։

Շահագործող դասակարգը կազմուած էր ասրուեկներից և մասսամբ՝ գիւղացիներից։

Ցածախակի ուղղի ունեցող պատերազմների հետեւանքով ուրարտական հասարակութեան մէջ կուտակուել էին բազմաթիւ ստրուկներ, որոնք և կազմում էին տիրապետող ուսպմիկ ու քրմական դասակարգի գլխաւոր հարստութիւնը։ Ստրուկներին աշխատեցնում էին ինչպէս գիւղատնտեսու-



կաւէ ամաններ՝ Դիլիջանում բացուած դամբարաններից (Հայաստանի Պետ. Պատմ. Թանգարան):

թեսն մէջ, այնպէս էլ ջրանցքների, ամրոց-բերդերի, քաղաքների լայնածաւալ կառուցումների վրայ Նրանց աշխատեցնում էին նմանապէս լեռնահանքերում, որոնց պեղման աշխատանքները համարում էին ամենածանր գործը։ Սակայն ուրարտական հասարակութեան մէջ ստրկական աշխատանքը չէր ընդգրկում արտադրութեան բոլոր ճիւղերը. չէր հանդիսանում ամբողջ արտադրութեան հիմքը. անտեսութեան մէջ զգալի գեր ունէր նաեւ գիւղացու աշխատանքը։

Ուրարտական հասարակութիւնն արեւելեան տիպի ռազմա-ստրկատիրական մի հասարակութիւն էր, որտեղ գիւրակշող ստրկական աշխատանքի հետ միասին կար նաեւ գիւղացիների աշխատանքը։

Ուրարտական պետութեան գլուխ էր կանգնած թագաւորը՝ բռնակալ կենարոնածիգ իշխանութեամբ, իր կազմը շուրջն ունենալով ռազմիկներին և քրմերին, որոնք նախրիի նախկին ցեղերի պետերը և հոգեւոր առաջնորդներն էին։ Թագաւորն ինքը համարում էր գլխաւոր քրմապետ։ Այդ ռազմիկներն ու քրմերը կազմում էին տիրապետող ու շահագործող դասկարգը, որը թագաւորի գլխաւորութեամբ կառավարում էր երկիրը, դատ ու դատաստան տեսնում, պատերազմներ վարում և այլն։ Ուրարտական պետութիւնն ունէր զինուորական բնոյթ։ Ուրարտացիները մեծ ուշադրութիւն էին դարձնում երկրի ռազմական պաշպանութեան վրայ, որի համար կառուցում էին բազմաթիւ ամրոցներ ու բերդեր։ Ռազմական տեխնիկան ու զէնքերը կատարելագործում էին Ասորեստանի օրինակով։

Ասրարտական պետութիւնը գոյութիւն ունեցաւ մօտ 300 տարի, սակայն է. դարից (մեր թ. ա.) սկսած նա կորցնում է իր նուածած երկրները և Զ. դարի սկզբներին կծկում է իր նախկին հողամասի սահմաններում՝ վանայ լճի շրջանում, որտեղ և իսպառ չփանում է պատմական ասպարեզից։ Ուրարտական պետութեան այդ անկումը հետեւանք էր մի շարք հարուածների, որոնք թուլացրին նրան։ Առաջին հարուածները նրան տուին Ասորեստանի թագաւորները։ Է. դարից երեւան են գալիս կիմմերները և ապա՝ սկիւթները, որոնք Ուսուաստանի հարաւային տափաստաններից։ Մեւ ծովի արեւելեան և Կասպից ծովի արեւեմաեան եղերքով ներխուժում են մի կողմից՝ Փոքր Ասիա և միւս կողմից՝ Մարսաստան, հրով ու սրով ասպատակում Մերձաւոր Արեւելքի երկրները։ Կիմմերների և սկիւթների անվերջ յարձակումները ո՛չ միայն հարուածեցին արգէն թուլացած ուրարտական պետութեանը. այլեւ թուլացրին հզօր Ասորեստանը։ Վերջապէս, է. դարի վերջերին Ասուացւոր Ասիայում պատմական ասպարեզի վրայ հանդէս է գալիս մի նոր հզօր պետութիւն՝ Մեղիսն (Մարտաստանը)։ Մա նախ տապալում է արդէն թուլացած Ասո-

րեստանը (607թ.) և ապա իր հարուածներն ուղղելով ուրարտական պետութեան դէմ, իրեն է ենթարկում այդ երկիրը (585թ.):

Սակայն ուրարտական պետութեան այդ անկումը հետեւանք էր ո՞չ միայն արտաքին հարուածների, այլեւ այն սօցիալական ու ներքին քաղաքական հակառակութիւնների, որոնք խարխլում էին ուրարտական հասարակութիւնը: Սրան պէտք է աւելացնել նաև ուրարտական թագաւորների գերիշխանութեանը ենթակայ վասալական իշխանութիւնների կենտրոնախոյս ձգտումները, որոնք թուլացնում էին ուրարտական միասնական կենտրոնական իշխանութիւնը: Գերիշխող ուրարտացիներն ստինքեան թուով այնքան էլ շատ չէին, որ կարողանային սեփական ուժերով հնազանդ պահել զէնքով գրաւոծ երկրները: Ուրարտական պետութիւնը յաճախ կոնդնած լինելով ներքին ապստամբութիւնների և քաղաքական երերութեան տաւաջ, միշտ ենթակայ լինելով գրսի յարձակութեաներին՝ վերջի վերջոյ տապալուեց Ռուսա Գ.ի (605—585) ժամանակ:

Զնայոծ յաճախակի պատերազմներին և արշաւանքներին, այնուամենայնիւ ուրարտացիները կարողացան ստեղծել բարձր կուլտուրա թէեւ մինչեւ այժմ նրանց նիւթական կուլտուրայի մի որոշ մասն է միայն յայտաբերուել հնագիտական հետափուղութեան միջոցով, բայց և այնպէս այդքանն էլ ցոյց է տալիս, որ այդ ժողովուրդն ունեցել է զարգացած կուլտուրա: Ուրարտական կուլտուրան թէեւ կրում է ասորա-բարելական ու փոքրասիական ազգեցութեան տարրեր, բայց ինքնուրոյն և տեղական է: Այդ կուլտուրան իր շատ գծերով տարրերում է Ասորեստանի, Բարելոնի և ընդհանրապէս Առաջաւոր Ասիայի հին ժողովուրդների կուլտուրաներից:

Ուրարտական հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող բազմաեւակ արհեստները զարգանում էին, ստանալով բարձր տեխնիկայի ձեւեր և նուրբ արուեստի ոճեր:

Ուրարտացիներից մնացել են շէնքեր, որոնց մի մասը փորուած է բարձրաբերձ ու սեպ ժայռերի մէջ և բազկացած է սրահներից՝ մաքուր յղկուած պատերով: Այդ ժայռակոփ շէնքերի տառաջ փորուած են սունդուխքներ, փոքրիկ հրապարակներ և այլն:

Ուրարտացիները կառուցում էին նաև պատաշտր շէնքեր՝ աղիւսից, ինչպէս նաև անագին մեծութեան քարերից, որոնք արտաքուստ տաշում և համաշխարէն կիպ շարւում էին: Այսպէս էին կառուցում բերդ-ամրոցները, տաճարները և այլ հասարակական շէնքերը, որոնք վկայում են ճարտարապետական բարձր արուեստի մասին: Ասորեստանեան և ուրարտական քանդական կարներից երեւում է, որ ուրարտական մայրաքաղաք Տուշպայում կառուցուած են եղել բազմայարկ շէնքեր: Ասորեստանի Սարգոն թագուորի քանդակագործ յուշարձանների մէկի վրայ մեզ հասել է ուրարտական Մուսասիր քաղաքի տաճառի պատկերը:

Այդ տաճարն ունի սիւնազարդ ճակատ, արձաններ և այլ զարդարանքներ:

Տաճարների պատերը շարում էին մուգ և բաց գոյնի քարերի որոշ դասաւորութեամբ, որով շինքն ստանում էր բազմագոյն և հաճի տեսք: Յատակները ծածկում էին գոյնզգոյն մանրիկ խիճերի մօղայիկով, որ կազմուած էր լինում համակենարոն շրջանակներից: Արուեստի այս ձեւերը հետագայում պահպանուեցին նաեւ հայկական ճարտարապետութեան մէջ:

Արուեստի զարդացման տեղի բարձր աստիճանը նկատելի է մետաղագործութեան մէջ, Բացի բազմաթիւ կենցաղային պրոնզէ ու պղնձէ անօթներից և երկաթէ գործիքներից, ուրարտացի վարպետները նոյն մետաղներից պատրաստում էին նաև ձուլուածքներ ու արձաններ, կրօնական նշանակութիւն ունեցող անօթներ և գեղարուեստական նուրբ ճաշակով ոսկէ ու արծաթէ զարդարանքներ: Այդ չըջանից մեզ հասել են մեդալեօններ, կանացի զարդարանքներ, թազաւորների պրոնզէ վահաններ, քանդակագորդ գահերի գեղեցիկ ռաներ և այլն:

Ճարտարապետական արուեստի տեսակէտից կարեւոր տեղ են բըռնում ուրարտացիների կառուցած բազմաթիւ ջրանցքները՝ իրենց ջրամբարներով և արհեստական լըներով: Սեպ ժայռերի լանջերով փորուած հուները, ժայռերի մէջ շինուած թունելները, հոյակապ ամբարտակներն ու պատէշները դարձում էին այդ ջրանցքներն այնպիսի կառուցածքներ, որոնցից մի քանիսը գեռ մինչեւ այսօր էլ գործում են, ինչպէս օրինակ՝ Վանում Սենուտ թագաւորի կառուցած Շամիրամ-սու կոչուած ջրանցքը՝ մօտ 80 քիլոմէթր երկարութեամբ:

Ուրարտացիներից մեզ հասած գրաւոր յուշարձանները սեպագիր արձանագրութիւններն են, որոնք պատմում են իրենց թագաւորների վարած պատերազմների ու կտարած շինարարական գործերի մասին: Մտաւոր կուլտուրայի առնչութեամբ կարելի է միայն նշել, որ ուրարտացիները թէեւ իւրացրել էին ասորեստաննեան սեպագրերը, սակայն դրանք յարմարեցրել էին իրենց լեզուին:



Վանայ բերդի աստիճանները եւ ժայռակի սենեկակի մատքը:

Ուրարտուի կրօնը բազմաստուածեան էր և բովանդաւ
 Աւրարտական կում էր մօտ 50 տարրեր անուններով աստուածներ։
 Կրօնը Այս պանթէռնի գլուխ էր կանգնած Խալդ աստուածը։
 Կրօնի բազմաստուածեան բնոյթի մէջ արտացոյել է
 Ուրարտուի պետական-հասարակական կառուցուածքը։ Այդ պետութիւնն
 առաջացել էր Նախրիի ժողովուրդների միացումով՝ ուրարտու ժողովրդի
 գլխաւորութեամբ։ պետական-հասարակական այդ միացման հետ միացուել
 էին նաեւ նրանց բոլոր աստուածները։ Խալդ աստուածոյ գլխաւորութեամբ։
 Խալդը գերագոյն աստուածն էր, երկնքի աստուածը։ Սրան յարակից էին
 Արդինի — արեւի աստուածը և Թեյշեբ — չան թի, մրրիկի և ապա պատե-
 րազմի աստուածը։




Պրոնդէ արձանիկ՝ զտնուած Վանի մօտ,
 Դարաբլէ բնակատեղից
 (Հայաստանի Պետ. Պատմ. Թանգարան)։



Թագաւորը կոչւում էր «աստուա-
 ծային», որովհետեւ նա Խալդ աստծու (Հայաստանի Պետ. Պատմ. Թանգարան)։
 Երկրային ներկայացուցիչն էր համար-
 ում թագաւորը Խալդի պաշտամուն-
 քի գերագոյն քուրմն էր։ Խալդ աստծու գլխաւոր տաճարը գտնվում էր
 Ուրմիոյ լճից հարաւարեւմուտք, Մուսասիր քաղաքում, որը ուրարտա-
 կան պետական կրօնական գլխաւոր կենտրոնն էր։ Մուսասիրի տաճա-
 րում զետեղւում էր նաեւ թագաւորի մեծ արձանը։ Այսպիսով, թագա-
 ւորի անձի մէջ միանում էին աշխարհիկ ու հոգեւոր իշխանութիւնները։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ



Ուրարտական աստուածներին և կուռքերին սպասարկում էին քուրմերը :
Նրանք կրօնը ծառայեցնում էին իրենց դաստկարգային շահերին, այն
միջոց ու գործիք էին դարձնում իշխանութիւնն ամրացնելու և շահա-
գործուող մասսաներին հնազանդեցնելու համար :

Թէեւ ուրարտացիները Զ. դարի սկզբներին քաղաքա-
կան տաճարէզից չքացան, բայց և այնպէս նրանց
ստեղծած հարուստ կուլտուրան անհետ չկորաւ : Այդ
կուլտուրան ժառանգեցին այն նոր ժողովուրդները,
որոնք հրապարակ իջան Ուրարտուի անկումից յետոյ
և համաձուլուեցին նրանց հետ Հայերը, որ հանդէս
եկան Վանայ լճից մինչեւ Սեւանայ լիճն ընկած հողա-
մասի վրայ որպէս ուրարտացիների անմիջական յաջորդները, իւրացնե-
լով նրանց կուլտուրան, շարունակեցին զարգացնել այն Վացիները, ո-
րոնք հաստատուեցին Կուր գետի հովտից մինչեւ Սեւ ծովի եզերքներն
ընկած հողամասում, նոյնպէս զարգացրին իրենց ժառանգած ուրարտա-
կան կուլտուրան Հայ և վրաց ժողովուրդների կուլտուրաներում պահ-
պանուել են ուրարտական կուլտուրայի նշանակալից հետքեր :

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱԿՈՐՈՒՄԸ

(Զ.-Ե. դ. դ.)

Արմեների կ. դարից սկսած Փոքր Ասիան գտնում է մի կողմից՝ կիմմերների և սկիւթների, իսկ միւս կողմից՝ ասոնեանդէս զալը բեստանցիների ու մեդացիների (մարերի) անդադար արշաւանքների ու պատերազմների առաջարկությունների առաջարկությունների հարաւային տափաստանական գիտության մեջ՝ Միջագետքի հիւսիսից, իսկ մեդացիները՝ իրանի սարանարթից։ Այդ արշաւանքների հետեւանքով երկիրը տակնուվրայ է լինում, տեղի են ունենում ժողովուրդների տեղաշարժումներ և կազմաւորում են նոր պետութիւններ։

Այդ արշաւանքների ու տեղաշարժումների ժամանակ հանդէս են գալիս արմենները։ Նրանք կ. դարում տարածում են Փոքր Ասիայի արեւելեան մասում, որը հատագայում հայ պատմագրութեան մէջ Փոքր Հայ կոչուեց։

կ. դարի վերջերին և Զ. դարի սկզբներին արմենները շարժուելով դէպի արեւելք, հաստատում են Հայկական բարձրավանդակում։ Այդ երկիրը, ուր հաստատուեցին արմենները, նրանց անունով էլ Արմենիա կոչուեց։

Արմեները Արմենիայի քաղաքուկան պատմութիւնն սկսում է մերգուկան պետութեան կազմաւորման շրջանից։ Մեղացիները ցեղակից էին պարսիկներին և ապրում էին իրանի սարանարթի հիւսիս-արեւելեան մասում։ կ. դարի սկզբներին կազմակերպում է մեղական պետութիւնը, որը հատագայում ուժեղանալով՝ իրեն է ենթարկում հարեւան պարսիկներին, որոնք ապրում էին իրանի սարանարթի հարաւում։ կ. դարի վերջերին և Զ. դարի սկզբներին մեղական պետութիւնն ընդարձակում է իր նուաճումները և, դաշնակցելով Բարելոնի հետ, գրաւում է Ասորեստանը, Փոքր Ասիայի մեծ մասը և համարում մինչեւ Ալիւս գետը։

Մեղական թագաւորն իրեն է ենթարկում նաեւ Արմենիան Արմենիայի թագաւորը գտնում է մեղական պետութեան վասալ և պարտաւորում է վճարել հարկ ու իր զօրքերով մասնակցել նրա արշաւանքներին։ Յոյն պատմագրի Քսենոֆոնի տակալով՝ Արմենիան ունէր բաւական մեծ զօրք, որը բաղկացած էր 40 հազար հետեւակից և 8 հազար հեծեալից։ Սակայն Արմենիաի այդ վաստական կախումն այնքան էլ ամուր չէր, նա պատեհ առիթով նոյնիսկ ապստամբում էր՝ թօթափելու մեդա-

կան տիրապետութիւնը։ Բայ Քահնոփոնի հազորգած տեղեկութեան, երբ մեդուկան թագաւոր Կիստքսար Ե.Ը (Զ. դար) պատրաստութիւն էր տեսնում արշաւելու Յարելոնի վրայ, Արմենիայի թագաւորը, հակառակ կնքուած դաշնագրի. դադարում է հարկ տալ նրան և սկսում է ամրութիւններ կառուցել։ Այն ժամանակ Կիստքսարն իր զօրավար ու վաստի պարսիկ իշխան Կիւրոսին զօրաբանակով ուղարկում է Արմենիան Կիւրոսին յաջողւում և ճարպիկութեամբ գերի վերցնել արմենների թագաւորի ընտանիքը։ Սակայն Արմենիայի թագաւորի որդի Տիգրանը որը Կիւրոսի հետ դաստիարակուել էր մեծական երկրում և այդ ժամանակ բացակայում էր երկրից, վերադառնում է, և նրա միջնորդութեամբ հաշտութիւն է կնքում։

Արմենիան նորից ճանաչում է մեդացինների գերիշխանութիւնը, պարտաւորւում է վճարել սահման-

ուած հարկը և տալ օհանդակ զօրք։

Արմենիայի Նկատմամբ Կիւրոսի վա-

րած այդ մեզմ քաղաքականութիւնը բացարւում է նրանով, որ նա,

ձգտելով Պարսկաստանի անկախութեամբ, ցանկանում էր իրեն դաշ-

նակից ունենալ Արմենիան Կիւրոսը միաժամանակ հաշտեցնում է ար-

մեններին ու խալդայիններին, ո- րոնք անդադար պատերազմներ էին մլում իրար դէմ։ Խալդայիններն ապրում էին լեռնային մասերում,

իսկ արմենները՝ դաշտավայրերում։ Այդ հաշտութիւնը հնարաւո- րութիւն էր տալիս արմեններին ինազար գրացիական յարաքերու-

թիւններ ունենալ խալդայինների հետ և տատիճանարար թափանցել դէպի նրանց երկրի խորքերը, մի հանգամանք, որ նպաստում է այստեղ հաս- տատուող արմենների և խալդայինների հողամասում բնտկուած միւս ցե- ղերի միաձուլման։



Ուրարտական ոսկէ մեղալիոն՝ աստուա- խսկ արմենները՝ գաշտավայրերում։

Ուրարտական ոսկէ մեղալիոն՝ աստուա-

խսկ արմենները՝ գաշտավայրերում։

Թոփրախ-կալէում (Պերլինի թանգարան)։

Արմենիան
Արմեննեան
առաջին
քաջաւորների
ժամանակ

Մեգուկան պետութեան գերիշխանութիւնն Առաջաւոր
Ասիայում երկար չի տեսում։ Պարսից ցեղապետներից
մէկը՝ Կիստքսարի վերը յիշուած զօրավար Կիւրոսը՝
ապրտամբում է և, տառալելով մեղական գերիշխա-
նութիւնը, հաստատում է պարսկական պետութիւնը
(550 թ. մեր թ. ա.)։ Հիմնադրում է պարսկական Ա-
քեմենեան դինաստիան։ Մեդացինների նուածած բոլոր ժողովուրդներն Ա-
քեմենեան Պարսկաստանի հպատակներ են դառնում։

Աքեմենեան Պարսկաստանի կազմակերպման ժամանակ՝ Զ. դարի կեսին, արմեններն արդէն անցել էին Եփրատի արեւելեան Կողմը և հաստատուել Նրա մեծ ճիւղի՝ Արածանի գետի հովառում։ Աքեմենեան առաջին երկու թագաւորների ժամանակ արմենները թէեւ պահպանում էին իրենց ինքնուրոյնութիւնը. բայց և այնպէս համարւում էին վասալներ և ճանաչում էին Աքեմենեանների գերիշխանութիւնը։ Նրանք հարկ էին վճարում և իրենց զօրքերով մասնակցում էին պարսկական թագաւորների պատերազմներին։

521 թ. Պարսկաստանի գահը բարձրացաւ Դարեհ Ա. ը։ Սա, ինչպէս միւս հպատակ ժողովուրդների, նոյնպէս և արմենների նկատմամբ վարում է խիստ քաղաքականութիւն, որի պատճառով տեղի են ունենում մի




Դարեհը զահի վրայ
(ըստ Յուստիի), բանդակ
Բիսիթունի ժայռի վրայ։

Արմենների ապստամբութեան և կուն-ների մասին հազորդում է Դարեհի մի ընդգարձակ արձանագրութիւնը, որ սեպագիր նշանագրերով փորագրուած է Իրանի Քիրմանշահ քաղաքից ոչ այնքան հեռու գանուող Բեհիստունի կոմ Բիսիթունի ժայռի վրայ։ Բիսիթունի արձանագրութեան մէջ Դարեհը մի առ մի յիշատակում է ապստամբ ժողովուրդներին և նրանց դէմ տարած իր յաղթանակները։ Այստեղ յիշատակում են նաև ապստամբ արմեններն ու նրանց հետ հղած ճակատամարտերը։ Այս արձանագրութիւնն ունի կարեւոր նշանակութիւն, որովհետեւ

դա առաջին գրաւոր յուշարձանն է, որտեղ յիշում է արմենների և Արմենիայի մասին։

Բիսիթունի արձանագրութիւնն արմենների ապստամբութեան մասին պատմում է հետեւեալ երկրներն ապստամբութիւն իմ դէմ։ Պարսկաստան, Շոշաստան, Մարաստան, Ասորեստան, Արմինա, Պարթեւաստան... Դարեհ թագաւորն ասում է. — իմ ծառայ Դարեհ արմենին ուղարկեցի Արմինա, ասելով

նրան՝ «Գնո՞ւ և նուտճէ՞» ինձ չհպատակուող ապստամբ ժողովրդին»։ Դադարչն արշաւեց, երբ նա Արմինա հասու, ապստամբները, հաւաքելով իրենց ուժերը, յարձակուեցին նրա վրայ Արմինայում կայ Զուզա քաղաք, այստեղ եղաւ ճակատամարտը թուրավահարա ամսի 8ին (521 թ. ապրիլի 19)։ Ահուրամազգան ինձ օգնեց. Ահուրամազգայի չնորհիւ իմ զօրքը սոսկալի ջարդ տուեց ապստամբներին... Դարեհ թագաւորն ասում է. — Ապստամբները երկրորդ անգամ հաւաքեցին իրենց ուժերը և պատերազմի ելուն Դադարչի դէմ։ Արմինայում կայ Տիգրա անունով բերդ, այդտեղ կատարուեց ճակատամարտը թուրավահարա ամսի 18ին (ապրիլի 29). Ահուրամազգան ինձ օգնեց. Ահուրամազգայի չնորհիւ իմ բանակը ջարդեց ապստամբներին Թշնամին 540 սպանուած թողեց պատերազմի դաշտում, և Դադարչը 520 հոգի գերեց... Դարեհ թագաւորն ասում է. — Երրորդ անգամ հաւաքեցին իրենց ուժերը ապստամբները և յարձակուեցին Դադարչի վրայ. Արմինայում Ռւճեամա անունով բերդ կայ. պատերազմին այդտեղ կատարուեց թայիգարճոյիս ամսի 9ին (մայիսի 20). Ահուրամազգան ինձ օգնեց. Ահուրամազգայի չնորհիւ իմ բանակը սոսկալի ջարդ տուեց ապստամբներին։ Այնուհետեւ Դադարչը ինձ սպասեց Արմինայում, մինչեւ ես վերագարճայ Մարաստան. . . Դարեհ թագաւորն ասում է. — Այնուհետեւ ես Արմինա ուղարկեցի իմ ծառայ, Վահումիս պարսիկին, պատուիրելով նրան. «Գնո՞ւ և նուտճէ՞» ինձ հճպատակուող ապստամբների բանակը»։ Վահումիսին արշաւեց. Երբ նա Արմինա հասու, ապստամբները, հաւաքելով իրենց ուժերը, յարձակուեցին նրա վրայ։ Ասորեստանում Իզալլա անունով նահանգ կայ, այդտեղ կատարուեց ճակատամարտը անամակա ամսի 15ին (519 թ. յունուարի 18)։ Ահուրամազգան ինձ օգնեց. Ահուրամազգայի չնորհիւ իմ բանակը սոսկալի ջարդ տուեց ապստամբներին... Դարեհ թագաւորն ասում է. — Նորից ապստամբները հաւաքեցին իրենց ուժերը և յարձակուեցին Վահումիսի վրայ. Կայ Արմինայում Առւիյարա անունով մարզ, այդտեղ կատարուեց ճակատամարտը թուրավահարա ամսի 30ին (519 թ. յունիսի 1)։ Ահուրամազգան ինձ օգնեց. Ահուրամազգայի չնորհիւ իմ բանակը սոսկալի ջարդ տուեց ապստամբներին»։



Թեհիսաւոնի արծանազրութիւնների
ընդիանուը տեսարանը.

Չնայած Դարեհի այս մնապարծ խօսքերին, իրականում, ապստամբ արմենները միշտ պարսիկ զօրքերին յետ են մղել Արմենիայից մինչեւ Ասորեստանի իջալլա նահանգը, և միայն վերջին ճակատամարտում է, որ պարտութիւն են կրել:

Դարեհ Ա.ը (521—484 թ. թ.), ճնշելով հնթակայ ժողովուրդների ապստամբութիւնները, միանգամայն վերափոխեց Պարսկաստանի պետական-վարչական կառուցուածքը: Նա վերացրեց Պարսկաստանի գերիշխանութեան տակ գտնուող երկրների ինքնուրոյն ու կիսանկախ գրութիւնը, հակայսական պետութիւնը բաժանելով 20 սատրապութիւնների՝ ուսանձին վարչական մարզերի: Իւրաքանչիւր մարզ ուներ իր կառավարիչը՝ սահմանը, որին նշանակում էր թագուարուն իր ազգականներից կամ վստահելի բարձրաստիճան պաշտօննեաններից:

Դարեհ Ա.ը ճեռնամուխ է լինում նաև մի շարք ներքին այլ բարեկարգութիւնների: Նա կառուցում է հոչտկաւոր ԱԱրքունի ճանապարհը» — մօտ 2400 քիլոմէթր երկարութեամբ, որ ճգլում էր Պարսկաստանի



Գերի թագաւորները Դարեհի առաջ

Շռշ (Սուզա) մայրաքաղաքից մինչեւ Փոքր Ասիայի խորքերն ու Միջերկրական ծովի եզերքները Այդ ճանապարհի որոշ մասը, մօտ 330 քիլոմէթր երկարութեամբ, անցնում էր Հայկական բարձրավանդակի հարաւարեւմտեան ուղղութեամբ:

Դարեհը կառուցելով այդ ճանապարհը, ո՞չ միայն ռազմական ու վարչական նպատակներ էր հետապնդում, այլև առեւտրական: «Արքունի ճանապարհը» այն մեծ նշանակութիւնն ունեցաւ, որ գիւրացրեց Հայկական բարձրավանդակում ապրող ժողովուրդների ներքին փոխ-յարաբերութիւնները և նպաստեց նրանց կուլտուրական շփման գործին:

Պարսկական պետութեան սատրապութիւններից 13րդը կազմում էր Արմենիայի մի մասը և բանում էր Հայկական բարձրավանդակի հարաւարեւմտեան կողմը՝ սկսած Արտանիի հովտից մինչեւ Պոնտոս (Ան ծովը):

18րդ ստարապութիւնը տարածւում էր Հայկական բարձրաւանդակի հարաւարեւելեսն և հիւսիսային մասերում։ Յոյն պատմագիր Հերոզոտի (Ե. դորի սկզբներին՝ մեր թ. ա.) ասելով՝ այնտեղ բնակւում էին ալարոգները, սասպէցրները ու մատիչնները։ Ե. դարի վերջերին և Դ. դարի սկզբներին 18րդ ստարապութեան մէջ այլեւս ալարոգները չեն յիշատակւում, նրանց տեղը բռնում են արմենները։

Արմենների սօցիալական կազմը Արմենները, դեռևս Ե. դարում, արդէն սօցիալսպէս շերտաւորուած հասարակութիւն էին կազմում։ Արդէն մեղական գերիշխանութեան, ապա կիւրոսի թագաւորութեան և Դարեհի ժամանակ, ինչպէս այդ երեւում է Բիսիթունի արձանագրութիւններից և Քանոնքոնի ռկիրոպեգիայից, արմենների մէջ կային թագաւորներ, իշխաններ և զօրականներ, որոնք տիրապետող զասակարգ էին կազմում։ Նրանց հարատութիւնը, արտադրութեան հիմնական միջոցը, հողն էր, որովհետեւ հասարակական տնտեսութիւնը հիմնուած էր զիխաւորապէս գիւղատնտեսութեան ու անասնապահութեան վրայ։

Տիրապետող շերտերի հակադիր սօցիալական ներքնախաւը կազմուած էր գիւղացիններից և ստրուկներից։

Այս դասակարգային հասարակութիւնը թէեւ առաջացել էր նախորդ տոհմային հասարակութեան քայլացոյման հետեւանքով, բայց և այնպէս դեռևս պոհպանում էր տոհմային հասարակուկարգի մնացորդները։ Աքեմեննեանների տիրապետութեան տակ, մասնաւորապէս Դարեհ Ա.ի թագաւորութեան ժամանակաշրջանում, զասակարգային շերտաւորման յարատեւող ընթացքը արմենների մէջ աստիճանաբար խորանում է, որ հետեւանք էր սատրապութեան շրջանի սօցիալ-տնտեսական կեանքի զարգացման։

Հաստատուելով Հայկական բարձրաւանդակում, մասնայ ժողովրդի կազմաւորումը Հաստատուելով Հայկական բարձրաւանդակում, մասնաւորապէս նախկին ուրարտական պետութեան հողամասում, արմենները շփում են տեղաբնիկ մի շարք ժողովուրդների ու ցեղերի հետ։ Այդ շփումն աւելի է ուժեղանում, երբ արմենները շարունակում են հետզհետէ թափանցել Արաքս գետի հովիաը՝ Արտատաեան դաշտը, այսինքն՝ Հայկական բարձրաւանդակի այն մասը, որը հանդիսացաւ հայ ժողովրդի քաղաքական և կուլտուրական կեանքի օրրանը։ Աշխարհագրական այդ տարածութեան վրայ արմենները տնտեսական ու քաղաքական սերտ յարաբերութիւններ ունեին նախ՝ ուրարտացինների և ապա մի շարք տեղաբնիկ ժողովուրդների հետ, որոնց թւումն էին հայասները, մատիչնները, սասպէցրները, խալդայինները և ալարոգները՝ Հայկական բարձրաւանդակի արեւելեան և հիւսիսային մասերի գերակշռող բնակիչները։

Երկարատեւ շփման շնորհիւ արմենների հետ միաձուլում են բնիկ

ցեղերը, որի հետեւանքով կազմաւորւում է մի նոր ժողովուրդ. որը հայա ցեղի անունով կոչում է հայ, իսկ օտարները արմենների ցեղի առունով շարունակեցին հայերին անուանել արմեներ:

Արդէն Գ. դարի սկզբներին Հայկական բարձրավանդակում տիրապետում էր հայերէն լեզուն: Այն հողամասը, որտեղ առաջացաւ հայ ժողովուրդը, նրա անունով էլ կոչուեց Հայաստան: Որ հայ ժողովրդի գոյացումը հետեւանք է արմենների, հայանների, ուրարտացիների և այլ լնիկ ցեղերի միաձուլման, այդ ապացուցում է հայերէն լեզուի կառուցուածքը. որը ցոյց է տալիս, թէ հայերէն լեզուն բազկացած է տեղաբնիկ և եկւոր ժողովուրդների լեզուներից: Բացի գրանից, հին Հայաստանի մի շարք աշխարհագրական և մանաւանդ իշխանական-նախարարական տների անուններ գտնում ենք թ.—Ը. դարերի ուրարտական արձանագրութիւնների մէջ: Հին Հայաստանի նախարարական տոհմերի անունները ցոյց են տալիս, որ ուրարտական ու տեղական այլ ժողովուրդների տիրապետող դասակարգն առաջին հերթին է միաձուլուել արմենների հետ և շարունակել է պահպանել իր սօցիալական բարձր դիրքը, կրելով նախկին տոհմային անունները:

Հայաստանը
• Տնենոֆոնի
• Եկարագրու-
թեամբ

Յոյն պատմագիր Քսենոֆոնը, որպէս ականատես, իր «Անարազիս» կոչուած գրքում շատ հետաքրքրութիւնները վերաբերութիւններ է հազորդում հին Հայաստանի մասին իր այդ գրքում նա նկարագրում է յունական 10 հազարանոց վարձկան բանակի նահանջը Միջագետից՝

Հայաստանի վրայով դէպի հայրենիք: Այդ տեղեկութիւնները վերաբերում են Ե. դարի վերջերին, այսինքն այն ժամանակաշրջանին, երբ արմենների ու տեղաբնիկների համաձուլումը գրեթէ աւարտուել էր, և արդէն առաջացել էր հայ ժողովուրդը:

Հստ Քսենոֆոնի նկարագրութեան՝ Հայաստանը մի ընդարձակ ու բարեբեր երկիր էր, որը տարածւում էր Կենտրիտես գետից (այժմ՝ Բոհատան-սու — Տիգրիսի արեւելեան ճիւղը) մինչեւ Եփրատ գետի ակունքները և բաժանւում էր երկու մասի՝ Արեւելեան Հայաստանի և Արեւմտեան Հայաստանի:

Երբ յոյները Հայաստանի սահմաններին հասնելով՝ մօտենում են Կենտրիտես գետին, նրա միւս եղերքին նկատում են սպառագինուած հեծելազօր, որը հաւաքուել էր դիմագրելու յոյներին և թոյլ չտալու անցնել գետը: Իսկ գետափի ուղղութեամբ, բլուրների վրայ, խմբուած էր հետեւազորը, որն Արեւելեան Հայաստանի Օրոն տես թագաւորի (ստարապի) վարձկան զօրքն էր, բազկացած հայերից, մարդերից և խորդայիններից: Սրանք զինուած էին ահագին վահաններով ու երկար նիզակներով: Յոյները ուղմանկան խորամանկութեամբ կարողանում են անցնել գետը և մասել Արեւելեան Հայաստան: Օրոնտեսը, զգալով իր թուլութիւնը, նահանջում է: Յոյներն իրենց անցած ճանապարհին քաղաքների չեն հանդիպում. նը-

բանք տեսնում են միայն գիւղեր, որոնք ընկած էին գետերի հովիտներում։ Յոյները մտնում են մի մեծ գիւղ։ որի աների մեծ մասն ունէր աշտարակներ և որտեղ գտնուում էր տեղական ստարապի ապարանքը։

Երեք օրուայ առաջխաղումից յետոյ յունական բանակը մօտենում է Արեւմտեան Հայաստանին, որի թագաւորն (ստարապը) էր Տիրիբազը՝ պարսից թագաւորի մտերիմ բարեկամը։ Տիրիբազը մի քանի թիկնապահ ձիւորների ուղեկցութեամբ դիմաւորում է յոյներին և նրանց հետ բանակցութիւններ է սկսում թարգմանի միջոցով։ Տիրիբազը յոյներին խոստանում է իր աջակցութիւնը, եթէ նրանք չնրկիզեն գիւղերը և բաւականան միայն գիւղացիներից վերցրած մթերքներով։ Այդ իմաստով էլ երկու կողմերի միջեւ դաշինք է կնքում։ Արեւմտեան Հայաստանում նոյնպէս կային բազմամարդ գիւղեր, որոնց կենտրոնում գտնւում էր արեւմտեան մասի սատրապի ապարանքը։ Այստեղ գիւղական տները գետնափոր էին, մուտքը տանիքից էր, ջրհորի բերանի նման և մարդիկ իջնում էին սանդուխքներով։ Խրճիթում մարդկանց հետ ապրում էին նաեւ տնային կենդանիներ, որոնց համար ստորերկրեայ առանձին մուտք էր շինուած։ Թէ՛ Արեւելեան և թէ՛ Արեւմտեան Հայաստանի գիւղերում յոյները գտնում են առատ մթերքներ — ցորեն, զարի, ոչխարի, այծի, խոզի, հորթի ու հաւի միս, զինի, գարեջուր, բազմազան իւղեր և բուսական իւղով պատրաստած անուշանոտ օճանելիքներ։

Գիւղը կառավարում էր գիւղապետը։ Նա էր հաւաքում սատրապին ու պարսիկ թագաւորին հասմելիք տուրքերն ու հարկերը։

Քսենոփոնի, ինչպէս նաեւ աւելի հին յոյն պատմագիր Հերոդոտի նըկարագրութիւններից երեւում է, որ Հայաստանում տիրում էր բնատընտեսութիւնը։ ժողովրդի հիմնական զբաղմունքը կազմում էին երկրագործութիւնն ու անասնապահութիւնը։ առանձնապէս շեշտուում է ձիաբուծութեան զարգացումը։ Հասարակութիւնն արգէն սօցիալապէս շերտաւորուած էր։ Այստեղ տեսնում ենք ազնուական ու շահագործող գասակարգի ներկայացուցիչ ստարապին, որը յենում էր իր զօրքերի վրայ և ճոխ կեանք էր վարում։ Գիւղական հասարակութիւնը հանդիսանում էր որպէս շահագործուող մասը, որ հարկ էր վճարում իր բնական արդիւնքներից։ Նա կազմուած էր գիւղական համայնքներից, իսկ վերջիններս՝ առանձին ընտանիքներից։ Իրենց ինքնամփուփ տնտեսութեամբ Քսենոփոնի նկարագրած գիւղական հասարակութիւնն ապրում էր զարգացման այն շըրջանը, երբ տոհմային համայնքը վաղուց արգէն քայլացուել էր, և առաջացել էր գիւղական համայնք։ Գիւղական համայնքի մէջ նկատում է տնտեսական անհաւասարութիւն։ Քսենոփոնի նկարագրած գիւղապետը համագիւղացիների համեմատութեամբ աւելի ունեւոր էր։

Սօցիալական այդ շերտաւորմանը զարկ էր տալիս նաեւ առեւտուրը, որ բաւականաչափ զարգացած էր եւ գարում։ Հերոդոտը նկարագրում է այն առեւտրական յարաբերութիւնները, որոնք գոյութիւն ունէին Հայաստանի ու Միջագետքի միջեւ։ Եփրատ գետով Հայկական բարձրավան-

Դակից դէպի Բաբելոն էին գնում տկանաւով և վաճառքի տանում գիւղատեսական արդիւնքներ։

Պարսկական Աքեմենեան գինաստիան իր գոյութիւնը պահպանեց 220 տարի, որի ընթացքում Հայկական կուլտուրայի ազդեցուրիւնը բարձրավանդակը մնաց նրա գերիշխանութեան տակ։ Այդ ժամանակամիջոցում Պարսկաստանը որոշ ազդեցուրիւն ունեցաւ հայ ժողովրդի կենցաղի և ընդհանրապէս կուլտուրայի վրայ։ Այդ ազդեցուրիւնն առաջին հերթին տարածւում է հայերի կրօնի և լեզուի վրայ։ Հայ ժողովուրդը բաւականաչափ բառեր է իւրացրել պարսկերէնից։ Հայերէնում պահպանուել են մի շարք բառերի արմատներ, որոնք հին պարսկական ծագում ունեն։

ԶՈՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵԼԵՒԿԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(330—189 թ. թ.)

**Մակեդոնիան
Ալեքսանդրի
ժամանակ** Դ. գարի կէսերին քաղաքական տսպարէզում հանդէս է գալիս Մակեդոնիան։ Աս սկզբում տնտեսապէս և կուլտուրապէս յետամաց մի երկիր էր՝ Պալքանեան թերակղզու հիւսիս-արեւելքան ծայրում։ Փիլիպոս Բ. թագաւորի (359—336) օրով Մակեդոնիան սկսում է անտեսապէս զարգանալ, իւրացնել յունական կուլտուրան և հասնում է այնպիսի ուազմա-քաղաքական հզօրութեան, որ իրեն է միացնում ամբողջ Յունատասանը։ Այնուհետեւ Փիլիպոս Բ.ը պատրաստութիւն է տեսնում արշաւելու Ասիա, Պարսկաստանի վրայ, սակայն նա սպանում է։ Փիլիպոսին յաջորդում է նրա երիտասարդ որդին՝ Ալեքսանդրը (336—323 թ. թ.), որը կարողանում է իրագործել հօր սկսած գործը։ Մակեդոնական զօրաբանակն Ալեքսանդրի գլխաւորութեամբ անցնում է Փոքր Ասիա (334 թ.) և մի շարք ճակատամարտերից յետոյ նոււաճում տմբողջ Պարսկաստանը։ Աքեմենեան լայնածաւալ պետութիւնը կործանւում է։ Ալեքսանդր Մակեդոնացին իր յաղթական արշաւոնքով տիրում է ամբողջ Փոքր Ասիային ու Ասացաւոր Ասիային, նաև Հնդկաստանի արեւմտեան մասերին և հիմնում է հսկայական մի պետութիւն։

Ալեքսանդր Մակեդոնացու մահից յետոյ սուր պայքար է սկսում նրա գլխաւոր զօրավարների միջեւ, որոնցից իւրաքանչիւրը, յենուելով իր զինուրական ուժերի վրայ, ձգտում էր գրաւել թագաւորական իշ-

խանութիւնը։ Այս ներքին արիւնալի կոիւներին վերջ արուեց 301 թուին, երբ զօրավարներից երեքն իրենց միջեւ բաժանեցին Սելքսանդր Մակեդոնացու հիմնած հակայակոն պետութիւնը։ Առաջաւոր Ասիայի բոլոր երկրները Պարսկաստանի հետ միասին բաժին ընկան Սելեւկոս զօրավարին Կաղմուեց Սելեւկեան պետութիւն, որը գոյութիւն ունեցաւ գրեթէ երկու և կէս դրաւ։

Ալեքսանդր Մակեդոնացու տիրապետութիւնն Ասիայում մեծ նշանակութիւն ունեցաւ հին Արեւելքի ժողովուրդների զարգացման պատմութեան մէջ։ Մակեդոնական արշաւանքների կապակցութեամբ յունական կուլտուրան մուտք է գործում Ասիա և հետազայում է' լ աւելի մեծ թափով տարածւում յոյների գաղթականական հոսանքի շնորհիւ։ Առաջաւոր Ասիայում, մասնաւորապէս Սելեւկեան պետութեան մէջ, հիմնում են բազմաթիւ յունական գուղութներ, առաջանում են յունական տիպի խոչչոր քաղաքներ, լայն չափով զորգանում են առեւտրական յարաբերութիւնները, բարձրանում է երկրի տնտեսութիւնը։ Նորամուտ յունական կուլտուրան մի կողմից՝ շիւում է տեղական զարգացած կուլտուրայի (ասորա-բաբելական) հետ և միւս կողմից՝ ներազդում է տեղական յետամնուց ժողովուրդների վրայ։ Յունական ու արեւելեան կուլտուրաների այդ համաձայնումից առաջանում է իւրայատուկ կուլտուրա, որը յայտնի է նելլենիզմ կամ նելլենիստական կուլտուրա անունով։

**Հայաստանը
Սելեւկեան
իշխանութեան
ժամանակաշրջա-
նում**

Պարսկաստանի Աքեմենեան դինաստիայի կործանումից յետոյ Հայաստանը մի առժամանակ գտնուում էր ինքնուրոյն վիճակում։ Սելեւկեան պետութեան ձեւակերպումից յետոյ նրա թագաւորները փորձում էին Հայաստանը գրաւել, բայց այդ փորձերը շատ անգամ անյաջող էին անցնում։ Սակայն որոշ ժամանակներում էլ նա ենթակայ էր Սելեւկեան գերիշխանութեանը։ Շփուելով Սելեւկեան պետութեան հետ, Հայաստանը մտնում է նելլենիստական կուլտուրայի շրջանակների մէջ և սկսում է տնտեսապէս զարգանալ, մասնակից դառնալով ծաղկող առեւտրական յարաբերութիւններին։ Սելեւկեան ընդարձակ պետութիւնը վարչականորէն բաժանուած էր 72 մեծ ու փոքր աստրապութիւնների, որոնցից երեքը՝ Փոքր Հայք, Մեծ Հայք և Ծոփք՝ կազմում էին Հայաստանը։

**Փոքր Հայքն արմենների հիմնած առաջին պետութիւնն
Փոքր Հայք**

Փոքր Հայքն արմենների հիմնած առաջին պետութիւնն էր, որ հետագայում մտել էր Աքեմենեան Պարսկաստանի 13րդ ստարապութեան մէջ։ Փոքր Հայքը տարածւում էր Արևիւս գետից դէպի արեւելք, մինչեւ Եփրատ գետը, հարաւելից՝ մինչեւ Կապադովիկիա, իսկ հիւսիսից՝ մինչեւ Պոնտոս։ Պարսկաստանի անկումից յետոյ Փոքր Հայքը նորից վերականգնում է իր ինքնուրոյնութիւնը։ Զնայած նրան, որ Փոքր Հայքում կային Սելեւկեան թագաւորի

տեղակալներ, սակայն նա ունէր նստել իր տեղական դինաստիայի թագաւորները։ Սրանք օժտուած էին ինքնուրոյն իշխանութեամբ և երբեմն այնքան էին ուժեղանում, որ հրաժարւում էին ճանաչել Սելեւկեան պետութեան գերիշանութիւնը։

Մեծ Հայքը նախկին, Աքեմենեան Պարսկաստանի 18րդ
Մեծ Հայք ստարապութիւնն էր, որ ստացաւ Մեծ Հայք անունը։

Մեծ Հայքը տարածւում էր Ասրպատականից մինչեւ Եփրատի վերին ակունքները և Վրաստանից մինչեւ Հիւսիսային Միջագետք։ Թէեւ Մեծ Հայքը համարւում էր Սելեւկեանների իշխանութեան տակ գտնուող երկիր, բայց նա գրեթէ ինքնուրոյն էր Սելեւկեան գերիշխանութիւնը չկարողացաւ այստեղ ամուր հաստատուել։ Յիշատակուում են Դ. և Գ. գարերի մի շարք տեղական թագաւորներ, որոնք պայքարում են Սելեւկեան գերիշխանութեան դէմ։ Սելեւկեան թագաւորներն աշխատում էին խօսափել նրանց հետ կռուելուց և բաւականում էին նրանով, որ այդ երկրի թագաւորները գէթ ձեւականօրէն ճանաչեն Սելեւկեան գերիշխանութիւնը։

Ծոփքը կամ, ըստ յոյն պատմագիրների՝ Առմենան
Չռփի գտնուում էր Փոքր Հայքի և Մեծ Հայքի սահմանների
միջեւ ընկած հարաւային եռանկիւնաձեւ հողամասում,
որը բռնում էր Արածանիի ու Տաւրոսեան լեռնաշղթայի և Արեւմտեան
Տիգրիսի վերին աւազանի միջեւ եղած տարածութիւնը։ Գտնուելով միջազգային տարանցիկ առեւտրի ճանապարհի գլխաւոր հանգոյցի վրայ և նոյն ճան սպարհով հաղորդակից լինելով Սելեւկեան կայսրութեան հելենիստական կուլտուրային, Ծոփքը հայկական երկրներից առաջինն էր, որտեղ սկսեցին արագօրէն զարգանալ տնտեսական կեանքն ու կուլտուրան։ Թէեւ Ծոփքի պատմութեան մասին մեզ ստոյգ տեղեկութիւններ չեն հասել, սակայն մեզ յայտնի են Գ. գարի մի քանի հայ թագաւորների անուններ՝ Շարասպէս, Արշամ, Արքիսարէս, Քսերքսէս, որոնք պայքարում էին Սելեւկեանների դէմ։ Մեզ հասել են այս թագաւորների կարած գըրամները։ Ծոփքի տնտեսական բարձր զարգացման մասին է վկայում այն հանգամանքը, որ այստեղ հիմնուել էին մի քանի քաղաքներ, որոնցից Արևամուտն ու Կարկարիկերը յայտնի էին որպէս առեւտրական կենտրոններ։

Սելեւկեան պետութիւնը Գ. գարից արդէն սկսում է
պետութեան հետզհետէ թուրանալ։ Դրա պատճառը երկրում տիրող
ներքին հակասութիւններն էին։ Ստրուկների հակայա-
կան մասսան, որ ենթակայ էր անզուազ շահագործ-
ման, միշտ թշնամութար էր տրամադրուած տիրապետող գասակարդի հանդէպ և յաճախ ըմբոստանում ու ապստամբում էր նրա դէմ։ Հսկայական

պետութիւնը բաղկացած էր բազմաթիւ և տարրեր ժողովուրդներից, որոնք, զրկուելով իրենց նախկին քաղաքական ինքնուրոյնութիւնից, ձնշում էին նուածող Սելեւկեանների կողմից Երբ Սելեւկեան պետութիւնն արտաքին պատերազմների հետեւանքով ապրում էր ծանր քաղաքական ճգնաժամ, հպատակ ժողովուրդները, օգտուելով այդպիսի առիթից՝ ապստամբում և ազատագրական պայքար էին մղում։ Ազատագրական այդ շարժումներն աւելի էին արագանում, երբ Հռոմն սկսում էր իր պայքարը Սելեւկեան պետութեան դէմ։

Բ. գորի սկզբներին, Կարթագէնի գրաւումից յետոյ, Հռոմն իշխում էր ամբողջ Միջերկրական ծովի վրայ. Նա նուածում է նաեւ ամբողջ Յունաստանը Ապա Հռոմն իր աշխարհակալական քաղաքականութիւնում է գէպի Առաջաւոր Ասիս, իր ազգեցութեանը ենթարկելով Փոքր Ասիայի յունական գաղութները և այստեղ տառաջացած մասր պետութիւնները։ Հըսումը հետզհետէ մօտենում էր Սելեւկեան պետութեան ստհմաններին։ Նա գառնում է վերջինիս վտանգաւոր մրցակից՝ Առաջաւոր Ասիայում գերիշխելու համար։ Հռոմն օգտագործելով Սելեւկեան իշխանութեան հպատակ ժողովուրդների անջատողական ձգումները, ապստամբական շարժումների է հրահրում նրանց, որպէսզի թուլացնի Սելեւկեանների պետութիւնը և իր տիրապետութիւնը հաստատի Մերձաւոր Արեւելքում։ Փոքր Ասիայի Մագնեզիա քաղաքի մօտ տեղի ունեցած ճակատամարտում (190 թ. մեր թ. ա.) Սելեւկեան Անահիոքս թագաւորը հռոմոյեցիների կողմից մեծ պարտութիւն է կըրում։

Մագնեզիայի պարտութիւնը ճակատագրական է դառնում թուլացած Սելեւկեան պետութեան համար։ Այդ պարտութիւնն ազգանշան է հանդիսանուում Սելեւկեան տիրապետութեան տակ ձնչուած ժողովուրդների համար, որոնք, ապստամբելով, կարողանում են թօթափել Սելեւկեան լուծը և անջառուել նրանից։ Թուլացած Սելեւկեան իշխանութեան դէմ ապրատամբել էր Պարսկաստանը գեռեւս 250 թ., իսկ Մագնեզիայի ճակատամարտից յետոյ իրենց անկախ են յայտարարում Հայաստանը, ինչպէս նաեւ հարեւան Պանտոսը, Վրաստանը և հիմում են իրենց ինքնուրոյն պետութիւնները։



Արշակի դրամը

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԽԸ ԵՒ ՆՐԱ ՊԱՅՔԱՐՆ
ՕՏԱՐ ՆՈՒԱՃՈՂՆԵՐԻ ԴԷՄ

(189—1 թ. թ. մեր թ. ա.)

1.— ԱՐՏԱՇԻՍԵԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՆ

Արտաշէս Ա.թ
իւ Քարենի բազա-
ւորութիւնները

Մագնեղիայի ճակատամարտից յետոյ Սելեւկեան պե-
տութիւնից անջատուած Մեծ Հայքը և Ծոփքը դար-
ձան անկախ պետութիւններ Մեծ Հայքում իրեն ան-
կախ յայտարարեց Արտաշէս Ա.թ. (189 թ.), իսկ Ծոփ-
քում՝ Զարեհը : Նրանք, որ մինչ այդ համարւում էին Սելեւկեանների
վասալներ, նորակազմ այդ պետութիւններում սկսեցին իշխել որպէս
անկախ թագաւորներ : Նրանք ծագումով հայեր էին և ստացել էին հել-
ենիստական կրթութիւն :

Արտաշէս Ա.թ (189—160 թ. թ.), դառնալով Մեծ Հայ-
քի (Մեծ Հայաստանի) թագաւոր, ձեռնարկեց հայ պե-
տականութեան կազմակերպմանը և զարկ տուեց նրա
տնտեսական, ռազմական ու վարչական շինարարութեանը : Նա իր պե-
տութեան կենտրոնը հաստատեց Արտաքսի հովառում՝ Արարատեան դաշտում :
Այս արգաւանդ և հարուստ դաշտավայրն իր անտեսական նշանակութեամբ
աւելի բարձր էր, քանի Հայաստանի միւս վայրերը : Նա ընկած էր այն ժա-
մանակուայ միջազգային տարանցիկ առեւտրական ճանապարհների հան-
գոյցներից մէկի վրայ : Ահա այդ արգաւանդ դաշտավայրում, Արտաքսի մի
պտոյափ վրայ : Արտաշէսը կառուցեց իր հոչակառոր մայրաքաղաքը, որն
իր անունով կոչեց Արտավազ : Ժամանակի յօյն պատմագիրները մեծ գո-
վասանքով են խօսում այդ քաղաքի մասին, որը ռազմականապէս ամուր
էր և ոչքի էր ընկնում իր փարթամութեամբ, արդինագործութեամբ և
առեւտրով :

Արտաշէս Ա.թ ձեռնարկում է Հայկական բարձրավանդակի մի շարք
շրջանների նուանման գործին : Մեղացիներից նա խլում է Կասպիական
ծովեղերքը, որ հետագայում կոչւում էր Փայտակարսն, և Բասրոպետան
(Վասպուրականի արեւելեան մասերը), վրացիներից՝ Գուգարքը (այժմեան
Լոռու շրջանը) և Կղարջքը (Ճորոխ գետի հովիտը), Խալիբներից և մոս-
խերից՝ Կարինը (այժմեան կրղրումի շրջանը) ու Դիրջանը, կատառնե-
րից՝ Եկեղեց գաւառը, Սիրիայից՝ Տմորիքը : Տեղի է ունենում Հայաս-
տանի հողամասային ու հեթանոսական համախմբումը և կազմում է մի
ընդարձակ պետութիւն, որի անմանների մէջ է մտնում գրեթէ ամբողջ
Հայկական բարձրավանդակը :

Արտաշէսը փորձում է իր պետութեանը միացնել նաեւ Ծոփքը, բայց այդ նրան չի յաջողւում։ Նրա թագաւորութեան ժամանակ Աելեւկեան իշխանութիւնը ձգտում է Հայոստանը նորից ենթարկել իրեն, սակայն Արտաշէսը դաշնակցելով մեղացիների հետ, կարողանում է պաշտպանել իր երկրի անկախութիւնը։

Արտաշէս Ա.ից մեզ հասել են միտյն երկու կտոր միեւնոյն բովանդակութիւնն ունեցող արամեատառարձանագրութիւններ, որոնց մէջ յիշատակուած է նաեւ նրա հօր՝ Զարբենի անունը. նրա թագաւորութեան մասին մեզ տեղեկութիւններ հաղորդում են գլխաւորապէս հին յոյն մատենագիրները։ 161 թ. սկսած այդ աղբիւրները լուսմ են, և մեզ ոչինչ յայտնի չէ Արտաշէս թագաւորի վերջին տարիների մասին։ Սակայն հայ ժողվրդական բանահիւսութեան մէջ, մոնաւանդ վիպակոն ստեղծագործութիւններում, որոնք օգտագործելով՝ պատմագիր Մովսէս Խորենացին գրել է Արտաշէս թագաւորի պատմութիւնը, պահպանուել են մի քանի պատմագիրներ Արտաշէսի մասին։ Բայ այդ վիպական հատուածների՝ Արտաշէս թագաւորի ամուսնութիւնը կապւում է ալանների գէմ նրա վարած պատերը։



Արտաշէս Ա.ի արամեատառ արձանագրութիւնը՝ զանուած նոր-թայագիտում (Հայաստանի Պետ. Պատմ. Թանգարան)։

Արտաշէսի մասին համար Այս մասին պատմուած է հետեւելը. — Երբ պարտուած ալանները բանակցում են Արտաշէսի հետ, վերջինս տեսնում է ալանների թագաւորի գեղանի գուստը Սաթենիկին, որը ինդրում է հայոց թագաւորին՝ ազտուել գերի ընկած իր եղբօրը։ Արտաշէսը սիրահարուում և փախցնում է Սաթենիկին՝ ամուսնանալու նպատակով։

Հեծաւ բաջ բագաւորն Արտաշէս սեւ գեղեցիկ ձիու վրայ։

Եւ հանեց ոսկի օլով կարմիր կաչէ պարանը,

Եւ անցաւ ինչպէս սրաբեւ արծիւ գետի միջով,

Եւ հանեց ոսկէ օլով կարմիր կաչէ պարանը,

Զգեց ալանների օրիորդի մէջէին։

Եւ շատ ցաւեցրեց փափուկ օրիորդի մէջէր,

Արագ հասցնելով երան իր բանակը։

Արտաշէսը կատարում է ճոխ հարսանիք, որի տոթիւ, նոյնպէս ժողովրդական զրոյցի մէջ, առում է, թէ «Ասկէ անձեռ էր տեղում Արտաշէսի փեսայութեան ժամանակ, մարգարիտ էր թափում Սաթենիկի հարսնութեան ժամանակ»:

Հստ նոյն վիպակսն բանահիւսութեան, Արտաշէսի մահը մեծ սուգ է պատճառում ժողովրդին, և շատերը, համաձայն տիրող հեթանոսական հաւատալիքների, ինքնակամ իրենց զոհում են նրա գերեզմանի վրայ:

Մագնեզիոյի ճակատամարտից յետոյ Փոքր Հայքը, որ
Փաքր Հայք գրեթէ ինքնուրոյն պետութիւն էր, նոյնպէս դառնում
է միանգամայն անկախ իշխանութիւն։ Այս ժամանա-
կաշրջանի վերաբերեալ մեզ մոնրամասն տեղեկութիւններ չեն հասել։
Յոյն պատմագիր Ստրաբոնը գրում է. «Փոքր Հայքը բաւական բերրի
երկիր է։ Ծոփաց նման առ էլ ունեցել է միշտ իր բնիկ իշխանները, ո-
րոնք մերթ Մեծ Հայոց բարեկամ էին և մերթ ինքնագլուխ։ Իրենց
հնագանդ էին խաղաղիք և տիբարինները, այնպէս որ իրենց իշխանու-
թիւնը տարածւում էր մինչեւ Տրապիզոն և Փարնակիա»։ 190—156 թ. թ.
յիշատակւում է Փոքր Հայքի թագաւոր Միհրդատը, որն ազգական էր
Սելեկեան թագաւոր Անտիոքոս Մեծին։ Իր երկրի սահմաններն ընդար-
ձակելու նպատակով նա յարձակումներ է գործում կապագովկիայի վրայ։
Միհրդատը և նրա յոջորդները, շարունակելով իրենց նուաճողական քա-
ղաքականութիւնը, դաշնակցում էին Պոնտական թագաւորութեան հետ։

2.— ՏԻԴՐԱՆ Բ.Ի ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Արտաշէս Ա. թագաւորի մահից յետոյ 65 տարուայ մի
Ցիգրան Բ. ժամանակաշրջան սքողուած է անյայտութեամբ։ Միայն
յիշատակւում են Արտաւազդ և Տիգրան թագաւորների
տնունները, բայց նրանց գործերի մասին ոչինչ յայտնի չէ։ Սակայն 95 թ.
սկսած՝ Մեծ Հայքում տեղի ունեցած անցուդարձի վերաբերմամբ ունենք
բաւական ստոյդ տեղեկութիւններ։ Այդ թուականին Հայաստանի թագա-
ւոր է դառնում Տիգրան Բ.ը։

Երկրորդ դարի վերջերին իրանի պարթեւական պետութիւնը հաստ
հզօրութեան բարձր աստիճանի։ Պարթեւական թագաւոր Միհրդատ Բ.ը
հողամասային մեծ նուածումներ է կատարում, իր երկրի սահմաններն
ընդլայնելով գրեթէ մինչեւ Եփրատ գետը։ Այսեղ նա ընդհարուում է
հայկական իշխանութեան հետ։ Այդ ընդհարման հետեւանքը լինում է այն,
որ Միհրդատ Բ.ը Հայաստանից յետ է խլում Արտաշէս Ա.ի նուածում գա-
ւառներից մի քանիսը և պատանդ է վերցնում թագաւորանդ Տիգրանին։
Ստեղծւում է քաղաքական մի գրութիւն, երբ Հայաստանը որոշ կախում
ունէր պարթեւական պետութիւնից։ Սակայն Տիգրանը, Հայաստանի հա-

բաւ-արեւելեան գաւառներից զիջելով Միհրդատ Բ.ին 70 հովիտ, ազատ-
ւում է պատանգութիւնից և վերադառնալով Հայստան, ժառանգում է
թագաւորական գահը՝ Պարթեւական թագաւորի քաղաքականութեան մէջ Հայստանի նկատմամբ տեղի ունեցած այդ վոփիսութիւնը պէտք է բա-
ցատրել այն ժամանակ ստեղծուած քաղաքական հանգամանքներով։ Պար-
թեւական պետութեանն արեւուտքից սպառնում էր աշխարհակալ Հռո-
մը, որն արդէն հաստատուել էր Փոքր Ասիայի արեւմտեան ծայրում և
Միջերկրական ծովի մերձակայ երկրներում։ Այստեղից Հռոմը ծաւալում
էր իր նուաճողական առաջխաղացումը դէպի արեւելք, իսկ միեւնոյն ժա-
մանակ Պարթեւական գինաստիան դժուար կացութեան մէջ էր ընկել
ներքին կոփաների պատճառով։ Այս պայմաններում Հայստանը պարթե-
ւական պետութեան համար կարող էր պաշտպանողական պատուար հան-
դիսանալ Հռոմի յարձակման դէմ։

Տիգրան թագաւորը գահ բարձրանալով, ձեռնամուխ եղաւ Հայստան-
նի (Մեծ Հայքի) պետականութեան և, մանաւանդ, ուղղմական ուժի կազ-
մակերպմանը։ Անսպառ եռանդի ու բարձր ընդունակութիւնների աէր լի-
նելով՝ Տիգրան Բ.ն իր երկարատեւ գահակալութեան ընթացքում (95—55
թ. թ.), ցուցաբերում է երկրի սահմաններն ընդարձակելու և ամրապնդե-
լու քաղաքականութիւն, ուղղմական ունակութիւն, զիւանագիտական
հմտութիւն և, վերջապէս, պետական տնտեսական ու կուլտուրական
շինարարութեան մեծ ընդունակութիւն։

Տիգրան Բ.ն առաջին հերթին իրագործում է Արտաշէս Ա.ի ծրագիրը
և գրաւում է Ծոփիքն ու ամբողջացնում Հայստանը (93 թ.), Այնուհե-
տեւ Տիգրանը Պարթեւական Պարսկաստանից յետ է խլում 70 հովիտը և
Հայստանի հարաւ-արեւմտեան մի շարք այլ վասարական երկրներ։ Այս-
պիսով, նա ո՛չ միայն վերականգնում, այլև աւելի է ընդարձակում Ար-
տաշէս Ա.ի շրջանի Հայստանի սահմանները և ամրացնում այդ դինա-
տիայի դիրքը, իւրացնելով պարթեւ թագաւորների արքայից արքայից
տիտղոսը։

Պօնտոսի Տիգրան Բ.ի թագաւորութեան ժամանակ մեծ նշանա-
կութիւն է ստանում հիւսիս-արեւմտեան կողմից Հա-
յաստանին սահմանակից Պօնտոսկան թագաւորութիւնը,
որը բռնում էր Աեւ ծովի հարաւ-արեւելեան ափերը, Այստեղ իշխում էր
Միհրդատ Պօնտացին, որը կոչւում էր նաեւ Միհրդատ Եւպատոր։ Սա
կանաւոր դէմք էր և աչքի ընկնող գեր խաղաց Փոքր ու Առաջաւոր Ա-
սիայի այն ժամանակուայ քաղաքական կեսնքում։ Հելլենիստական ողով
կրթուած, ուղղմական ու պետական մեծ ձիրքերով օժտուած՝ նա տարւում
էր քաղաքական մեծ ծրագրերով, որոնց իրագործման համար ամբողջ
կեսնքում գործում էր անսպառ եռանդով ու խիզախ ձեռնարկութիւնով։
Նրա նպատակն էր՝ Պօնտոսը դարձնել մի մեծ հելլենիստական պետու-
թիւն, որը պէտք է ընդգրկէր ամբողջ Փոքր Ասիան՝ Աեւ ու Միջերկրա-

կան ծովերի յունական կղզիների և նոյնիսկ Պալքանեան թերակղզու, այն է՝ Յունաստանի հետ միասին Սակայն այս աշխարհակալական ծրագիրն իրականացնելու ճանապարհին նու պէտք է անպայման ընդհարուել արդէն հզօր և նոյնպէս աշխարհակալական նուածումներով ապրող Հռոմի հետ, որի գերիշխանութեան տակ էին գտնուում այդ երկրները:

Միհրդատ Եւպատորն առաջին հերթին կազմակերպեց և բարձրացրեց Պոնտական թագաւորութեան ուազմական ուժը: Այսուհետեւ նա սկսեց ընդգարձակել այդ պետութեան սահմանները՝ նուածնելով և իր իշխանութեանը ենթարկելով հարեւան երկրները: Նա Պոնտական պետութեանը միացրեց նաեւ Փոքր Հայքը (112 թ.), որն այնուհետեւ այլեւս երբեք չվերականգնեց իր անկախութիւնը: Նետագայում, Հռոմի և ապա Բիւզանդիայի գերիշխանութեան ժամանակ, նա դառնում է այդ պետութիւնների հողամասի ենթակայ մարդ:

Գրաւելով Փոքր Հայքը՝ Միհրդատ Պոնտացին սահմանականից էր դառնում Մեծ Հայքին: Եւ երբ Մեծ Հայքի թագաւոր է դառնում Տիգրան Բ.ը., Միհրդատը յանձին նրա աեսնում է այն իրական ուժն ու դաշնակիցը, որի հետ միասին կարող էր իրագործել իր ծրագիրը: Եւ ահա այդ երկու հարեւան միապետաների միջեւ կնքում է գաղտնի դաշնագիր (94 թ.), ուղղուած Հռոմի և Պարթեւների դէմ: Այդ դաշնագրով Միհրդատին է վերապահուում գրաւել Փոքր Ասիայի արեւմտեան և հիւսիսային երկրները, իսկ Տիգրանին՝ նուածել Հայաստանի հարաւ-արեւմտեան երկրները: Այդ դաշինքն ամրապնդուեց նաեւ բարեկամուկան կապերով՝ Տիգրան Բ.ի ամուսնութեամբ Միհրդատի աղջկայ հետ:

Արտաքին քաղաքական հանգամանքները նպաստաւոր կերպով էին դասաւորուել երկու գաշնակիցների համար: Նրանց վտանգաւոր տիսոյեան Հռոմի այն ժամանակ ապրում էր տեւական ներքին քաղաքական ճգնաժամ: Իտալիկների ապատամբութիւնը, ազնուածեական ու զեմոկրատական հոսանքների անընդհատ քաղաքական արիւնալի պայքարը և, վերջապէս, սարուկների ապատամբութիւններն Իտալիայում, չափազնց լուրել էին հռոմէական Սենատի ուժերն ու կոշկանդել նրա քայլերը: Ուստի Հռոմը հնարաւորութիւն չէր ունենում զործն կերպով միջամտելու ասիական իրագարձութիւններին, չնայած որ հռոմէական գերիշխանութիւնը ճանաչող կամ Հռոմի դաշնակից համարուող երկրներն անզսղարդիմում էին Սենատին՝ պաշտպանութիւն ինդրելով Միհրդատի ու Տիգրանի արշաւանքների դէմ:

Համաձայն կնքուած դաշնագրի, ըստ որի Տիգրան Բ.ն աջակցելու էր Միհրդատ Պոնտացու նուածողական արշաւանքներին Փոքր Ասիայում, Տիգրանը հայկական գորքերով գրաւում է Հայաստանի սահմանակից կապագովկիան: Այս երկիրը գտնուում էր Հռոմի

հովանաւորութեան տակ և նրա թագաւորը հանդիսանում էր Հռոմի վասալը։ Հռոմէական Սենատը կարգադրում է Կիլիկիայի անթիհիւատոս Սիլլոյին՝ ետք գրաւել Կապագովկիան։ Սիլլոն իր զօրքերով անտկնկալ կերպով յարձակւում է Կապագովկիայի վրայ, նորից վերսկան գնում այստեղի թագաւորութիւնը և հայկական զօրքերին ետ մղում Եփրատի միւս կողմը։ Այդ առաջին բացայաց ընդհարումն էր Հռոմի և Հայաստանի միջեւ։ Սակայն Սիլլան չկարողացաւ շարունակել իր գործը երկու գուշնակիցների առաջխազացման դէմ, որովհետեւ նա ստիպուած էր իր բանակով՝ վերսկառանալ Հռոմ՝ այնտեղ վերսկսուած քաղաքացիական կըսուների պատճառով։

Օգտուելով այս հոմնգամանքից, Միհրդատն ու Տիգրանը վերսկսում են իրենց արշաւանքները դէպի Արեւմուտք։ Տիգրանը նորից գրաւում է Կապագովկիան, իսկ Միհրդատը՝ Բիւթանիան։ Այս յաջողութիւններից յետոյ երկու գաշնակիցները ձեռնամուխ եղան աւելի ընդարձակ արշաւանքների ժամանակը շատ նպաստաւոր էր։ Փոքր Ասիայի ժողովուրդների մէջ, որոնք հեծում և կեղեքում էին հռոմէական իշխանութեան տակ, խմորում է ապօտամբական տրամադրութիւն, որ չափազանց դիւրացնում է Միհրդատ Պոնտացու նուաճողական գործը։ Միհրդատն օգտագործեց տեղական ժողովուրդների մէջ տիրող տաելութիւնն ու թշնամութիւնը դէպի բռնակալ Հռոմը։ Նա դրգում էր փոքրասիական ժողովուրդներին կառորել հռոմայեցիներին և գրաւել նրանց գոյքը, իսկ ստրուկներին ազտառութիւն էր խոստանում, եթէ նրանք դուրս գային իրենց տէրերի դէմ և միանային ապստամբութեանը։ Բացի գրանից՝ Միհրդատը պարտքերի ոչնչացում էր խոստանում բոլոր նրանց, ովքեր կ'անցնէին իր կողմը։ Այս խոստումները մեծ արձագանք գտան Փոքր Ասիայում և Միջերկրածովեան կղզիների վրայ եղած բոլոր քաղաքներում։

Այս պայմաններում, Միհրդատ Պոնտացին, ահազին զօրաբանակի գլուխ անցած, նուաճում է ամբողջ Փոքր Ասիան, Միջերկրածովեան կղզիները և Սեւ ծովի հիւսիսային եզերքը։ Այնուհետեւ նա անցնում է Պալքանեան թերակղզին ու գրաւում Թրակիան, Մակեդոնիան և Յունաստանը։ Ամենուրեք ժողովուրդները մեծ խանգավառութեամբ դիմաւորում էին Միհրդատ Պոնտացուն, իրեւ ազատարարի։ Միհրդատի զօրավար Արքելոյուը 100 հազարնոց զօրաբանակով հաստատում է Յունաստանի Աթէնք քաղաքում։

Սակայն Միհրդատ Պոնտացին երկար չվայերից իր յաղթանակների պառուղները, Հռոմէական զօրքերը դարձեալ Սիլլոյի հրամանատարութեամբ, 87 թ. երեւացին Պալքանեան թերակղզում։ Սիլլոն մի յարք ճակատամարտերում պարտութեան մատնեց Միհրդատ Պոնտացու զօրաբանակը և վերսարին գրաւեց Յունաստանը։ Ապա նա իր զօրքերը Պալքանեան թերակղզուց տեղափոխեց Փոքր Ասիա, շարունակելով ուղմուկան գործողութիւնները Միհրդատի դէմ։ Միհրդատն ստիպուած եղած

հաշտութիւն խնդրել։ Սիլլան, որ շտապում էր վերադառնալ քաղաքացիան կոիւներից ու ներքին յուղումներից ալեկոծուող Հռոմ, հաշտութեան գաշն կնքեց Միհրդատի հետ (84թ.):

Մինչդեռ Միհրդատ Պոնտացին զբաղուած էր յաղթա-
8իգրան Բ.ի կան արշաւանքներով և ապա Սիլլայի դէմ պատե-
նուաճումները բազմելով, Տիգրան Բ.ը նոյնպէս առաջ էր տանում իր
նուաճումներն Առաջաւոր Ասիայում։ Նախ նա գրա-
ւում է պարթեւական թագաւորութեան հիւսիս-արեւմտեան մասում
գտնուող մի քանի վաստական իշխանութիւնները, ամբողջ Հիւսիսային
Միջագետքը, Կորդուաց աշխարհը և ապա իր իշխանութիւնը տարածում
է Պարսկական Ատրպատականի վրայ։ Ապոնզելով իր պետութիւնը հիւ-
սիսից, հարաւից և արեւելքից, Տիգրան Բ.ն իր արշաւանքներն ուղղում
է դէպի հարաւ-արեւմուաթք Այստեղ նա գրաւում է Օսրօննը, Արեւելեան
Կիլիկիան, Ասորիքը, Փիւնիկիան և հասնում է մինչեւ Պաղեստինի սահ-
մանները։ Տիգրան Բ.ի այդ նուաճումները տեւեցին 25 տարի և վերջա-
ցան մօտաւորապէս 70 թ.։ Այսպիսով, Տիգրան Բ.ի ժամանակ Հայաստանը
դարձաւ մի լայնածաւալ պետութիւն, որը տարածւում էր Կուր գետից
մինչեւ Պաղեստին և Ատրպատականից մինչեւ Կիլիկիա։ Նախկին Սե-
լեւկեան պետութեան մայրաքաղաք Անտիոքը դառնում է Տիգրան Բ.ի
պետութեան խոշոր կենտրոններից մէկը։ Տիգրանը հանդիսանում էր Ա-
ռաջաւոր Ասիայի այն ժամանակուայ ամենազօր թագաւորը, որի իշխա-
նութիւնը տարածւում էր մի ընդարձակ երկրի բազմատարր ու բազմա-
լեզու ժողովուրդների վրայ։

Իր նուաճումներն ամրապնդելու և լայնածաւալ պե-
8իգրան Բ.ի տութեան բազմազան ժողովուրդներին կառավարելու¹
պետական 2ինարարութիւնը համար Տիգրան Բ.ը ձեռնարկում է ծաւալուն շինա-
րարութեան և հանդէս բերում իր վարչական ու պե-
տական մեծ ընդունակութիւնները։

Տիգրան Բ.ին ամենից առաջ զբաղեցնում է պետութեան հողամասի
պաշտպանութեան հարցը։ Նա կազմակերպում է մեծ բանակ, որի մի մա-
սը բաղկացած էր վարձկան զօրքերից։ Բանակի գլխաւոր հրամանատար-
ները հայ ազնուական դասի ներկայացուցիչներն էին, մեծ մասամբ Տիգ-
րանի ազգականները։ Տիգրան Բ.ի զօրքաբանակի կազմն այսպէս է նկա-
րագրում պատմագիր Մովսէս Խորենացին։

«Ճետեւակ կռուողները ձիաւոր դարձան, պարսաւորները՝ յաջող ա-
ղեղնաւորներ, կռպալներով կռուողները զինուեցին սրերով ու տէգաւոր
նիզակներով, մերկերը պատսպարուեցին վահաններով և երկաթէ զգեստ-
ներով։ Եւ երբ նրանք մի տեղ հաւաքուէին, միայն նրանց արտաքին
տեսքն ու նրանց պահպանակների ու զէնքերի փայլմունքը բաւական էին
թշնամիներին հալածելու և վանելու»։

Արտաքին անսպակները յարձակութեարից պետութեան սահմաններն առանցվելու համար Տիգրան Բ.ը հիմունք է բղեջուրի լեներ, այն է՝ կողմնակալ իշխանութիւններ, որոնց թիւը չորս էր: Հիւսիսային սահմանի պաշտպանութիւնը յանձնուած էր Գուգարքի բդեշխին, հարաւային սահմանինը՝ Աղձնիքի բդեշխին, արեւմտեան սահմանինը՝ Մոփի բդեշխին և արեւելեան սահմանինը՝ Նոր-Շիրական գաւառի բդեշխին, որը նշանակւում էր Արծրունի նախարարական տոնմից:

Պետութեան գլուխ էր կանգնած թագաւորը, որն օժտուած էր կենտրոնաձիգ և ինքնակալ իշխանութեամբ: Միանեծ ան թագաւորն ունէր առանձին գործակալներ, այսինքն պաշտօնեաններ՝ երկրի զանազան մարզերը կառավարելու համար: Այդ գործակալները բացառապէս տեղական տատապետական իշխաններն էին, որոնք Հայաստանում կոչում էին նախարարներ:

Տիգրան Բ.ը մեծ զարկ տուեց Հայաստանի տնտեսական կեսնքի զարգացմանը: Նու մեծ ուշագրութիւն դարձրեց մասնաւորապէս առեւտրի ու արհեստների ծառալման վրայ: Առեւտրական յարաբերութիւնների զարգացման առնչութեամբ Տիգրան Բ.ը կտրում է սեփական դրամ՝ ոսկուց, արծաթից և պղնձից, իր պատկերով ու անունով և յունական գրութեամբ: Այդ գրամմերից բաւական քանակութեամբ հասել են մեզ:

Հայաստանում առեւտրուրն ու արհեստները ծաղկեցնելու նպատակով Տիգրան Բ.ն իր նուանած փոքրասիական երկրներից՝ Ասորիքից, Փիւնիկիայից և այլ վաճառաշահ վայրերից Հայաստանի կենտրոնական վայրերն էր գաղթեցնում մեծ թւով յոյներ, հրեաներ և ասորիներ: Դրանք մեծ մասամբ առեւտրականներ ու արհեստաւորներ էին, որոնք բռնի կերպով տեղափոխում և բնակեցնում էին Հայաստանի առեւտրական ճանապարհների վրայ ընկած քաղաքներում:

Տիգրանը հիմնեց մի նոր քաղաք, որը Հայաստանի մայրաքաղաք Արտաշատից յետոյ բռնում էր երկրորդ տեղը: Այդ նոր քաղաքը, որ Տիգրանի անունով կոչուեց Տիգրանակերտ և շինուած էր Արեւմտեան Տիգրիսի հիւսիսային կողմում, գարձաւ տնտեսական, առեւտրական և կուլտուրական խոշոր կենտրոն: Տիգրանակերտը շրջապատուած էր բարձր պարիսպներով, ներսում ուներ անմատչելի միջնարերգ: Թագաւորական շքեղ ապարանքը կառուցուած էր քաղաքի պարիսպներից դուրս՝ շրջապատուած այգիներով, ձկնառատ աւազաններով և յատուկ պուրակներով, որոնք հարուստ էին որսի կենդանիներով: Հին յունական պատմագիրները նկարուգրում են Տիգրանի այդ երկրորդ մայրաքաղաքը որպէս հոյակապ, շքեղ, բազմամարդ, գեղեցիկ ու հարստութիւններով լի քաղաք:

Տիգրան Բ.ի թագաւորութեան սկզբնական շրջանում, 25 տարի շարունակ, Հայաստանը պետականօրէն, անտեսապէս ու կուլտուրապէս ծաղկում և գարգանում էր, վայելելով տափանով ու խաղաղ կեանք:

Իր պետական, վարչական, տնտեսական ու ռազմական յաջողութիւն-

Ների համար էին պատմագիրների գրուածքներում և ժողովրդական աւանդութիւններում նա անուանւում է Տիգրան Մեծ:

Տիգրան Բ.ի և Միհրդատ Պոնտացու նուանումներն ու Լուկուլլոսի վարած քաղաքականութիւնը, անշուշտ մեծ հարուած արշաւանքները էին հասցնում Հռոմի ազդեցութեանը և աշխարհական դիրքին Առաջաւոր Ասիսյում: Հռոմը կաշկանդուած լինելով Խոտիխայում բռնկած ներքին ապստամբութիւններով և արիւնանեղ քաղաքացիական կոփեներով, ստիպուած էր առժամանակ համբերութեամբ տանել քաղաքական պարտութիւնն ու նուաստացումն Ասիսյում: Սակայն, երբ Հռոմում ներքին ապստամբական յուզումները ճնշուելուց յետոյ տիրեց քիչ թէ շատ կայուն քաղաքական դրութիւն, Սենատը նորից իր ուշադրութիւնը դարձրեց ասիսկան գործերին:

Հռոմէական Սենատն շտապ կերպով Արեւելք է ուղարկում Լուկուլլոս զօրավարին՝ մեծ բանակով, որովհետեւ Միհրդատ Պոնտացին խախտել էր Սիլլոյի հետ կնքած դաշնագիրն ու նորից գրաւել փոքրասիսկան մի քանի երկրներ և միացրել իր պետութեանը: Հռոմայիցիների և պոնտական զօրքերի միջեւ սկսում է նոր պտտերազմ, որը պատմութեան մէջ յայտնի է «Միհրդատեան երկրորդ պտտերազմ» անունով:

Լուկուլլոսը մի քանի ճակատամարտերում պարտութեան մատնեց Միհրդատին: Հռոմէական զօրավարը ետ խլեց Միհրդատի գրաւած փոքրասիսկան երկրները և վերականգնեց Հռոմի գերիշխանութիւնը. Նա նուանեց նոյնիսկ Պոնտական թագաւորութիւնն ու Փաքը Հայքը: Միհրդատը փախուստ տալով դէպի Հայաստան՝ հազիւ կարողացաւ գրկել իրեն, Սակայն Տիգրան Բ.ը զի՞ ական աջակցութիւն ցոյց չտուեց իր դաշնակցին և թոյլ չտուեց նրան իր մօտ գտլու. միայն կարգադրեց պատսպարելու նրան Հայաստանի արեւելեան ամրոցներից մէկում: Այդ քայլն անելով՝ Տիգրան Բ.ը կարծում էր, թէ կարելի կը լինի խուսափել Հռոմի հետ ընդհարուելուց: Սակայն նա սխալուեց այդ հարցում:

Յաղթանակներով տարուած փառամոլ Լուկուլլոսն օգտագործեց ըստեղծուած դրութիւնը: Նա, Սենատի կողմից լիազօրուած չինելով պտտերազմելու Տիգրան Բ.ի դէմ, իրաւունք չունէր արշաւելու Հայաստան: Սակայն նրա համար պատեհ առիթ ծառայեց այն հանգամանքը, որ Միհրդատն ապաստան էր գտել Հայաստանում: Նա յատուկ դեսպան ուղարկեց և պահանջեց Տիգրանից՝ Միհրդատ Պոնտացուն յանձնել իրեն (70 թ.



Տիգրան Բ.ի ոսկեդրամը
(Բրիտանական թագարան):

մեր թ. ա.)։ Հայոց թագաւորը մերժեց այդ պահանջը. այս մերժումը պատրուակ դարձաւ Լուկուլլոսի համար Հայոստանի վրայ արշաւելու։

Տիգրան Բ.Ն ուշաղրութիւն չէր դարձնում Լուկուլլոսի սի սպառնալիքներին. հաւատացած լինելով, որ Հռոմի Սենատը տրամադիր չէ Հայոստանի զէմ պատերազմելու։ Ուստի նա պատերազմական պատրաստութիւն չտեսաւ, իսկ Լուկուլլոսը, ընդհակառակը, գրեթէ մի ամբողջ տարի գաղանի զբաղուած էր իր ծրագրած պատերազմի պատրաստութիւններով։ Միայն այն ժամանակ, երբ Լուկուլլոսը, գրաւելով Պոնտական թագաւորութեան մեծ մասը, պատրաստ էր արշաւելու Հայոստանի վրայ, Տիգրանը համոզուեց, որ պատերազմին անխուսափելի է Նա իր մօտ հրաւիրեց Միհրդատ Պոնտացուն, որին մինչ այդ հեռու էր պահում իրենից, և նրա հետ միասին կազմեց ուազմական գործողութիւնների ծրագիրը։ Որոշուեց չսպասել հռոմայեցիների յարձակմանը, այլ անմիջապէս պատերազմական գործողութիւններ սկսել նրանց դէմ։

Սակայն Լուկուլլոսը, կանխելով իր հակառակորդներին, միանգամայն անսպասելի կերպով անցաւ Եփրատը և մտաւ Ծոփք։ Այստեղից նա շտապեց գէպի Տիգրանակերտ, նպատակ դնելով այդտեղ ճակատամարտի բռնուել Տիգրանի հետ։ Այդ առաջխաղացման արագութիւնը վճռուկան հետեւանք ունեցաւ Լուկուլլոսի յաջողութիւնների համար։ Հռոմէական զօրքի այդ առաջխաղացումը կասեցնելու համար Տիգրանը մի փոքր զօրաբաժին ուղարկեց նրա դէմ Մեհրուման զօրավարի հրամանատարութեամբ, որը, սակայն, պարառութիւն կրեց։ Տիգրանն իր բանակով շտապ հեռացաւ Տիգրանակերտից, նպատակ ունենալով համախմբելու և կազմակերպելու իր ուժերը՝ վճռական ճակատամարտ տալու համար։

Տիգրանակերտի պաշտպանութիւնը յանձնուած էր Մանկէ զօրավարին, որի արամագրութեան տակ եղած զօրքի զգալի մասը վարձկան էր։ Հռոմէական բանակը օգտուելով նպատաւոր հանգամանքից, պաշտեց Տիգրանակերտը։ Տիգրանը տեսնելով արքունի գանձերին ու հորէմին սպանացող վտանգը, իր բանակից մի զօրագունդ է ուղարկում, որը ճեղքելով հռոմէական բանակը, մտնում է Տիգրանակերտ և դուրս բերում հարէմն ու գանձերի մի մասը։

Տեսնելով, որ Տիգրանակերտի զրաւումը ձգձգւում է, Լուկուլլոսը որոշեց իր բանակի մի մասը թողնել Տիգրանակերտի պաշտաման համար, իսկ միւս մասով հետապնդել Տիգրանին։ Վերջինիս բանակը շուտով հանդիպեց Լուկուլլոսի զօրքերին։ 69 թ. Հոկտեմբերի 6ին տեղի ունեցաւ երկու հոկտեմբերդակորդների ճակատամարտը, որտեղ հայոց զօրքը պարտուեց։ Նահանջի ճանապարհին Տիգրանը հանգիպեց Միհրդատ Պոնտացուն, որը նրան օգնութեան էր գալիս։ Տիգրանը Միհրդատի հետ մի սիին ձեռնարկեց նոր բանակ կազմելու։

Զնայած Տիգրանակերտի անառիկ ամրութիւններին և հայկական զօր-

քերի հերոսական դիմոգրութեանը՝ այնուամենայնիւ Լուկուլլոսին յաջողուեց գրաւել բազաքը՝ շնորհիւ կաշառուած յոյն բնակչութեան դաւաճանութեան։ Լուկուլլոսը կրտկի մատնեց և կողոպտեց քաղաքը, միայն ինքն արքունի գանձարանից յափշտակեց 8000 տաղանաւ (մօտ 15 միլիոն ուռերլի՝ ոսկով), քաղաքացիների հարստութիւնների մեծ մասն էլ ընկաւ հոռմէական զինուոյնների ձեռքը։

Տիգրան Բ.ի պարտութիւնը և հոռմէական զօրքի յաղթանակը մեծ ազգեցութիւն ունեցան Առաջաւոր Ասիայի ժողովուրդների քաղաքական տրամադրութեան վրայ՝ Լուկուլլոսի նուտածած մի շարք երկրներ՝ Կորդովուքը, Հիւսիսային Միջազգետքի մեծ մասը, Կոմագենը, Ասորիքը և Արեւելեան Կիլիկիան անջատում են Տիգրանի պետութիւնից։

Նրան հաւատարիմ է մնում միայն Միջազգետքի մի մասը՝ Մծրին քաղաքով, որտեղ իշխում էր Տիգրանի եղբայրը Սոկայն ատկաւին կանգուն էր բուն Հայաստանը, որտեղ հոռմէական լեգէոնները զեռ ոտք չէին դրել։

Լուկուլլոսը շարժւում էր չափազանց զգոյց։ Տիգրանակերտի գրաւումից յետոյ նու իր յաղթական լեգէոններով չհատազնդեց Տիգրանին և չմտաւ բուն Հայաստանին ներսը, այլ քաշուեց Կորդովաց աշխարհը՝ ձմեռելու. այստեղ նու կարող էր օգտուել հացի առաստ պաշարներից։ Իսկ Տիգրան Բ.ը և Միհրդատ Պոնտացին այդ ձմեռուայ ընթացքում տենդորէն պատերազմի պատրաստութիւններ էին տեսնում — զօրք էին հաւաքում, զէնքի և ուտեսատի պաշարներ կուտակում, ամրութիւններ կառուցում և ժողովրդական մասսաներին համախմբում։ Հոռմի զէմ կոռուելու համար Նրանք այժմ ծրագրում էին թշնամու դէմ զուրս գալ ո՞չ թէ բաց դաշտում, մեծ ճակատով, այլ առանձին, չեշտակի հարուածներով նեղել և թուլացնել հոռմէական զօրքը, ինչպէս և դժուարացնել նրա պարենաւորումը։ Այսպիսի տակտիկայի համար միանգամայն նպաստաւոր էին Հայաստանի աշխարհագրական պայմանները։

Տեսնելով, որ Տիգրանը ո՞չ հաշտութեան առաջարկ է անում և ո՞չ էլ նախայորձակ լինում, Լուկուլլոսը 68 թ. ամառը գուրս եկաւ Կորդովաց աշխարհից և շարժուեց զէպի Հայոստանի խորքերը։ Նպատակ գնելով գրաւելու Արտաշատ մայրաքաղաքը, Լուկուլլոսի այս առաջիազգացումը հանդիպեց մեծ գժուարութիւնների ու խոչընդուների։ Տիգրանն իր հեծելազօրով շարունակ յարձակումներ էր գործում հոռմայեցիների վրայ. Նեղում և շարունակ լարուած գրութեան մէջ պահում նրանց, իսկ Միհրդատն էլ հետեւազօրով յարձակումներ էր գործում թեւերից կամ թիկունքից։ Հոռմէական բանակը մեծ դժուարութիւններ էր կրում նաեւ պարենաւորման գործում։

Սակայն ամենից գլխաւորն այն էր, որ Լուկուլլոսն այս արշաւանքում գործ ունէր ոչ թէ Տիգրանի վարձկան և վասարական իշխանութիւնների զօրքերի հետ, որոնք հեշտութեամբ լքում և անցնում էին հոռմայեցիների կողմը, այլ աեղական բնակչութեան հետ։ Հայ ժողովուր-

գը բնաւ տրամադիր չեր օտար նուաճողների կեղեքումներին ու ճնշումներին ենթարկուելու և Հռոմի ընչաքաղց զինուորների աւարի առարկայ դառնալու Նապատասա էր իր հողն ու հայրենիքը պաշտպանելու նուաճողների զութումից։ Ուսաի հոռմէական բանակն ստիպուած էր Հայաստանի ձորերում ու լեռներում պաշտպանուել նաեւ ժողովրդի անդաղար յարձակումներից և նեղուել ընդհանրապէս մասսայական թշնամական վերաբերմունքից։

Լուկուլլասի բանտին ընկաւ խիստ ծանր վիճակի մէջ։ Զօրաբանակում մարդկանց պարէնի և ձիերի կերի մեծ կարիք էր զգացում։ Հիւանդութիւնները տարածում էին, անտիին թւով ծանր հիւանդներ ու սպանուածներ կային, որոնք խոցուել էին հայկական զօրքի թունաւոր նետերից։ Հռոմէական զօրքի մէջ մեծ դժորութիւն էր խմորում, մասնաւոդ որ պատերազմը խիստ երկարում էր, և նրա վերջը չէր երեւում։ Դրութիւնն է՛լ աւելի ծանրացաւ, երբ ժամանակից շուտ վրայ հսկաւ աշնան և ձմրան ցրտերն ու ձիւնը։

Հանդիպելով հայկական զօրքերի ուժեղ դիմադրութեանը, Լուկուլլոսն ստիպուած եղաւ դադարեցնել արշաւանքը և նահանջել Վերադարձին նա պաշտրեց և գրաւեց Մծրին քաղաքը, որն իր փոքրաթիւ զօրքով քաջութեամբ և յամառօրէն պաշտպանուում էր Տիգրան Բ.ի եղբայր Գուրասի գլխաւորութեամբ։ Այստեղից Լուկուլլոսը շարունակեց իր նահանջը դէպի Կիլիկիա, խիստ նեղուելով անգագուր հետապնդումից։

Տիգրան Բ.ի եւ Միհրդատի նոր յաղրանակները Օգտուելով Լուկուլլոսի դժուար կացութիւնից, Տիգրան Բ.ը և Միհրդատ Պոնտացին դիմեցին յարձակուցական դործողութիւնների Տիգրանն իր զօրքով անցաւ Կապադովկիա, նախապէս ոչնչացնելով և սրիքոցելով Հայաստանում գտնուող հոռմէական զօրամասերը։ Միհրդատն էլ հայկական զօրքերով յարձակուեց Պոնտոսի վրայ Ազտատգրական պատերազմ էր յայտարարուած։ Ապստամբ ժողովուրդն ամենուերեք անինայ կոտորում էր հոռմայեցիներին, որոնք, անարեկուած, փախուստի էին դիմում իրենց կեանքը փրկելու համար։ Այսպիսով, Տիգրանը ետ խլեց Լուկուլլոսի նուաճած մարզերը, իսկ Միհրդատը նորից գրաւեց իր Պոնտական պետութիւնը։

Լուկուլլոսի այդ ռազմական անյաջողութիւնները, նրա դէմ յարուցուած բազմաթիւ գանգաւաները և մանաւանդ լեզէոնների սուր դժութիւնները դրդեցին Հռոմի Սենատին՝ պաշտօնանկ անել նրան և ետ կանչել Հռոմ։

Պամպիոս- Տիգրան Բ.ի և Միհրդատ Պոնտացու յաղթանակները
Միհրդատանա երկար չաեւեցին։ Հռոմը չէր կարող հանդուրժել, որ
իր նեղինակութիւնը վարկարեկուի ասիական ժողովութիւնների աշքում, և Պոնտական պետութիւնն ու Հայաստանը քաղաքականապէս ուժեղացման հետեւան-

քով այդ երկրները շարունակ սպառնալու էին Հռոմի նուտճողական առաջխաղմանը Փոքր Ասիայում և Առաջաւոր Ասիայում։ Հռոմի Սենատը կուկուլոսին ազատեց Ասիայում գործող հռոմէական բանակի հրամանատարի պարտականութիւններից, նրա փոխարքն նշանակեց զօրավոր Պոմպէոսին, յանձնաբարելով սրան վերականգնել հռոմէական գերիշտանութիւնն Արևելքում։


Համնելով Փոքր Ասիա՝ Պոմպէոսն սկսեց ռազմական պատրաստութիւններ տեսնել։ Նախ քան Միհրդատ Պոնտացու և Տիգրան Բ.ի դէմ պատերազմական գործողութիւններ սկսելը, Պոմպէոսը բանակցութիւններ վարեց պարթեւական թագաւորի հետ և կարողացաւ ո՛չ միայն չեզքացցնել նրան, այլեւ Պարսկաստանը գարձնել Հռոմի գաշնակից և Հայաստանի վտանգաւոր հակ սռակորդ՝ նրա թիկունքում։ Ապա Պոմպէոսն իր լեզչուններով շարժուեց Պոնտական թագաւորութեան վրայ Զափականց զգոյշ ռազմական գործողութիւններով և իր գերազանց ուժերով Պոմպէոսը կատարեալ պարտութեան մատնեց Միհրդատին և գրաւեց ամբողջ Պոնտական պետութիւնը։ Միհրդատն օգնութիւն խնդրեց Տիգրան Բ.ից, բայց մերժում ստացաւ, որովհետեւ այդ ժամանակ Տիգրանը պատերազմի մէջ էր պարթեւնների հետ։ Կորցնելով իր բոլոր յօյսերը, Միհրդատը փախուստի դիմեց դէպի իր Բոսֆորեան երկրները և այստեղ ինքնասպանութեամբ վերջ տուեց իր կեանքին (63 թ.)։ Պոնտական թագաւորութիւնը վերացաւ և երկիրը գարձաւ հռոմէական մի սովորուկան նահանգ։

Մինչ Պոմպէոսն զրադուած էր Միհրդատի դէմ կռուելով՝ պարթեւական թագաւորն օգտուելով յարմար առիթից, թշնամական գործողութիւններ սկսեց Տիգրան Բ.ի դէմ։ Նո ձգտում էր Հայաստանի գահը յանձնել Տիգրան Բ.ի որդի և իր փեսայ Տիգրան կրտսերին, որը Պոմպէոսի դրդումով ապստամբել էր հօր դէմ։

Ահա այդ ժամանակ Պոմպէոսը, վերջացնելով իր արշաւանքը Միհրդատի դէմ, արշաւեց Հայաստանի վրայ՝ դէպի Արտաքսի հովիտը։ Տիգրան Բ.ը տեսնելով հռոմայեցինների յաղթական առաջիւղացումն ու Պոնտական թագաւորութեան տիտուր վախճանը, վասնգուած լինելով պարթեւական թագաւորի թշնամութիւնից ու իր ապստամբ որդու՝ Հռոմի կողմից կաշտուուծ Տիգրան կրտսերի դաւաճանական գործողութիւններից և յօյ չունենալով, թէ դրաից որեւէ օգնութիւն կարող է ստանալ. զերսպասեց հաշտութեան առաջարկ անել Պոմպէոսին և այդպիսով փրկել Հայաստանը։

Պոմպէոսն ընդունեց Տիգրան Բ.ի այդ առաջարկը, և սկսուեցին հաշտութեան բանակցութիւնները։ Երբ երկու կողմերը եկան փոխադարձ համաձայնութեան, Տիգրան Բ.ը գալով Պոմպէոսի բանակը, հաշտութեան դաշնագիր կնքեց նրա հետ (65 թ. մեր թ. ա.): Հաշտութեան պայմանների համաձայն՝ Տիգրանին մնում էր բուն Հայաստանը, Կորդուաց աշ-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԻԳՐԱՆ Բ.Ի ԺԱՄԱՆԱԿ



խարբնը և Հիւսիսային Միջագետքը՝ Տիգրանը պահում էր «արքայից արքայ» տիտղոսը և ճանաչում էր «Հռոմի դաշնակից»։ Հայ թագաւորները պարտաւորում էին պատերազմի ժամանակ իրենց զօրքերով օգնութեան գալ Հռոմին։ Տիգրանը պատերազմական տուգանք պէտք է վեճարեր 6000 տաղանտ (մօտ 12 միլիոն ռուբլի՝ ոսկով)։

Առժամանակ դադարեց հայ-հռոմէական պատերազմը, իր կեանքի վերջին տարիները Տիգրան Բ.Ն. ամբողջովին նուիրեց իր երկրի ներքին շինարարութեանն ու խաղաղ զարգացմանը։

3. — ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՇԻՍԵԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՑԻ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Տիգրան Բ.ին յաջորդեց նրա որդի Արտաւազդը (55—
Արտաւազդ Բ. 33 թուականներին), Սա յունական կրթութիւն էր ըստացիւ և սիրահար էր յունական փիլիսոփայութեան, գեղեցիկ գրականութեան ու թատրոնի։

Արտաւազդ Բ.ի թագաւորութեան սկզբնական շրջանում, երբ Պոնտական պետութիւնն ընկնծուած էր Հռոմի Կողմից, իսկ Հայաստանը կորցըրել էր Տիգրան Բ.ի ժամանակուայ միջողգային քաղաքական նշանակութիւնը, Հռոմն Արեւելքում իր գլխաւոր հակառակորդ էր համարում Պարթեւական Պարսկաստանը, որն այդ ժամանակ մի հզօր պետութիւն էր և Հռոմի մրցակիցն էր գարձել Արեւելքում։ Պարսկաստանի հզօրունալուն նպաստել էր հէնց Հռոմի նախկին քաղաքականութիւնը, որով նա ձգուած էր թուլացնել, թերեւս նաեւ ոչնչացնել Միհրգատ Պոնտացու և Տիգրան Բ.ի աշխարհակալութիւնը և նրանց մրցումը Հռոմի գերիշխանութեան դէմ։

Հռոմի ու Պարթեւական Պարսկաստանի միջեւ ծագոծ այս պայքարը չափազանց վտանգաւոր էր գործնում Հայաստանի գրութիւնը։ Հայկական բարձրաւոնդակը, որպէս ռազմա-սարատեգիական խոշոր նշանակութիւն ունեցող մի երկիր, պատերազմի թատերաբեմ էր ծառայելու նըրանց համար։

Կրասոսի այդ ժամանակ ներքին քաղաքական պայքարը Հռոմում նորից էր սրուել։ Զնայած որ Սենատն էր հոսքական հասարակապետութեան գերագոյն իշխանութիւնը, բայց Պոմպէոսը, Յուլիոս Կեսարն ու Կրասոսը (60 թ. մեր թ. ա.) փաստորէն իրենց ձեռքում կենարոնացրին ամրող իշխանութիւնը։ Նըրանք կազմեցին եռավելաւրիւն և իրենց միջեւ բաժանեցին ամրող պետութեան կառավարումը։ Կրասոսին բաժին էր ընկել Արեւելքը։ Նա մեծ գորքով շտապեց Ասիա և իր ձեռքն առաւ նուածուած բոլոր երկրների կառավարման գործը (53 թ.)։ Կրասոսը նպատակ էր դրել Հռոմի սահմաններն արեւելեան կողմից ընդարձակել ի հաւիւ պարթեւների և առիթ

էր որոնում ընդհարուելու նրանց հետ կրասոսը . օգտուելով պարթեւ-ների ներքին թուլութիւնից, պատերազմ յայտարարեց նրանց . այդ ժա-մանակ պարթեւների թագաւորն էր Վորոդէս Ա. ը: Արտաւազդ Բ. ը, հա-մաձայն իր հօր՝ Տիգրան Բ. ի կնքած գաշնազրի (65 թ.), պարտաւոր էր օգնել կրասոսին:

Վորոդէսն իր բանակը Սուրէն զօրավարի հրամանատարութեամբ ու-զարկեց հոռամայեցիների դէմ, իսկ ինքը մի այլ բանակով արշաւեց Հա-յաստանի վրայ: Այս հանգամանքն ասիթ առևեց Արտաւազդ Բ. ին խոս-տացուած օգնական զօրքը չուղարկել կրասոսին: Իր այս վարմունքը հա-յոց թագաւորը պատճառաւրանում էր նրանով, որ ստիպուած էր իր եր-կիրը պաշտպանել պարթեւների յարձակումից: Սակայն, երբ զայրացած կրասոսն սպառնաց Արտաւազդին, վերջինս անցաւ Վորոդէսի կողմը, դաշն կնքեց նրա հետ և այդ քայլով չեղեալ համարեց Հռոմի հետ իր հօր կնքած գաշնազրիը: Նոր գաշինքն ամրապնդուեց նրանով, որ Արտաւազդի քոյրն ամուսնացաւ Վորոդէսի որդի Բակուրի հետ:

Արտաւազդ Բ. ի քաղաքական նպատակն էր վերականգնել իր հօր՝ Տիգրան Բ. ի հզօր հայկական պետութիւնը: Ուստի նա բնաւ տրամադիր չէր նպաստելու Հռոմի յաղթանակներին, որոնց հետեւանքը լինելու էր այն, որ Հայաստանը զրկուելու էր ինքնուրոյնութիւնից: Եթէ սկզբնե-րում Արտաւազդն ստիպուած էր առերես հաշտուղական քաղաքականու-թիւն վարել Հռոմի նկատմամբ, ապա այժմ, երբ Հայաստանի ու պար-թեւական Պարսկաստանի շահերը զուգուգիպում էին ընդէմ Հռոմի, նա գերազասում էր Հռոմին հակառակ քաղաքականութիւն վարել: Արտաւազդի հակառամէական քաղաքականութիւնը բացատրում է նաեւ նրանով, որ Հայաստանն իր կուլառուրական, կենցաղային ու քաղաքական կապերով, գեռեւս Աքեմենեանների ժամանակներից սկսած, աւելի մօտ էր կանգնած Պարսկաստանին. հայ ժողովուրդը ոչ մի հակում չէր ցուցաբերում դէպի Հռոմը: Վերջինս իր աշխարհակալական ու գիշատիչ քաղաքականու-թեամբ ճնշում, կողոպտում ու շահագործում էր նուածած երկրները և դրանով միայն հակակրանք ու ատելութիւն առաջացնում իր դէմ: Այս մասին հռոմէական պատմազիր Տակիտոսը գրում է. «Հայերն իրենց երկ-րի դիրքով, բարքերի նմանութեամբ աւելի մօտ են պարթեւներին և խնամիական կապերով կապուած են նրանց հետ»:

Կրասոսը, արհամարհելով ռազմական արշաւի ուղղութեան վերաբեր-եալ իր ժամանակին Արտաւազդի տուած խորհուրդները, յաւակնոտ մե-ծամտութեամբ շարունակեց իր արշաւանքը Միջագետքի անապատներով: Եղեսիա քաղաքի մօտերքը պարթեւական հեծելազօրը շրջապատեց հռո-մէական զօրքը և սոսկալի ջարդ տուեց նրան: Այդ կաւում սպանուեց նաեւ կրասոսը, նրա կտրուած գլուխն ու ձեռքը Սուրէն զօրավարն ու-զարկեց Վորոդէսին, որն այդ ժամանակ զանւում էր Հայաստանում և Արտաւազդի հետ միասին մասնակցում էր իր որդու՝ Բակուրի և Արտա-ւազդի քրոջ հարսանեկան հանդէսին: Երբ Սուրէնի դեսպանը մտնում է

դահլիճ և նրանց առաջ գնում կրասոսի արիւնոտ գլուխն ու ձեռքը, անհուն հրճուանք և բուռն ոգեւորութիւն է առաջանում հանդիսական-ների մէջ:

Պարթեւները, ոգեւորուած իրենց յաղթանակից, շարունակում են ռազմական գործողութիւնները, որոնց մասնակցում էին նաեւ Արտաւազդի զօրքերը, Պարթեւները գրաւում են Ասորիքը (Սիրիան), Փիւնիկիան և նոյնիսկ Հրէասանը, որոնք գտնում էին Հռոմի գերիշանութեան տակ:

Այդ պատերազմի հետեւանքով Ծոփքը, որ 65 թ. գաշնագրով անջատուած էր Հայաստանից, նորից միացուեց նրան: Արտաւազդը մեծ թւով գերիներ ու ահագին քանակութեամբ տւար ձեռք բերեց:

Այդ միջոցին Հռոմը նորից ներքին քաղաքական կոիւների ասպարէզ էր դարձել և հնարաւորութիւն չունէր պայքարելու պարթեւների դէմ: Երբ կազմուեց երկրորդ եռապետութիւնը, Արեւելքը բաժին ընկաւ Աստոնիոսին, որը մեծ բանակով այդտեղ եկաւ պարթեւների դէմ կոռուելու համար:

Անտոնիոսի արշաւանքն սկսեց
արշաւանքը Կիլիկիայում դէմ իր արշաւանքն սկսեց Կիլիկիայից: Նա իր տրամադրութեան տակ ունէր ուժեղ բանակ, որը կազմուած էր մօտ 100,000 մարտիկներից: Աստոնիոսը, սակայն, Կիլիկիայում պատահելով եղիպտական թագուհի Կլէոպատրային, յափշտակում է նրա գեղեցկութեամբ և նրա հետ ամուսնանալով, գնում է եղիպտակի մայրաքաղաք Ալեքսանդրիա: Անտոնիոսը, փոխանակ իր անմիջական պետական պարտականութիւնները կատարելու, անձնատուր է լինում Կլէոպատրայի սիրուն, իսկ պարթեւների դէմ պատերազմ վարելու գործը յանձնարարում է իր զօրավար Վէնտիգիոս Բասսոսին (38—37 թ. թ.), որը պարթեւներին ջարդում և գրաւում է Ասորիքը: Այս յաղթութիւնը որոշ չափով վերականգնում է Հռոմի նսեմացած հեղինակութիւնն Արեւելքում: Սակայն պարթեւները տակաւին խորտակուած չէին: Նրանք դեռ ամուր էին Պարսկաստանում և ռազմական պատրաստութիւններ էին տեսնում ուժեղ դիմադրութիւն ցոյց տալու հռոմայեցիներին: Անտոնիոսը, ցանկանալով իրեն վերապահել յաղթութեան գափնիները, հեռացրեց Վէնտիգիոս Բասսոսին և ինքն անձամբ գլխաւորեց հռոմէտական բանակը: Նա մեծ զօրքով, որին ակամայ միացել էր նաեւ Արտաւազդ թ.ն իր բանակով, Հայաստանի վրայով շարժուեց դէպի Պարսկաստան (36 թ. մեր թ. ա.): Սակայն, մեծ յաղթանակներ ակնկալով փառամոլ Անտոնիոսն



Արտաւազդ թ.ն ըստ դրամի թիւն ցոյց տալու հռոմայեցիներին: Անտոնիոսը, ցանկանալով իրեն վերապահել յաղթութեան գափնիները, հեռացրեց Վէնտիգիոս Բասսոսին և ինքն անձամբ գլխաւորեց հռոմէտական բանակը: Նա մեծ զօրքով, որին ակամայ միացել էր նաեւ Արտաւազդ թ.ն իր բանակով, Հայաստանի վրայով շարժուեց դէպի Պարսկաստան (36 թ. մեր թ. ա.): Սակայն, մեծ յաղթանակներ ակնկալով փառամոլ Անտոնիոսն

Ատրպանականում, Ուրմիոյ լճի հարաւային կողմում, չարաչար պարագուեց և ստիպուած եղաւ մեծ կորուսաներով նահանջել Հայաստան Այստեղից նա շտագ վերադարձաւ Ալեքսանդրիա և Հռոմի Սենատին ուղղուած զեկուցագրի մէջ իր պարտութեան պատճառը վերագրեց Արտաւազդ Բ.ին:

Յ.Անկոնալով իր պարաւթեան վրէժը լուծել Արտաւազդից և նոր յաղթանակով բարձրացնել իր հեղինակութիւնը, Անտոնիոսը ձեռնարկում է երկրորդ արշաւանքին, այս անգամ արդէն դէպի Հայաստան (33 թ. մեր թ. ա.), բայց զգալի յոջողութիւն չի ունենում: Նո կարողանում է միայն մի քանի քաղաքներ աւարի մատնել. կողոպտում է նաև Եկեղեց գաւառի Երիգա աւանի (այժմ՝ Երզնկա) Անտիփաթի տաճարի անագին հարստութիւնները, որոնց թւում նաեւ այդ գիցունու ոսկեձոյլ արձանը: Անտոնիոսը նենգօրէն ձերբակալում է Արտաւազդ Բ.ին և զդթայակապ, իր ընտանիքի հետ միասին, որպէս յաղթանշան, տանում է Ալեքսանդրիա: Հետագայում Արտաւազդ Բ.ը բանտ է նետում և տպա Կլէոպատրայի ու Անտոնիոսի հրամանով գլխատուում (31 թ. մեր թ. ա.):

Անտոնիոսի դաւաճանական արարքն առիթ եղաւ, որ
Արտաշէս Բ. հայերն ապստամբեն Հռոմի գէմ. հայերի կողմից թագաւոր հռչակուեց Արտաւազդ Բ.ի որդի Արտաշէս Բ.ը (33—20 թ. թ.): Սա խիգախ ու գործունեայ թագաւոր էր: Իր հօր սպանութեան վրէժինքութեամբ լցուած, Արտաշէսը կոտորել տուեց Հայաստանում գանուղի հռոմէական կայազօրները և վերականգնեց երկրի անկախութիւնը:

Հռոմի խախտուած դիրքի վերականգնումն Արեւելքում՝ այս անգամ արդէն վիճակուեց Օկտավիանոսին, որը, ոչնչացնելով Անտոնիոսին, դարձել էր Հռոմի առաջին կայսը՝ Օգոստոս անունով (30 թ. մեր թ. ա.):

Օկտավիանոսը, խուստիկելով պատերազմներից՝ չափազանց զգոյն ու խորամանկ քաղաքականութիւն էր վարում Արեւելքի նկատմամբ: Նո ստիպուած եղաւ հաշտուել այն մտքի հետ, որ Արտաշէս Բ.ն անկախ թագաւորի Հայաստանում, պահելով «առքայից արքայ» տիտղոսը, միայն թէ ձեւականօրէն ճանաչի Հռոմի գերիշխանութիւնը: Միեւնոյն ժամանակ Հռոմը գաղտնի դիւանագիտական միջոցառութեամբ ներքին յուզումներ ու գաւադրութիւններ էր կազմակերպում արեւելեան թագաւորութիւններում: Հայաստանում էլ այսպիսի գաւադրութիւն կազմակերպուեց հռոմէասէր սզնուականների կողմից, որոնց ձեռքով սպանուեց Արտաշէս Բ.ը:

Արտաշէս Բ.ի սպանութիւնից յետոյ Օկտավիանոսը Հայաստանի թագաւոր դարձրեց Արտաւազդ Բ.ի որդի Տիգրան Գ.ին, որին Օկտավիանոսը, Արտաւազդի սպանութիւնից յետոյ, Ալեքսանդրիայից տարել էր Հռոմ և գաստիարակել հռոմէական ոգով: Այսպիսով, Հայաստանը փաստորէն

դառնում է Հռոմին վասար պետութիւն։ Հռոմէական բանաստեղծները ներբողներ էին ձօնում Հայաստանը Հռոմին միացնելու առթիւ և Հռոմում նոյնիսկ յատուկ դրամ են կարում Օկտուբրանոսի պատկերով ու և Հայաստան պարտուածա մակագրութեամբ։

Տիգրան Գ.ից յետոյ թագաւորում է նրա որդի Տիգրան Դ.ը՝ իր քոյր Երատոյի հետ միասին։ Սրանք վարում էին ինքնուրոյն քաղաքականութիւն, առանց ճանաչելու Հռոմի գերիշխանութիւնը։ Օգոստոս կայսրը, չհանգուրժելով Հայաստանի այդ ինքնուրոյնութիւնը, զօրքեր է ուղարկում Հռոմի գերիշխանութիւնը վերականգնելու համար։ Տիգրան Դ.ը և Երատոն անցնում են պարթեւների մօտ և նրանցից օգնական զօրք ստանալով, հռոմայեցիներին դուրս են քշում Հայաստանից ու նորից կանգնում Հայաստանի իշխանութեան գլուխ։ Բայց յետոյ, Հռոմի դաւադրական գործողութիւնների հետեւանքով, Տիգրան Դ.ն սպանում է կովկասեան լեռնցիների դէմ մղած կռւում։ Տիգրան Դ.ի մահով Արտաշիսեան դինաստիայի թագաւորական իշխանութիւնը Հայաստանում իսպառ վերջանում է (1 թ. մեր թ.)։

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՆ ԱԲՏԱՇԻՍԵԱՆ ԹԱԳԱՒԹՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Տիրապետող Արտաշիսեան ժամանակաշրջանում Հայաստանում սկըսւում է ֆէոդալական յարաբերութիւնների զարգացման պրոցես։ Տիրապետող դասակարգը հանդիսանում էր թագաւորի անձնուրութեամբ գլխաւորուած աղնուտկանութիւնը, որը կողմուած էր մեծ ու փոքր իշխաններից և տաճարական քուրմերից։ Աղնուտկանութիւնը միաժամանակ հանդիսանում էր երկրի զինուրական դասը, որի վրայ յենուում էր թագաւորի իշխանութիւնը։

Տահագործուող Հողերի մշակումը կատարւում էր գիւղացիների միջոցով։ Գիւղացիները որոշ կախում ունէին հողատէրի իշխանից և նրան հարկ էին վճարում կամ բնարդիւնքով, կամ աշխատապարտութեամբ։ Գիւղացիութիւնն ապրում էր գիւղական համայնքներով, որոնք գիւղացիներին հնարաւորութիւն էին տալիս պաշտպանուելու կալուածատէրերի ծայրայեղ շահագործումից։

Բայց գիւղացիներից, շահագործում էին նաեւ ստրուկներ, որոնք ձեռք էին բերւում գլխաւորապէս պատերազմների միջոցով։ Ստրուկները չունէին տուն-տեղ, արտագրութեան միջոցներ՝ հող, գործիքներ և այլն։ Նրանք միանգամայն զուրկ էին անձնական ազատութիւնից և պատկանում էին տիրոջը՝ ճիշդ այնպէս, ինչպէս կենդանիներն ու այլ առարկաները։ Այս ժամանակաշրջանում ստրուկները շահագործում էին առաւելապէս ֆէոդալների տնային տնտեսութեան մէջ և կազմում էին տնային

ստրկութիւն։ Նրանք գործադրում էին նաեւ հաստրակական ծանր աշխատանքներում, այն է՝ քաղաքային պարիսպների, բերդերի, ճանապարհների, ջրանցքների և այլ նման շինարարութիւններում, ինչպէս նաեւ լեռնահանքերում։

Շահագործուղ գասակարգին էին պատկանում նաեւ արհեստաւորները, որոնց մի մասը գաղթեցուած էր Փոքր Ասիայից։

Հնում Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ տոեւարական
Առեւառուր Եւ յարաբերութիւնները կատարում էին մեծ մասամբ
Բաղաբներ Հայաստանի վրայով։ Այստեղով էին անցնում տոեւ-
արակոն ճանապարհները Հնդկաստանից, Զինաստանից, Գինաստանից,
Պարսից ծոցից՝ Արտքս ու Եփրատ գետերի վրայով դէպի Միջերկրական
ու Սեւ ծովերի վաճառաշահն նաւահանգիստները։ Այդ տոեւարական ճա-
նապարհների համգույցներում գոյացել էին Արշամոշատ և Կարկաթիոկերտ
տոեւարական խոշոր քաղաքները Մոփքում և Արտաշատն ու Տիգրանա-
կերտը՝ Մեծ Հայքում։ Վերջին երկու քաղաքները դարձել էին նաեւ
թագաւորական աթոռանիստ կենտրոններ։ Նրանք տոեւարական մեծ նշա-
նակութիւն ունեին և այնտեղ հսկոյական հարստութիւն էր կուտակուել։
Միջազգային տարանցիկ տոեւարական յարաբերութիւնների մէջ Հայաս-
տանի ունեցած այդ խոշոր գերը դրդում էր հարեւան պետութիւններին՝
դաշնակցային կապեր հաստատել նրա հետ։ դրան էին ձգտում, օրինակ՝
Պոնտական պետութիւնն ու Կապաղովկիան արեւմուտքից և պարթեւա-
կան պետութիւնը՝ հարաւ-արեւելքից։

Հայաստանի այդ գերը չափազանց մեծացաւ Տիգրան Բ.ի օրով, երբ
երկիրն ընդարձակուելով, ընդգրկեց այն ժամանակուայ համաշխարհային
շուկայի արեւելեան մասը։ Առեւտրի գարգացման հետեւանքով Հայաստա-
նում առաջացել էր նաեւ տոեւարականների մի շերտ։ Առեւտրականների
մէջ էին, բացի բնիկ հայերից, նաեւ սիրիացիներ, արտքներ, յոյներ և
հրեաներ։

Հայաստանի վրայով դէպի Միջերկրական ծովը, մտանաւորապէս դէ-
պի Հռոմ, անցնում էին շինական մետաքս ու մետաքսէ գործուածքներ,
հնդկական բամպակ, բամպակէ գործուածքներ, համեմունքներ, ակնեղէն,
փղոսկր, անուշաբոյր խունկեր և ներկատու նիւթեր։ Արեւմուտքից դէպի
Արեւելք նոյն ճանապարհով փոխադրում էին պղինձ, կապար, տապակիէ
իրեր, եգիպտական ու սիրիական արհեստանոցների արտադրութիւններ,
այն է՝ կերպաս և գունաւոր նախշերով գործուածքներ։

Հայաստանն էլ իր սեփական արտադրութիւններով մասն ուներ այդ
միջազգային առեւտրի մէջ։ Հայաստանից արտահանւում էին գլխաւորա-
պէս ձիեր, զորիներ, մետաղներ, բուսական ներկեր և գիւղատնեսական
այլ արդիւնքներ։

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐԺԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

(63—429 թ. թ.)

1. ԱՐԺԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆՈՒՄԸ

Հայաստանը
Հոռոմ-պարքեւա-
կան մրցուրեան
առարկայ

Արտաշիսեան դինաստիայի անկումից յետոյ Հայաս-
տանն ապրեց քաղաքական թուլացման մի շրջան։
Այլեւս չկար ազգային կենտրոնական իշխանութիւն։
Թագաւորական իշխանութիւնը յանձնուում էր մերթ

Հռոմի և մերթ պարթեւների կողմից զէնքի ուժով

նստեցրած օտարազգի արքաներին։ Արանց իշխանութիւնը կարճատեւ էր լինում, քանի որ արտգ փոփոխւում էին հռոմ-պարթեւական անվերջ մրցման յաջողութեան ելեւէջները։ Հայ ժողովուրդն էլ չէր հանդուրժում օտարների լուծը և ապատամբութիւններ էր բարձրացնում տիրապետող-ների դէմ, երբեմն նոյնիսկ սպանելով նշանակուած օտարազգի թագաւորներին։

Այս խառնաշփոթ ժամանակաշրջանում աւելի ուժեղանում և ակտիւ քաղաքական դեր են խաղում հայ իշխանները։ Սակայն այդ իշխանների որոշ մասը, օգտագործելով հռոմ-պարթեւական հակամարտութիւնը, հետապնդում էր միայն նեղ անձնական շահեր։ Մինչդեռ հայ ժողովուրդը ձգտում էր վերականգնել ու պաշտպանել իր անկախութիւնը, պայքարելով Հռոմի դէմ, ընդհակառակը, մի շարք հայ իշխաններ դաւաճանակոն դիրք են բռնում և վտանգում հայ ժողովրդի անկախութիւնը, անցնելով Հռոմի կողմը, որը սովորաբար գործում էր գուադրութիւններով և կոշտոքով։ Անկախութեան համար հայ ժողովրդի մզած պայքարն այդ շրջանում համընկնում էր պարթեւների շահերին այն չափով, ինչ չափով հայերն ու պարթեւներն իրենց դէմ ունէին մի ընդհանուր թշնամի։ Հռոմը, որին ձգտում էին գուրս քշել Ասիայից և տապահովել իրենց անկախութիւնը։ Ահա այս հողի վրայ առաջացաւ հայ-պարթեւական նոր մերձեցումը։

Առաջին դարի սկզբին (մեր թ.), մանաւանդ Օգոստոս և Տիբերիոս կայսրների ժամանակ, Հռոմը կարողանում էր որոշ յաջողութիւններ ունենալ Հայաստանում։ Սակայն նոյն դարի կէսերից յաջողութիւն են ունենում պարթեւները, որոնք յամառութեամբ աշխատում էին Հայաստանից գուրս վանել հռոմէական ազգեցութիւնը և Հայաստանի գահը յանձնել պարթեւական արքայական տան անդամներից մէկին։ Այդ պայքարը չափազանց սուր բնոյթ է ստանում, երբ պարթեւական թագաւոր Վաղարշը ձգտում է Հայաստանի թագաւոր գարձնել իր եղբայր Տրդատին։

51 թ. Տրդատը պարթեւական զօրքով մտնում է Հայաստան և գահազուրկ անում Հռոմի կողմից այդտեղ թագաւոր նշանակուած վրացի արքայազն Հռադամիզդին։ Այս հանգամանքը պատճառ է դառնում հռոմարթեւական մի նոր պատերազմի, որը տեսում է գրեթէ տասը տարի։

Հռոմի Ներսոն կայսրը կորբուլոն զօրավարին ուղարկում է Ասիա, յանձնարարելով նրան կարգի բերել Արեւելքի քաղաքական գործերը և պատերազմել պարթեւների դէմ։ Կորբուլոնը, նախ քան ռազմական գործողութիւններ սկսելը, առաջարկում է պարթեւներին հաշտութիւն կընքել։ Սակայն Վաղարշը ձգձգում է բանակցութիւնները և չի ուղղում իր եղբայր Տրդատին յետ կանչել Հայաստանից։ Այդ ժամանակ կորբուլոնն իր բանակով մտնում է Հայաստան (59 թ.)։ Միաժամանակ զանազան կողմերից ներս են խուժում նաեւ Հռոմի «Պաշնակից» մանր վասալները։ Տրդատը, օգնութիւն չստանալով Պարսկաստանից, որն այն ժամանակ զբաղուած էր վրկանների տպատամբութիւնը ճնշելով, չկարողացաւ դիմագրել հռոմէական զօրքին և ստիպուած եղաւ թողնել Հայաստանի սոհմանները։

Կորբուլոնն առանց կոռուի գրաւեց Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը, որտեղ և անցկացրեց ձմեռը։ Երբ յաջորդ տարուայ (60 թ.) գործնանը նա ցանկանում էր արշաւել Տիգրանակերտի վրայ, կրակի մատնեց ամբողջ Արտաշատը, խորտակեց ու քանդեց միջնաբերդը, քաղաքի պարիսպներն ու շնչնքերը։ Իր այդ բարբարոսական արարքը նա արդարացնում էր նրանով, թէ բաւականաչափ զօրք չունի մայրաքաղաքում կայազօր թողնելու համար։ Արտաշատի աւերումը մեծ զայրոյթ տառաջացրեց առանց այն էլ դէպի Հռոմն ատելութեամբ լցուած հայ բնակչութեան մէջ։

Կորբուլոնի բանակը գէպի Տիգրանակերտ արշաւելիս ստիպուած էր ամբողջ ճանապարհին կասազի կոիւներ մղել հայ պարտիզանական խըմբերի դէմ, որոնք լեռներից ու անմատչելի բերդերից անդադար յարձակում էին գործում։ Սակայն Կորբուլոնը վերջապէս համում է Տիգրանակերտ և յամառ կռուից յետոյ գրաւում նրա միջնաբերդը։ Ամբողջ Հայաստանը նորից ընկնում է Հռոմի գերիշխանութեան տակ։ Ներոն կայսրի հրամանով Հայաստանի թագաւորական իշխանութիւնը յանձնուում է Կապագովկիայի թագաւորի թոռանը՝ Տիգրան Զին։ Այս բոլորից յետոյ Կորբուլոնը քաշւում է Ասորիք, որի կուսակալ էր նա նշանակուել ներոնի կարգադրութեամբ։

Սակայն պարթեւները չէին կարող հանդուրժել հռոմայեցիների տիրապետութիւնը Հայաստանում։ Պարթեւական թագաւոր Վաղարշը ժողովի է հրաւիրում իշխաններին ու ազնուական մեծամեծներին և նրանց ներկայութեամբ իր եղբայր Տրդատին նորից յայտարարում Հայաստանի թագաւոր (61 թ.)։ Վաղարշը Տրդատին զօրքով ուղարկում է Հայաստան,

իսկ ինքը պատրաստւում է առանձին մեծ բանակով՝ արշաւելու հռոմայիցիների գրաւած մարզերի վրայի Կորբուլոնը, տեղեկանալով այդ ամենի մասին, երկու լեզոն զօրք է ուղարկում Հայաստան, իսկ ինքն էլ առանձին բանակով մօտենում է Եփրատին՝ պարթեւներին դիմադրելու համար Միեւնոյն ժամանակ Կորբուլոնը խուսափելով պատրազմից՝ պատգամաւոր է ուղարկում Վաղարշի մօտ հաշտութեան առաջարկով։

Մինչ այդ Տրդատը, մտնելով Հայաստան՝ պաշարել էր Տիգրանակերտը, որտեղ Տիգրտն Զ. ն ապաստան էր գտել հռոմէական զօրքերի հետ։ Պարթեւները, որ սովոր չէին ամուր բերդերի դէմ պաշարողական պատերազմ վարելու, անկարող եղան գրաւել քաղաքը։ Այդ անյաջողութեանը յաջորդեց նաեւ պարթեւական զօրքի պարենաւորման դժուարութիւնը։ Այս հոնքամանքներն աչքի տառաջ ունենալով, Վաղարշը գերադասեց ընդունել Կորբուլոնի առաջարկը և զինադադար կնքեց։ Այդ զինադադարով Վաղարշը պարտաւորւում էր, մինչեւ Ներոն կայսրի հետ պաշտօնապէս հաշտութեան դաշն կնքելը, վերացնել Տիգրանակերտի պաշարումը՝ այն պայմանով, որ Տիգրան Զ. ին պոշտապանող հռոմէական զօրքերը յետ կանչուեն, և Տրդատը ճանաչուի Հայաստանի թագաւոր։ Սակայն Ներոնը մերժեց Կորբուլոնի կնքած զինադադարի այդ պայմանները։

Տեսնելով Հռոմի բացասական վերաբերմունքը, Վաղարշը նորից պատերազմ յայտարարեց Հռոմի դէմ և արշաւենքը Հայաստանից հեռացրեց Տիգրան Զ. ին։ Այն ժամանակ Հռոմը Պետոս զօրտվարին երեք լեզոն զօրք տալով, ուղարկեց Հայաստան և միաժամանակ Փոքր Ասիայի վասալական թագաւորներին կարգադրեց օգնել նրան (62 թ.)։

Պետոսը, անցնելով Եփրատի ձախ տիքը, մտաւ Հայաստանի սահմանները և գրաւեց մի քանի աննշան բերդեր։ Սնապարծ այդ զօրավարն շտապեց փքուն հաղորդագրեր ուղարկել Հռոմ իր յաղթանակների մասին։ Սակայն, երբ նո մտաւ Հայաստանի խորքերը, այնպիսի խայտառակ անյաջողութիւններ ունեցաւ, որ միանգամայն նսեմացրին Հռոմի վարկն ամբողջ Արեւելքում։ Հայկական զօրքը Տրդատի հրամանաւորութեամբ և պարթեւական բանակը Վաղարշի զեկովարութեամբ՝ Տիգրանակերտի տակ առաջին մեծ հարուածը հասցրին Պետոսին Չարաչար պարտուած հռոմէական զօրքն ստիպուած էր նոհանջել դէպի հիւսիս։ որտեղ, յաջորդ տարին, Ռամէէայի մօտ (Արտանի գետի վրայ, այժմեան Խարբերդ քաղաքի մօտ) նա սոսկալի ջարդ կրեց (62 թ.)։ Գլխակորոյս Պետոսն օգնութիւն խնդրեց Կորբուլոնից, բայց առ չէր շտապում օգնական զօրք ուղարկել։ Պետոսն ստիպուած եղաւ հաշտութիւն կնքել պարթեւների առաջադրած պայմաններով, այն է հռոմէական բանակը հեռացնել Հայաստանի սահմաններից և վերադարձնել Հայաստանում զրաւած բոլոր ամրոցները, նմոնապէս հայերին յանձնել հռոմէական բանակի ամբողջ դէնքը, ռազմամթերքն ու պարէնի պաշարը և պարտաւորեցնել հռոմէա-

կան զօրավարներին օժանդակելու պարթեւական դեսպաններին՝ Ներռն կայսրի մօտ գնալու և հաշտութեան դաշնագիրը վերջնականապէս հաստատելու գործում:

Սակայն, երբ պարթեւական դեսպանները Վաղարշ թագաւորի նամակով հասան չուոմ և Ներռնին առաջարկեցին Պետոսի հետ կնքուած հաշտութեան պայմանները յատուկ դաշնագրով հաստատել, Ներռնը մերժեց այդ առաջարկն եւս, բայց միեւնոյն ժամանակ վերադարձող պարթեւ դեսպաններին հասկացնել տուեց, թէ Պարսկաստանի առաջարկները կը յարգուեն, եթէ Տրդատն անձամբ ներկայանայ իրեն՝ Ներռնին:

Հռոմից կարգադրուեց Կորրուլոնին վերսկսել պատեղաշնարարիւնը և առաջարկութեամբ Հռոմէական զօրավարը համաձայն այդ առաջարկութեանը (63 թ.): Խանդէայում, որտեղ նախորդ տարին տեղի էր ունեցել հոռմայեցիների խայտառակ պարտութիւնը, կայացաւ հաշտութիւն, որով Տրդատը վերջապէս ճանաչուեց Հայաստանի թագաւոր, պայմանով, որ թագաւորական թագն ստանայ Հռոմից:

Այսպէս վերջացան երկարատեւ պատերազմները. Հռոմը փաստօրէն պարտուած, քան թէ յաղթանակած դուրս եկաւ այդ պատերազմներից:

Խանդէայի դաշնագրի համաձայն՝ Տրդատը 65 թ. ճանապարհուեց Հռոմ՝ Ներռն կայսրից Հայաստանի թաղն ստանալու: Տրդատին ուղեկցում էր 3000 հայ ու պարթեւ ազնուականներից կազմուած մի ահազին շքախումբ: Խանդէայի գամաքով, ճանապարհորդութիւնը տեւեց ինն ամիս: Ճանապարհորդութեան ամբողջ ծախքը հոգում էր Հռոմը: Բոլոր քաղաքներում Տրդատին դիմաւորում էին շուքով ու հանդիսաւորութեամբ:

Հասնելով Խտալիա, Տրդատն իր շքախմբով մեկնեց Նէապոլ, որտեղ այդ միջոցին գտնուում էր ցամաքով, ճանապարհորդութիւնը տեւեց ինն ամիս: Ճանապարհորդութեան ամբողջ ծախքը հոգում էր Հռոմը: Բոլոր քաղաքներում Տրդատին դիմաւորում էին շուքով ու հանդիսաւորութեամբ:

Երկու թագաւորների մուտքը Հում կրում էր չտեսնուած հանդիսաւորութիւն. մայրաքաղաքի ամբողջ բնակչութիւնը դուրս էր եկել նրանց դիմաւորելու: Նշանակուած օրը Հռոմի Թորում կոչուած մեծ հրապարակում տեղի ունեցաւ Տրդատի թագաւորութեան մեծաշուք հանդէսը: Թորումը զարդարուած էր տօնական շքեղութեամբ. թէ՛ հրապարակը և թէ՛ շրջակայ տների կտուրները լցուել էին հանդիսաւորների բազմութեամբ:

Ներոն կայսրը, ծիրանի հագած, սենատորների ուղեկցութեամբ ութիշնապահ զօրքով շրջապատում՝ մանում է Փորում և բազմում բարձր գահի վրայ Տրդտան առաջանում է զէպի նա և, բարձրանալով մի քանի աստիճան, խոնարհ գլուխ է տալիս կայսրին ու պարթեւական լեզուով յայտնում իր հապատակութիւնը: Ներոնը, բռնելով Տրդտափի ձեռքը, համբուրում է նրան և, նստեցնելով գահի վրայ, իրենից մի աստիճան ցած, նրա գլխին է զնում հայկական թագը: Այսուհետեւ թատրոնում տեղի է ունենում հանդիսաւոր ներկայացում և վերջը՝ փոստաւոր խնջոյք: Մի շարք այսպիսի տօնակատարութիւններից յետոյ Տրդտաը նոյն ճանապարհով վերադառնում է Հայաստան: Ներոնը Տրդտափին ճանապարհում է լիտուատ պարզեւներով: Այդ նուերների հետ միասին կայսրը նրան տալիս է մօտ 20 միլիոն ռուբլի (ռուկով) գումար՝ Կորրուլոնի աւերած Արտաշատ քաղաքը վերականգնելու համար: Նոյն նպատակով Տրդտափի հետ նա ուղարկում է մեծ թւով հռոմայեցի ճարտարապետներ ու վարպետներ:

Արշակունիների գերադառնալով Հառմից, Տրդտաը հաստատուեց Հայաստանի գահի վրայ (66 թ.): Հիմնուեց Արշակունիների գինասահիան: Այս գինասահիան Արշակունի կոչուեց: Քանի որ նրա հիմնադիր Տրդտաը Պարթեւական Արշակունիների տոհմից էր: Սակայն այդ գինասահիան Հայաստանում ազգայնանում է և Տրդտափի թագաւորութիւնը սկսած՝ տասիծանաբար ստանում է հայկական բնոյթ: Տրդտաը ձեռնարկում է պետուկան շինարարութեան և առաջին հերթին վերակագնում է Արտաշատ մայրաքաղաքը: Հռոմէական կայտօրը, որ սովորաբար մնում էր Հայաստանի կենտրոնում, պայմանի համաձայն՝ հեռանում է Հայաստանի ստանմաններից:


Հայաստանի այդ ժամանակուայ տերիտորիայի մասին հետաքրքրական տեղեկութիւններ է հաւորդում յայտնի յոյն աշխարհազէտ Պաղոմէոսը (Բ. դար): Այդ տերիտորիան մօտաւորապէս կարելի է պատկերացնել հետեւեալ կերպով: հիւսիսից Հայաստանին սահմանակից էր Վրաստանը, արեւմտեան սահմանը կողմում էր Եփրատ գետը, արեւելիան սահմանը՝ Ասրապատկանը, իսկ հարաւեցից սահմանակից էր Միջագետքը:

Տրդտա Ա.ի թագաւորութեամբ Հռոմի ու Հայաստանի միջեւ հաստատում են երկարատեւ խաղաղ յարաբերութիւններ, որոնք նպաստուոր հետեւանքներ են ունենում Հայաստանի տնահետական, առեւտրական և կուլտուրական զարգացման համար: Տրդտափի թագաւորութեան ժամանակ Հայաստանի խաղաղ կեանքը խանդակող միակ դէպքն ալանների արշաւանքն էր:

Ալաններն (այժմեան օսերի նուխնիքները) ապրում էին Կովկասեան լեռների հիւսիսային լանջերում և իրենց ասպատակումներով անհանգըտառութիւն: Էին պատճառում հարեւան երկրներին նրանք, միանալով կովկասեան կիս սվայրենի այլ ցեղերի հետ (72 թ.), յորմակուում են Ասրապա-

տականի վրայ և ապա արշաւում Հայաստան։ Ալաններն ուերում են իրենց ճանապարհին ընկած բնակավայրերը։ Նոյնպիսի մի արշաւանք նըրանք կրկնում են երեք տարուց յետոյ։ Տրդատն իր զօրքերով դուրս է գալիս ալանների դէմ և Կուր գետի մօտերքը պարտութեան մատնում նրանց։

Հայ պատմագրութեան տուեալների համաձայն՝ Տրդատ Ա.ը նոր իրաւական ու վարչական կարգեր հաստատեց Հայաստանում, կարգաւորեց նախարարութիւններն ու Փեղութական-վաստական յարաբերութիւնները։



Տրդատ Ա.ի կաւուցած հեթանոսական տաճարը Գառնիում

Թէեւ մեզ լրիւ տեղեկութիւններ չեն հասել Տրդատ թագաւորի պետական-վարչական այդպիսի գործունէութեան մտսին, բայց, ըստ երեւոյթին, նու խոշոր անձնաւորութիւն է եղել, որովհետեւ նրա յիշատակը պահպանուել է ժողովրդական աւանդութիւնների մէջ դեռ մինչեւ կ. և Բ. դարերը։ Այդ աւանդութիւններում Տրդատը յիշատակում է ո՛չ թէ իր իսկական անունով, այլ իր եղբայր, պարթեւական թագաւոր Վաղարշակի անունով։ Նու յիշում է որպէս պետական շինարար, Հայաստանի քաղաքական ինքնուրոյնութիւնը վերականգնող և նախարարական իշխանութիւնների հիմնուդիր։

Յայտնի չէ, թէ մինչեւ ե՛րբ է թագաւորում Տրդատ Ա.ը։ Հաւանական են թագրութեամբ՝ 37 տարի խալաղ թագաւորելուց յետոյ նա մեռնում է 100 թուականին։

2.— ՀԱՅԱՍՏԱՆԸ Բ. ԵՒ Գ. ԴԱՐԵՐՈՒՄ

Տրայանոսի Տրգատ Ա.ից յետոյ Հռոմի ու պարթեւների միջեւ նորից երկարատեւ պայքար է սկսւում Հայաստանի համար։ Պարթեւները, առանց Հռոմի կամքը հարցնելու, իրենց կողմից Հայաստանի թագաւոր էին նշանակում հայ Արշակունիների ներկայացուցիչներին։ Այդ հանգստմանքն առ իթ է ծառայում, որպէս զի հռոմէական Տրայանոս կայսրը Ռանդէայի դաշնադրութիւնը խախտուած համարի և անհաշտ քաղաքականութիւն վարի Արեւելքի նկատմամբ։ Հռոմի ու պարթեւական Պարսկաստանի միջեւ մօտ 50 տարի տեւող խաղաղութիւնը (63—114 թ. թ.) խախտում է։ Տրայանոսը հռոմէական լեգէոններով գալիս է Սիրիա և պատրաստում ռազմական գործողութիւններ սկսելու (114 թ.): Պարթեւներն առաջարկում են հաշտութիւն։ Տրայանոսը, մերժելով այդ առաջարկը, արշաւում է Հայաստանի վրայ, գրաւում է այն և դարձնում կայսրութեան պրովինցիա։

Այնունետեւ Տրայանոսը շարժւում է դէպի Պարսկաստան և առանց դժուարութեան գրաւում մի շարք քաղաքներ, կողոպառմ Տիգրոն մոյրաքաղաքը և իր յաղթական արշաւանքները շարունակելով՝ հասնում է միջեւ Պարսից ծոցը։ Այդ միջոցին թիկունքում Տրայանոսի դէմ պարթեւների, հայերի և տեղական բնակչութեան ապստամբութիւն է բռնկում։ Կայսրը մեծ դժուարութեամբ ճնշեց այն, բայց չկարողացաւ աւարտել իր արեւելեան արշաւանքը և, հիւանդանալով, ստիպուած եղաւ վերադառնալ դէպի Հռոմ։ Զօրքերի հրամանատարութիւնը յանձնելով իր որդեգիր Ադրիանոսին՝ Տրայանոսը մեռաւ 117 թ. Կիլիկիայում։ Նրան յաջորդեց Ադրիանոսը։

Հայաստանի Արեւելքում Տրայանոսի տարած յաղթանակները խախուտ էին։ Դրութիւնն այնպէս էր, որ Արեւելքը կարու էր նորից մեծ դժուարութիւններ ստեղծել Հռոմի համար։ ուստի Տրայանոսի յաջորդ Ադրիանոս կայսրը տեսնելով, որ Հայաստանն ու պարթեւական Պարսկաստանը նորից ապրատամբութիւն են բարձրացնում, հաշտութեան դաշնագիր է կնքում, որով և վերականգնում է Հայաստանի ինքնուրոյնութիւնը։ Պայմանագրի համաձայն՝ Ադրիանոսը նրանց վերադարձնում է խլուած նահանգները, Պարսկաստանից ու Հայաստանից գուրս է հանում հռոմէական կայազօրները։ Այս դաշնագրութիւնից յետոյ մօտ 40 տարի խաղաղութիւն է տիրում։ Հայաստանի թագաւոր է նշանակուում Վաղարշակ Ա.ը (117—140), որի գործունքութեան մասին շատ աղօտ տեղեկութիւններ են հասել մեզ։ Սա մի նոր քաղաք է հիմնում և իր անունով կոչում Վաղարշապատ։

Աղրիանոսի մահից յետոյ (138թ.) Հայաստանը և Մերձաւոր Արեւելքը մօտ 90 տարի՝ նորից կոռախնձոր դպրձան Հռոմի ու պարթևների միջեւ։ Հռոմայեցիները և պարթևներն իրար գէմ վարում էին անվերջ պատերազմներ, որոնց յաջորդում էր միայն կարճատեւ խաղաղութիւն։ Ռազմական արշաւանքների թատերաբեմ էր լինում գլխաւորապէս Հայաստանը, որը մեծապէս տուժում էր. քաղաքներն ու գիւղերն աւերտում էին, ժողովրդական տնտեսութիւնը քայքայում էր. Թէեւ վերը յիշուած պատերազմները սովորաբար վերջանում էին Հռոմի յաղթութեամբ, բայց և այնպէս այդ յաղթանակները խախուտ էին։ Հայ ժողովուրդը մի քանի անգամ ապստամբութիւն է բարձրացնում հռոմէական նուաճողների դէմ։ Մեծ ապստամբութիւն բռնկում է 162—164թ. թ. հէնց այդ ժամանակ հռոմայեցիները գրաւում և աւերտում են Արտաշատ քաղաքը։

Այս անվերջ պատերազմների մէջ ուշագրաւ է Անտոնիոս Կարակալլա կայսրի արշաւանքը (215—217թ. թ.): Իր նենգութեամբ յայտնի այդ

բռնակալը, որը միջոցների մէջ ոչ մի խարութիւն չէր դնում, իրեն իբրեւ մի նոր Ալեքսանդր Մակեդոնացի էր երեւակոյում և երազում էր նուաճել ամբողջ Արեւելքը։

Ռազմական պատրաստութիւններ տեսնելուց յետոյ, Կարակալլան Հռոմից քնում է Սիրիա (215թ.): Նա որոշում է առաջին հերթին գրաւել Հայաստանը և դարձնել այն հռոմէական պրովինցիա։ Օգտուելով հայ թագաւորական ընտանիքում տիրող գժութիւններից, նա բարեկամակոն նամակ է գրում վաղարշակ Բ. թագաւորին և նրան, ընտանիքի հետ միասին, հրաւիրում իր մօտ. բայց հէնց որ Վաղարշակ

Զինուորի պատկեր՝ Արշակունիաց ժամանակ



թ. գալիս է, նենգամիտ Կարակալլան ձերբակալում է նրան և ընտանիքի հետ միասին ուղարկում Հռոմ։

Սակայն Վաղարշակ Բ. ի թագաւորանդ Տրդատին յաջողւում է խոյս տալ բանտարկութիւնից և վերադառնալ Հայաստան։ Այստեղ Տրդատն իրեն յայտարարում է թագաւոր և ժողովրդի հետ միասին պայքարում է Հռոմի դէմ։ Այդ ժամանակ Կարակալլան որոշում է զէնքի ուժով տիրել Հայաստանին, սակայն նրա ուղարկած լեգէոնները պարտութիւն են կրում հայերից։ Տրդատ Բ. ը., որպէսզի կարողանայ շարունակել իր յաղթական

կռիւը, օգնութիւն է խնդրում պարթեւներից: Այս հանգամանքն առիթ է տալիս Կարակալլային պատերազմ յայտարարել պարթեւներին:

Պարթեւական թագուորը յանկարծակիի գալով՝ ստիպուած է լինում յետ քաշուել պատերազմի պատրաստութիւն տեսնելու համար: Հռոմայեցիները կարողանում են հեշտութեամբ գրաւել Պարսկաստանի մեծ մասը: Յաջորդ գարնանը (217 թ.) պարթեւական թագաւորը մեծ բանակով ինքն է դիմում յարձակման: Կարակալլան իր լեգէսներով արշաւում է նրա դէմ, բայց ճանապարհին սպանուում է իր զինուորների ձեռքով: Օգտուելով հռոմէական բանակում տիրող խռովութիւններից, պարթեւները հեշտութեամբ դուրս են քշում նրանց Պարսկաստանից և առաջ են շարժւում: Սիրիայի վրայ:

Կարակալլայի յաջորդ Մակրինոս Կայսրը, մի շարք պարտութիւններ կրելուց յետոյ, ստիպուած եղաւ հաշտութիւն կնքել պարթեւների հետ և 20 միջին առողջի ռազմատուգանք վճարել:

Մակրինոսն ստիպուած եղաւ հաշտութիւն կնքել նաեւ հայերի հետ: Այդ հաշտութեամբ Հայաստանն անկախ ճանաչուեց, և Տրգատ Բ.ը. որ փաստորէն արդէն թագաւորում էր, պաշտօնապէս ճանաչուեց Հայաստանի թագաւորութիւնը: Մակրինոսը Հայաստան վերադարձրեց նաեւ Վաղարշակ Բ.ի ընտանիքը, իսկ ինքը՝ Վաղարշակը Հռոմում մեսել էր արդէն:

Պարքեւական
դինաստիայի
անկումը եւ
Սասանեանները

Պարթեւական Պարսկաստանը բաւական թույացել էր: Նրա պետականութեան հիմքերը խախտուել էին: Հռոմայեցիների յամառ առաջխաղացումն ու անվերջ պատերազմները, վաստական իշխանների կենտրոնախոյս ձգտումներն ու յաճախակի ապստամբութիւնները և, զերջապէս, գոհին տիրելու համար թագաւորական տան մէջ տեղի ունեցող անվերջ գժուութիւններն ու արիւնալի կռիւները վաղուց արդէն սկսել էին քայլքայել պետական իշխանութեան կայունութիւնը և թույացնել Պարթեւական դինաստիայի դիրքը: Այս թույացումը գնալով խորանում էր, հող պատրաստելով ներքին ապստամբութիւնների համար:

Պարսկաստանի հարու-արեւմտեան մասում գտնուող վաստական ֆարսիստանի իշխաններից մէկը՝ քրմապետ Սասանի թռո Արտաշիրը, օգտուելով Պարթեւական դինաստիայի թույացումից՝ 224 թ. ապստամբում է: Իր կողմը գրաւելով պարթեւներից գժգոն իշխաններին, նա հետզետէ գրաւում է մի շարք մարզեր: Մի քանի ճակատամարտերում պարթեւական վերջին թագաւոր Արտաւանը պարտութիւն է կրում և ապա սպանուում: Պարթեւական Արշակունիների դինաստիան տապալւում է, և յաղթական Արտաշիրն իրեն յայտարարում է ամրող Պարսկաստանի «արքայից արքայ» (226 թ.): Արտաշիրը հիմք է դնում մի նոր դինաստիայի, որը նրա պոպ Սասանի անունով կոչւում է Սասանեան:

Սասանեան դինաստիայի տիրապետութեամբ նոր էջ է սկսում Պարսկաստանի պատմութեան մէջ: Այս տօնմը, որի քաղաքականութիւնն ակ-

տիւ նուաճողական էր, ձգտում էր վերականգնել Աքեմենեան Պարսկատանի հզօրութիւնը և երկրի սահմանները ատրածել մինչեւ Միջերկրական ծովը։ Սասանեանները նպատակ էին դրել ստեղծել միաձոյլ պետութիւն, անխնայ կռիւ մզելով Հռոմի և ընդհանրապէս Արեւմուտքի աղդեցութեան դէմ, պահպանել երկրի կուլտուրական ինքնուրոյնութիւնը։ Սասանեան դինաստիայի տիրապետութիւնը ճակատագրական եղաւ Հայաստանի համար։ Հայաստանում շարունակում էր թագաւորի Պարթեան Արշակունիների դինաստիայի հայկական ճիւղը, որը համելի էր Սասանեաններին և յանձին որի նրանք տեսնում էին իրենց հակառակորդին։ Միաժամանակ Սասանեանները ձգտում էին իրենց նուաճողական քաղաքականութեամբ կլանել Հայաստանը։ Այստեղից էլ բխում էր հայ Արշակունիների անհաշտ թշնամութիւնը դէպի Սասանեանները և մերձեցումը Հռոմին։ Հետագայում այդ մերձեցումն ուելի է ուժեղանում, երբ հայերը քրիստոնէութիւն են ընդունում։ Սակայն այդ ժամանակ քաղաքական հանգամանքները դասաւորուել էին հայերի համար ոչ այնքան նպաստաւոր կերպով։ Հռոմին էլ սկսել էր քաղաքականապէս թուլանալ, սարուկների ապստամբութիւնները սուր ընթացք էին ստացել և քայլայում էին պետութիւնը։ Հռոմէական կայսրութիւնը դէպի տնկում էր դիմում։ Սասանեան Պարսկաստանը, ընդհակառակը, Առաջաւոր Ասիսյում ձեռք էր բերում գերակշռող նշանակութիւն և դառնում էր արեւելեան մի հզօր պետութիւն։

Արտաշիր Սասանեանը ծրագրում է վերականգնել հին Հայաստանը Սասանեան իշխանութեան տակ Պարսկաստանի սահմանները՝ յետ խլելով այն հողերը, որոնք նուաճուած էին հառմայեցիների կողմից։ Այդ նպատակով նա առաջին հերթին արշաւում է Հիւսիսային Միջագետքի վրայ, որը գտնւում էր Հռոմի գերիշխանութեան տակ։ Սակայն այստեղ նա պարտում է։ Այս անյաջողութիւնից յետոյ նա իր բանակն ուղարկում է դէպի Հայաստան (228թ.), բայց այստեղ եւս պարտութիւն է կրում Խոսրով թագաւորից։ Զկարուլալով զէնքի ուժով նուաճել Հայաստանը, Արտաշիրը դաւադրութիւն է կազմակերպում Խոսրովի դէմ և հայ իշխանների ձեռքով սպանել տալիս նրան (238թ.)։

Արտաշիրի մահից յետոյ Պարսկաստանի գահն է բարձրանում նրա որդի Շապուհը (242—272թ.թ.), որը 244թ. հաշտութեան գալնագիր է կնքում Հռոմի հետ։ Հատ այդ գաշնագրի՝ Միջագետքն ու Հայաստանն անցնում են Պարսկաստանին, բայց հռոմէական զօրքերը շարունակում են մնուլ Հայաստանում։ Հետագայում, օգտուելով նպաստաւոր հանգամանքներից, Շապուհի բանակները մանում են Հայաստան (252թ.) և այստեղից դուրս քշում հռոմէական զօրքը։ Դրանից յետոյ պարսիկները հեռացնում են նաեւ սպանուած հայ Խոսրովի թագաւորի որդի Տրդատին և տէր դառնում Հայաստանին։

Հռոմի կայսրներն այդ ժամանակ զբաղուած լինելով ներքին պալատական կոխներով և, մանաւանդ, մեծ պատերազմներ մղելով գերմանու այլ մողովուրդների դէմ, որոնք սպառնում էին կայսրութեան եւրոպական սահմաններին, հնարաւորութիւն չունէին ակտիւ դեր խաղալու Արեւելքում։ Ուստի, Շապուհ Ա.ի և ապա նրան յաջորդող սասանեան թագաւորների ժամանակ Հայաստանը, շատ փոքրիկ ընդմիջումներով, շարունակում էր մեալ Պարսկաստանի հպատակ, թէեւ երբեմն էլ կոռւախնձոր էր գառնում Արեւելքի ու Արեւմուտքի հզօր պետութիւնների միջեւ։ Այս դրութիւնը տեսում է մինչեւ 297 թ.։

Սասանեան Պարսկաստանի ուժեղացումը ձեռնտու չէր

Հայաստանի Հռոմին։ Այդ պատճառով, երբ նպաստաւոր պայմաններ ազատազրումը են ստեղծում Հռոմում, վերջինս սկսում է լուրջ ուշադրութիւն դարձնել արեւելեան գործերի վրայ։

Դիոկղետիանոս կայսրը, որ աչքի ընկնող քաղաքական և վարչական մի անձնաւորութիւն էր, 296 թ. պատերազմ է սկսում Պարսկաստանի դէմ։ Հռոմէական բանակը մտնում է Հիւսիսային Միջազետք և ապա շարժում դէպի Հայաստանի սահմանները, որտեղ հռոմայեցիներն ապատամբ հայերի հետ միասին կտտարեալ պարտութեան են մատնում պարսիկներին (297 թ.)։ Կռուող պետութիւնների միջեւ հաշտութեան պայմանագիր է կնքում, որի համաձայն՝ պարսիկները հրաժարում են Միջագետքից, իսկ Հայաստանը դա չուում է անկախ պետութիւն ։ Այսպիսով, Հայստանն ազատագրում է Պարսկաստանի տիրապետութիւնից, և հայկական թագաւորական իշխանութիւնը յանձնում է Խոսրովի որդի Տրդատ Գ.ին, որը զինուրական կրթութիւն էր ստացել Հռոմում և յունա-հռոմէական կուլտուրան իւրացրած մի մարդ էր։ Վերջին պատերազմում նա, որպէս հայ զօրքերի հրամանատար, Հռոմի կողմից կռւում էր ընդդէմ պարսիկների Տրդատ Գ.ի գահ բարձրանալով վերականգնում է նաեւ հայ Արշակունի դինաստիայի իշխանութիւնը։

Հռոմի ու Պարսկաստանի միջեւ կնքուած հաշտութեան դաշնագրի չնորհիւ, քառասուն տարի շարունակ տիրում է խաղաղութիւն, որը բարերար ազգեցութիւն է ունենում նաեւ Հայաստանի համար։ Յաճախակի պատերազմների թատերաբեմ լինելուց ազատուելով՝ Հայաստանը հնարաւորութիւն է ունենում տնտեսապէս և կուլտուրապէս բարգաւաճելու։

Տրդատ Գ.ի թագաւորութեան ժամանակաշրջանում (297—330 թ. թ.) տեղի է ունենում մի երեսյթ, որն այսուհետեւ մեծ դեր է խաղում հայ ժողովրդի պատմութեան մէջ։ Դա քրիստոնէութեան մուտքն է Հայաստան։ Դ. դարի սկզբներին հեթանոսութիւնը տեղի է տալիս քրիստոնէութեան։

Քրիստոնէական կրօնն սկսում է հետզհետէ մուտք գործել Հայաս-

տան դեռեւս Բ. դարի վերջերին, Միջագետքի Եղեսիա քաղաքից, որտեղ այդ կրօնը տարածուել էր հարեւան Սիրիայից (Ասորիքից): Քրիստոնէութիւնը Պաղեստինից նախ մուտք է գործում Սիրիա և Փոքր Ասիա, ապա աստիճանաբար թափանցում է հարեւան երկրները և Հայաստան: Արդէն Գ. Դարի սկզբներին ասորի քարոզիչները, իսկ նոյն դարի երկրորդ կէսին նաեւ յոյն քարոզիչները մեծ եռանդով աշխատում էին նոր կրօնը տարածել հայերի մէջ: Նրանց յաջողւում է հիմնել մի քանի քրիստոնէական համայնքներ, որոնք սկզբներում դիմադրութեան են հանդիպում պետութեան կողմից: Սակայն քրիստոնէութիւնը Հայաստանում հետզհետէ հաստատուն հող է գտնում, որի հետեւանքով Տրդատ Գ. ը քրիստոնէութիւնն ընդունում է որպէս պետական կրօն:

Քրիստոնէութիւնը Հայաստանում տարածելու գործում, ինչպէս հաղորդում են հայ պատմիչները, աչքի ընկնող դեր է կատարում Կեսարիա քաղաքում կրթուած և դաստիարակուած Գրիգոր Պահլաւունին, որը հետագայում կոչում է Լուսաւորիչ: Ըստ պատմական աւանդութիւնների՝ քրիստոնէութիւննը Հայաստանում պաշտօնական կրօն է ճանաչում 301—303 թ. թ.:

Հայաստանում Տրդատ թագաւորի և Գրիգոր Լուսաւորչի այդ ուղղութեամբ ունեցած գործունէութիւնը մեր պատմագրութեան մէջ հանդէս է բերուած առասպելախառն զրոյցներով: Սակայն պատմական ձմարտութիւնն այն է, որ քրիստոնէութիւնը պետական կրօն դառնալու երեսոյթը որոշ սօցիալական ու քաղաքական հիմունքներ ունէր:

Քրիստոնէութիւնը միանգամայն հաստատախանում էր Հայաստանի գաղաքարգային հասարակական կազմին ու գալիս էր ամրապնդելու տիրապետող դաստիարագի ֆէոդալական դիրքերը և, առաջին հերթին, պետական իշխանութիւնը:

Տրդատ Գ. ը, քրիստոնէութիւնը յայտարարելով պետական կրօն, միաժամանակ նպատակ ունէր Հայաստանը կտրել հեթանոս Պարսկաստանից և նրա քաղաքական վիճակը կապել արեւմտեան քրիստոնեայ ժողովուրդների հետ: Քրիստոնէութեան մուտքը Հայաստան՝ խթան հանդիսացաւ հայերէն գրերի գիւտին և հայ գրականութեան զարգացմանը:

Քրիստոնէական կրօնի մուտքը Հայաստան խաղաղ ճանապարհով չի կատարում: Նոր կրօնը, յանձինս Տրդատ թագաւորի ու Գրիգոր Լուսաւորչի, հաստատում էր տիրապետող դաստիարագի ձեռքով: Իր տրամադրութեան տոկ ունենալով թագաւորից տրուած զօրական ուժեր՝ Գրիգոր Լուսաւորիչը հրով ու սրով էր ընկճում նոր կրօնի դէմ մարտնչող հեթանոս քրմական դասին, որին յարում էին նաեւ փոքրաթիւ նախարարներ: Քրմական դասը հնուց արդէն ահագին հարսաւութիւնների ու ընդարձակ կալուածների սեփականատէր էր և սօցիալ-քաղաքական մեծ նշանակութիւն էր ստացել: Նոր կրօնը զրկում էր նրան իր վաղեմի սօցիալական ու քաղաքական արտօնեալ դիրքերից և իր հսկայական հարստութիւններից, որոնք բռնագրաւում և յանձնեալում էին նորահաստատ քրիս-

տոնէական եկեղեցուն : Քրմական դասի դիմադրութիւնն ապստամբութեան բնոյթ էր ստանում : Սակայն զէնքի ուժը փշրեց այդ դիմադրութիւնը Քրմութեան որոշ մասը ոչնչացաւ, իսկ մի մասն էլ, տեսնելով իր պարտութիւնը, համակերպուեց ու մտաւ քրիստոնէական եկեղեցական պաշտօնեաների շարքը :

Այդ կատաղի պայքարի ընթացքում ոչնչացան քաղմաթիւ կուլտուրական արժէքները Անհետ կորան արտօնատի արժէքաւոր արտադրութիւններ, ինչպէս օրինակ՝ արձաններ, հեթանոսական բնոյթի քանդակներ, մեծնական գանազան անօթներ . ոչնչացան մեծնական գրադարաններ, հեթանոսական գրական յուշարձաններ ևայլն : Խորտակուած մեծնաները վերածուեցին քրիստոնէական տաճարների, քրմական դասի փոխարէն առջ եկաւ եկեղեցական հոգեւոր դաս :

Սակայն, չնայած քրիստոնէութեան յաղթանակին, նրա մէջ մտնում են մի շարք հեթանոսական հաւատալիքներ, պաշտամունքի ծէսեր, ժողովրդական տօներ ևայլն : Պահպանուեցին նոյնիսկ համաժողովրդական նշանակութիւն ունեցող հեթանոսական սրբավայրերը, որոնց, սակայն, տրուեցին քրիստոնէական անուններ և վերածուեցին նշանաւոր վանքերի :

Միլանի Դ. գորի սկզբներին հռոմէական կայսրութեան մէջ տեղի են ունենում մի շարք նշանակալիքներ, պաշտամունքի ծէսեր, ուրիշանդիան տոներ ևայլն : Համարակալիքներն արձագանք են գտնում նաեւ Հայաստանում, երբ այնտեղ դեռեւս թագաւորում էր Տրդատ Գ.ը : Հռոմէական հասարակութեան անտեսական ու քաղաքական քայլաքայումը, որ սկսուել էր դեռեւս Գ. գարում, Դ. գարում համարում է մեծ չափերի : Կայսրներն արմատական միջոցներ էին որոնում դուրս գալու այդ տագնապալի դրութիւնից, որն սպառնում էր պետութեան հետագա գոյութեանը :

Այդպիսի միջոցներից մէկն էր համարւում քրիստոնէութիւնը, որ արդէն մեծ չափերով տարածուել էր հռոմէական կայսրութեան գրեթէ բոլոր հասարակական խաւերում : Կոստանդիին կայսրն իր յայտնի Միլանի հրօվարտակով (313 թ.) յայտարարում էր նոր կրօնի ազատութիւն և քրիստոնէութիւնը համազօր էր ճանաչում հեթանոսական կրօնին : Փաստօրէն այդ նշանակում էր, որ քրիստոնէութիւնը դառնում է հռոմէական կայսրութեան տիրապետող կրօնը :

Պետութեան քայլաքայման առաջն առնելու միւս միջոցը համարւում էր կայսերական կառավարութեան վարչական բաժանումը երկու մասի՝ արեւմտեան և արեւելեան : Արեւելեան կայսրութիւնը կոստանդիին կայսրի օրով օրոշ չափով ամրանում է : Հռոմէական կայսրութեան մայրաքաղաքը դառնում է Բիլզանդիոնը (Աւել ծովի Բոսֆորեան նեղուցում), որը նրա հիմնադիր կայսրի անունով այնուենատեւ կոչվում է Կոստանդնուպոլիս (330 թ.): Բիլզանդիոնը գտնուում էր յունական միջավայրում, ուստի Ա-

բեւելեան հռոմէական պետութիւնն ստոցաւ յունական կերպսրանք, տոռգորուեց յունական կուլտուրայով և պատմութեան մէջ յաճախ անուղնեւում էր յունական կայսրութիւն։ Այնուհետեւ Սրեւելքի բոլոր երկրները, որոնք ենթակայ էին հռոմէական գերիշխանութեանը, արդէն գործունէին Բիւզանդիայի կամ կայսրութեան արեւելեան մասի հետ Սակայն հռոմէական կայսրութեան վերջնական բաժանումը տեղի է ունենում 395 թ., Թէոդոս կայսրի մահուանից յետոյ. այդ բաժանումից յետոյ է, որ արեւելեան մասը հանդէս է գալիս որպէս ինքնուրոյն պետութիւն՝ բիւզանդական կայսրութիւն անունով։

Տրդատ Գ.ի Հայուստանը մտնում էր Բիւզանդիայի քաղաքական շրջանակների մէջ։ Տրդատ Գ.ը, որ Հայաստանի թագավորութիւնը գաւոր էր ճանաչուել Հռոմի միջնորդութեամբ, անհետ շուշտ, յինուելու էր հռոմէական օգանդակութեան վրայ։ Երբ Միլանի հրովարտակից յետոյ հռոմէական կայսրութեան մէջ քրիստոնէութիւնը դառնում է պետական կրօն և, մտնաւանդ, երբ Բիւզանդիոնը, որ աշխարհագրօրէն Հայաստանին մօտիկ էր, դառնում է կայսրութեան կենտրոն, Տրդատը մտածում է օգտուել ստեղծուած բարենպաստ պայմաններից։ Հարկաւոր էր աւելի իրական հողի վրայ դնել Հռոմի հովանաւորութիւնն ու պաշտպանութիւնը Հայաստանի նկատմամբ։ Ուստի Տրդատը կոստանդին կայսրի հետ գաշնագրութիւն է կնքում, որով կայսրութիւնը պարտաւորուում էր պաշտպանել Հայաստանն ընդդէմ Պարսկաստանի, իսկ Հայաստանը խոստանում էր հաւատարիմ մատ կայսրութեանը։

3. ՀԱՅԱՍՏԱՆԸ Դ. ԴԱՐՈՒՄ

Խոսրով Բ. Հայաստանի ու Հռոմի միջեւ ստեղծուած մերձեցումը, կատակ եւ նարկէ, ձեռնոու չէր Պարսկաստանի համար։ Վերջինիս թագաւոր Շապուհ Բ.ը (310—379 թ. թ.) հետեւրով իր նախորդների քաղաքականութեանը՝ ձգտում էր Սասանեանների իշխանութեան տակ առնել Հայաստանը։ Սակայն քառասամեայ խաղաղութեան համար 297 թուին Դիոկղետիանոս կայսրի հետ կնքած գաւչնազիրը կաչկանդում և զրկում էր նրան պատերազմի միջոցով Հայաստանին տիրելու հնարաւորութիւնից։ Ուստի Շապուհը դիմում է գաւագրութիւնների ու քաղաքական ինստրիգների, իսառնակութիւններ առաջացնելով և թշնամանք յարուցելով թագաւորի դէմ։ Այդ միջոցով նա աշխատում էր ուժեղացնել պարսկական ազգեցութիւնը Հայաստանում։

Տրդատ Գ.ի մահից յետոյ Հայաստանում թագաւորակոմ գաճն է բարձրանում նրա որդի Խոսրով Բ.ը (330—339 թ. թ.)՝ Կոտակ (Կարձա-

հասակ) մականունով՝ Հայ նախարարներից նրանք, որոնք կապուած էին Պարսկաստանի հետ, վերջինիս դրդմամբ ապստամբութիւններ էին բարձրացնում Խոսրով Կոստակի դէմ և իրենց այս գործելակերպով դէպի Կործանում էին տանում Հայաստանի պետութիւնը. Սակայն Խոսրովը կարողանում է ճնշել ապստամբութիւնները՝ բնաջինջ անելով մի քանի նախարարական տօնմեր:

Խոսրով Բ.ն աչքի ընկնող քաղաքական որեւէ գործ չի կատարում: Նու ձեռնարկում է մի շարք շինարարական գործերի, տնկել է տայիս կաղնի ծառերի արհեստական անտառ, որը տարածում էր Գառնի բերդից Աղաս գետի հովտով մինչեւ Դուեին կոչուած բլուրը և ապա մինչեւ Արտաշատ մայրաքաղաքն ու Արաքս գետը: Այդ անտառը թէպէտ տրքունիքի և նախարարների համար աշնանն ու ձմրանը որպէս որսորդութեան վայր էր ծառայում, սակայն միաժամանակ նաեւ կարեւոր տնտեսական ու կուրտուրական նշանակութիւն ունէր: Խոսրովն այդ անտառում (Արտաշատից հիւսիս) կառուցում է արքայական պալատներ, որոնց շուրջը հետագայում ծաւալուեց Դուեին քաղաքը:

337 թ. լրանում է Պարսկաստանի և Հռոմի միջեւ կնքուած հաշտութեան դաշնագրի քառասուն տարին: Նոյն թուեին մեռնում է Կոստանդիին կայսրը: Օգտուելով այդ հանգամանքից, Շապուհ Բ.ը պատերազմական գործողութիւններ է սկսում կայսրութեան դէմ: Միաժամանակ նու յարձակումներ է գործում Հայաստանի վրայ: Այդ յարձակումներն ամէն անգամ յետ էին մղլում հայերի կողմից: Շապուհ Բ.ի առաջին յարձակման ժամանակ հայ զօրքերի հրամանատար՝ Բղնունեաց իշխան Դատարէնն ապստամբում է Խոսրով Բ.ի դէմ և, դաւաճանելով, անցնում է պարսիկների կողմը: Սակայն այդ ծանր բռպէին հանդէս է գալիս հայոց տաղանդաւոր զօրքավար-սպարապետ Վաչէ Մամիկոնեանը, որը Վանոյ լճի ափին պատերազմում է պարսիկների դէմ, մեծ ջարդ է տալիս նրանց և գերի բռնում Դատարէնին: Դաւաճան Դատարէնն սպանւում է քարկոծութեամբ, իսկ նրա ամբողջ տօնմը սրի է քաշլում և ոչնչացնում:

Խոսրով Կոտակին յաջորդում է նրա որդի Տիրանը Տիրանի (339—350 թ. թ.): Տիրանի թագաւորութեան օրովք բազաւորութիւնը Հայաստանը չատ ծանր վիճակ է ապրում: Շապուհ Բ.ը յամառօրէն շարունակում է պատերազմները Հռոմի ու Հայաստանի դէմ:

Քաղաքական այս պայմաններում Տիրանն առաջին հերթին աշխատում էր ամրապնդել պետական կենտրոնական իշխանութիւնը, ուժեղ կոիւ մղելով կենտրոնախոյս նախարարների դէմ: Այդ նպատակով նականգ չէր առնում դաման միջոցների առաջ — Պարսկաստանի կողմն անցած նախարարներին նա ոչնչացնում և նրանց կալուածները գրաւում էր:

Կոստանդ Կայսրն անընդհատ պատերազմներ մղելով կայսրութեան

Հիւսիսային սահմաններին սպառնացող արտաքին թշնամիների դէմ, անկարող էր իրական օգնութիւն ցոյց տալ Հայտատանին : Տիրանը, գծգոն լինելով սրանից, թշնամաբար է տրամադրւում դէպի կայսրութիւնը : Միւս կողմից՝ Շապուհ թ.ը., օգտուելով կոստանդ կայսրի ծանր գրութիւնից, յաճախակի արշաւանքներ էր գործում Հայտատանի վրայ : Սակայն երբ Շապուհի առաջխաղացումը չափազանց սպառնալից է դառնում Հայտատանի և հռոմէական գերիշխանութեան տակ գտնուող Հիւսիսային Միջագետքի համար, կոստանդ կայսրն ստիպուած է լինում պատերազմ սկսել (348թ.) Պարսկատանի դէմ : Տիրանն իր գորքերով օգնութեան է գնում կայսրին . բայց պատերազմն անյաջող է վերջանում Կոստանդի համար . վերջինս իր գորքերը թողնելով Միջագետքում՝ վերադառնում է Բիւզանդիոն :

Շապուհ թ.ն օգտուելով յարմար տոիթից՝ խորամանկ ու նենգ միջոցներով Տիրանին հրաւիրում է իր բանակը և կուրացնում նրան : Բայց պայքարը դրանով չի վերջանում, հետագայում՝ հռոմէական լեգէոնները հայ զօրքի հետ միացած՝ պարտութեան են մատնում պարսիկներին : Շապուհն ստիպուած է լինում դադարեցնելու բազմական գործողութիւնները և համաձայնել վերադարձնելու բանտարկուած Տիրանին՝ իր ընտանիքով : Կուրացած Տիրանն այլեւս անկարող էր թագաւորել, ուստի թագաւորական իշխանութիւնն ստանձնում է նրա որդի Արշակը :

Հայտատանում եղած երկու քաղաքական հոսանքները, Արշակունիների պետքեան ներին հակա- որոնցից մէկն ունէր պարսկական օրիէնտացիս, խկ միւսը՝ բիւզանդական, առաջացել էին այն ներքին հակատութիւնից, որ գոյութիւն ունէր թագաւորական իշխանութեան և մի շարք ֆէոդալական աների միջեւ : Հայ թագաւորներն աշխատում էին ամրապնդել իրենց միահեծան իշխանութիւնը և ուժեղացնել նախարարների վասարական կախումը թագուուրից : Ընդհակառակը, նախարարները, իրեւ խոշոր ֆէոդալական կալուածների տէրեր, ձգտում էին աւելի լայնացնել իրենց հողերը և մեծացնել իրենց ֆէոդալական իշխանութեան ուժը : Նրանք շահագրգուուծ էին թուլացնելու իրենց վասարական կախումը կենտրոնական իշխանութիւնից և ինքնուրոյն կերպով անօրինելու իրենց ֆէոդալական տերիտորիան : Թագաւորական իշխանութեան և նախարարական տոհմերի միջեւ եղած այս հակատութիւնն արտայայտում էր մշատկան պայքարով : Այս ներքին հակամարտութիւնից օգտուում էր Պարսկատանը, որն ակտիւ նուածողական քաղաքականութիւն էր վարում և ձգտում իրեն միացնել Հայտատանը : Խոկ թուլացած Բիւզանդիան շահագրգուուծ էր պահպանելու Հայտատանի ինքնուրոյնութիւնը, որպէս պատնէշ՝ Պարսկատանի առաջխաղացման դէմ : Հայտատանում եղած այս ներքին հակատութիւնները չափազանց թուլացնում էին հայկական պետականութիւնը :

Թագաւորի կենտրոնաձիգ և նախարարների կենտրոնախոյս ձգտում-

Ների բախումն աւելի սրուեց հայ Արշակունիների վերջին թագուցրների ժամանակ:

Արշակ Բ.ի
քաղաքական
սկզբանական
շրջանը

Արշակ Բ. թագաւորութեան սկզբանական շրջանը և Հայոստանը Արշակ Բ.ի թագաւորութեան առաջին շրջանում (350—357 թ. թ.) խաղաղութիւն էր վայելում:

Այսպիսի նպաստաւոր պայմաններում Հայաստանն սկսում է տնտեսապէս զարգանալ և քաղաքականապէս վերականգնել: Արշակ Բ. զգտում էր իր ներքին պետական գործերում տնկախ լինել Բիւզանդիայից ու Պարսկաստանից: Սպարապետ Վաստիկ Մամրիկոնեանի գործակցութեամբ, որ աչքի ընկնող ռազմագէտ ու քաղաքագէտ անձ էր, Արշակ Բ. զարողանում է զսպել նախարարների կենարունախոյս ձգտումները և նրանց հպատակեցնել կենարունական իշխանութեանը: Նա վերակազմում և ամրացնում է բանակը: Այս ժամանակաշրջանում մեծ զարկ են ատանում կուլտուրական ձեռնարկումները: Ներսէս կոթողիկոսի (352—372 թ. թ.) գլխաւորութեամբ: սա մի կրթուած ու գործունեաց անձնաւորութիւն էր, ծագումով Գրիգոր Լուսաւորչի տոհմից:

Աշտիշատի ժողովը և եկեղեցու ազիցնաւութեան ուժեղաւութեանը

Ներսէս կաթողիկոսի առաջին մեծ գործը եղաւ Աշտիշատի եկեղեցական ժողովի հրաւիրումը (354 թ.): Այդ ժողովի պատմուկան նշանակութիւնն այն է, որ այնտեղ, բացի զուտ կրօնա-եկեղեցական կեանքին վերաբերող կանոններից, սահմանուում են նաեւ աշխարհական կեանքին վերաբերող կանոններ: Այդ միջոցով հայ եկեղեցական իշխանութիւնն օրէնսդրուկան գործունէութիւնը վերցնում էր իր ձեռքը: Աշտիշատի ժողովի աշխարհական կանոնները հետաքրքրական են իրենց առաջադիմական գծերով, այդ կանոններով ժողովը ձգտում էր վերացնել հայ ժողովրդական կենցաղում տիրող մի շարք բարբարոսական ու անկուլտուրական սովորութիւններ, ինչպէս օրինակ՝ մեռելների վրայ հեթանոսական ձեւով սուգ անելը, մերձամուսնութիւնը, արբեցութիւնը, ստակած կենդանու միս ուտելը, բազմուկնութիւնը և այլն:

Քրիստոնէութիւնը տարածելու և ժողովրդի մէջ այն ամրացնելու նպատակով՝ Ներսէս կաթողիկոսը ձեռնարկում է մի շարք կուլտուրական հիմնարկութիւններ հաստատելու: Նա, ինչպէս վկայում է նշանաւոր հայ պատմիչ Փաւստոս Բիւզանդը, հիմնում է դպրոցներ, վանքեր, իջեւաններ, աղքատանոցներ, ապաստարաններ՝ ծերերի, հաշմոնդամների և անաշխատունակների համար. բացւում են անկելանոցներ, որտեղ խնամւում են անբուժելի ցաւով տառապողները, ինչպէս օրինակ՝ բորոտները,

ընկնաւորները, խելագարները ևայլու Այս հիմնարկները պահելու համար անհրաժեշտ նիւթական միջոցները հայթայթւում էին եկեղեցական կալուածներից, ինչպէս նաև ժողովրդից հաւաքուած հարկերից:

Այդ հասարակական-կուլտուրական գործունէութեամբ և, որ գլխաւորն է, նիւթական հարստութեան կուտակումով հայ եկեղեցին ներսէս կաթողիկոսի օրով ահագին ազդեցութիւն է ձեռք բերում և այդ ժամանակից սկսած՝ նա միշտ միջամտում է Հայաստանի պետական գործերին ու խոշոր քաղաքական դեր է խաղում:

Նախարարական
ապատամբուրիւններ
Արշակ Բ.ի դէմ

Արշակ Բ.ի թագաւորութեան սկզբնական շրջանում Հայաստանում տիրող խաղաղութիւնը երկար չտեսեց: Զայայած Արշակը բարեկամական յարաբերութիւններ էր պահպանում Բիւզանդիայի ու Պարսկաստանի հետ, բայց և այնպէս վերջինիս թագաւոր Շապուհը չէր կարող հաշտուել այն քաղաքական դրութեան հետ, որ Հայաստանն անկախ էր և Պարսկաստանի գերիշխանութեան տակ չէր գտնուում: Հայաստանում նորից դաւեր ու գաղտնի հրահրումներ են սկսուում Պարսկաստանի կողմից: Միեւնոյն ժամանակ Շապուհ Բ.ը պատերազմ է սկսում (358 թ.) Հռոմի դէմ՝ Հայաստանն ու Միջագետքը գրաւելու համար:

Արշակ Բ.ն աշխատում էր Բիւզանդիայի ու Պարսկաստանի հետ բարեկամական յարաբերութիւններ պահպանել, որպէսզի կարողանայ ներքին միջոցառումներով ուժեղացնել թուլացած պետականութիւնը: Այդ նպատակով նա աշխատում էր ամրացնել կենտրոնական իշխանութիւնը և ոչնչացնել նախարարների կենտրոնախոյս ձգտումները: Նոյն նպատակով նա փորձում է սահմանափակել հոգեւորականութեան քաղաքական դերը:

Արշակ Բ.ի այդ քաղաքականութեան դէմ մեծ դժգոհութիւն է առաջանում նախարարների մէջ. այդ դժգոհութիւնը զիխաւորում է ներսէս կաթողիկոսը: Արշակը դիմում է խիստ միջոցների, որի հետեւանքով մի շարք նախարարներ ապատամբում են թագաւորի դէմ:

Արշակ Բ.ն իր նպատակների համար օգտագործում է Արշակաւան

շահագործուող մասսաների թշնամական տրամադրութիւնը կալուածատէր-նախարարների դէմ: Մասիս լեռան հարաւարեւմտեան ստորոտում, մեծ առեւտրական ճանապարհի մօտ, նա հիմնում է մի քաղաք, որը և իր անունով կոչում Արշակս լան: Յատուկ հրովարտակով նա խոստանում է ապատան ու ազատութիւն տալ այն բոլոր դժգոհ տարրերին, որոնք հեռանալով իրենց բնակավայրերից, կը հաստատուեն Արշակաւանում: Կարճ միջոցում այդ քաղաքը մեծանալով՝ դառնում է մարդաշատ մի վայր: Արշակաւանի հիմնարկումով թագաւորը, ինարկէ, ոչ թէ նպատակ էր դրել պաշտպանել շահագործուողների դատը, քանի որ ինքն էլ շահագործող էր, այլ, հիմնուելով այդ

դժգո՞ն մասսաների վրայ, զէնք ունենալ ըմբռատ նախարարների դէմ իր վարած պայքարում։

Արշակաւանի հիմնարկումն է՛լ աւելի է սրում նախարարների թշնամանքը դէպի թագաւորը. ապստամբ նախարարներն իրենց միացեալ ուղամական ուժերով յարձակւում են Արշակաւանի վրայ, բնակիչներն կոտորում և քաղաքը հիմնայստակ կործանում։ Ապստամբ նախարարների դէմ կոռւելու համար Արշակն անցնում է Վրաստան և, օգնական զօրք ստանալով, վերագուռնում Հայաստան։ Նա ճնշում է ապստամբութիւնը, ոչնչացնում է մի քանի նախարարական տներ և գրաւում նրանց հողերը։ Առաջին հերթին նա ոչնչացնում է Կամսարական նախարարական տունը։ Այս ապստամբութեան հետեւանքով Մեհրուժան Սրծրունի և Վահան Մամիկոնեան նախարարներն իրենց թիկնապահ զօրքերով փախչում են Պարսկաստան և, դաւաճանելով իրենց հայրենիքին՝ ծառայում են Շապուհ Բ.ին և պարսկական բանակն առաջնորդում Հայաստանի դէմ։

358 թ. սկսուած պարսկա - հռոմէական պատերազմը Հայ-պարտկական գեռեւս շարունակւում էր Վերջին ճակատամարտում պատերազմներ. Յուլիանոս կայսրն սպանուում է, և բանակի կողմից Արշակ Բ.ի մահը կայսր է ընտրուում Յովիանոս զօրավարը, որ մի վախենութիւն անձնաւորութիւն էր Աս, տեսնելով իր բանակի անարեկուած ու լքուած տրամադրութիւնը և վատահ չլինելով իր ուժերին, խայտառոկ հաշտութիւն է կնքում Շապուհի հետ (363 թ.): Բայտ այդ դաշնագրի՝ Անդրտիգրիսեան մարզերը վերագրածւում են Պարսկաստանին և, որ գլխաւորն է, հռոմէական կայսրութիւնը պարտաւորում է չօգնել Հայաստանին, եթէ Պարսկաստանը պատերազմ վարի նրա դէմ։ Այսպիսով, Շապուհ Բ.ը մեծ քաղաքական յաղթանակ է տանում, դուրս մղելով հռոմէական տիրապետութիւնը Միջագետքից և մեկուսացնելով Հայաստանը։

Յովիանոսի հետ կնքած դաշնագրի հետեւանքով Շապուհն այնուհետեւ իրեն ազատ է զգում, և հանգամոնքներն էլ նպաստում են Հայաստանին տիրելու նպատակի իրագործմանը, նախարարական ապստամբութիւններն ընդդէմ Արշակ Բ.ի, նախարարներից ոմանց՝ Պարսկաստանի կողմն անցնելու դաւաճանական քայլը, երկրի ներսում տիրող խառնաշփոթ վիճակը բաւական թուլացրել էին պետութեան դիմադրական ուժը։ Բայց և այնպէս այնքան էլ հեշտ չէր գրաւել Հայաստանը, մանաւանդ որ հայ զօրքերի գլուխ էր կանգնած հայրենասէր, քաջ ուղմիկ և եռանդուն վասակ Մամիկոնեան սպարտպետը։ Հայ ժողովուրդը թշնամութեամբ ու ատելութեամբ էր լցուած դէպի Պարսկաստանը և դաւաճան իշխանները, որոնք իրենց հետ բերելու էին ճնշում, հարածանք և հարկային կեղեգում։ Ամբողջ չորս տարի տեւեց հայ-պարսկական պատերազմը և հայ ժողովրդի հերոսական դիմադրութիւնը, որի ընթացքում հայ զօրքերը, Վասակ Մա-

միկոնեանի հրամանատարութեամբ, մի քանի անգամ՝ պարտութեան մատնեցին պարսկական բանակը:

Շապուհ Բ. Հ. չկարողանալով զէնքի ուժով տիրել Հայաստանին, դիմեց նենգ միջոցի նա ամէն հնարք գործադրեց Արշակ թագաւորին կեղծ բարեկամական միջոցներով խորելու և դաւադրօրէն իր ձեռքը գցելու համար: Զանազան խոստումներ անելով՝ հայոց թագաւորին նա հրաւիրում էր իր մօտ, թէպէտ Արշակը միշտ խոսափում էր այդպիսի հրաւիրներից: Սակայն, երբ Շապուհը թագաւորական երգումով հաւասարիացնում է նրան, և նոփարարներից ոմանք էլ դրդում են նրան գնալ Շապուհի հետ տեսնուելու, Արշակը, հաւատալով խոստումներին՝ սպարապետ Վասակ Մամիմիկոնեանի ուղեկցութեամբ ճանապարհուում է պարսից թագաւորի մօտ. Շապուհը, հակառակ իր խոստումների ու երգման, հանգիսաւոր ճաշի ժամանակ ձերբակալում է հայ թագաւորին և սպարապետին: Վասակը մահուան է դատապարտւում, իսկ Արշակը բանտարկում է Անյուշ բերդում, ուր և մեռնում է:

Հին ժողովրդական աւանդութիւնը վիպական գծերով է զարգարում Արշակ Բ. ի և նրա քաջ սպարապետ Վասակ Մամիկոնեանի ողբերգական վախճանը:

Արշակի բանտարկութիւնից յետոյ պարսկական զօրքերը, Մեհրուժան Արծրունի ու Վահան Մամիկոնեան անյաջողաբիւնը հայ դաւաճան նոփարարների գլխաւորութեամբ, ներս են խուժում Հայաստան և ամէն տեղ աւեր ու ասպատակ սփռելով, քաղաքներ ու ամրոցներ պաշտելով, ձգտում են վերջնականապէս տիրել երկրին: Նրանք հալածում են հայկական կուլտուրան և փորձում են արժատացնել պարսկական մազգէական կրօնը: Ժողովրդական մասսաները, սակայն, շարունակում են կռուել օտար նուածողների դէմ: Արտագերս բերդը, որտեղ ամրացել էին հայ զօրքերը, Փառանձեմ թագուհին և թագամառանգ Պապը, երկար ժամանակ գիմազրում է թշնամուն: Պապին յաջողլում է գաղտնի ճանապարհով բերգից դուրս գալ և անցնել Բիւզանդիա:

Պարսկաստանի ձգտումը՝ իրեն ենթարկել Հայաստանը, անշուշտ, վտանգաւոր էր բիւզանդական կայսրութեան համար, ուստի նա միջոցների է դիմում խափանելու Պարսկաստանի այդ նպաստակը: Օգտուելով հանգամանքից, որ Արշակ Բ. ի թագամառանգ Պապն իր մօտ է, Վաղէսկայացրը բիւզանդական օժանդակ զօրքի հետ նրան ետ է ուղարկում Հայաստան՝ միացեալ ուժերով պարսիկների դէմ գործելու համար: Ապստամբ հայ ժողովուրդը համախմբւում է Պապի շուրջը: Հայ և բիւզանդական զօրքերը մի շարք յաղթական կռիւներից յետոյ գրաւում են Հայաստանը, և Պապը, երկրից գուրս վանելով պարսիկներին, ժառանգում է իր հօրդանք:

Թէեւ Շապուհ Բ. ը նորից պատերազմ է սկսում բիւզանդական կայս-

բութեան դէմ, բայց յաջողութիւն չի ունենում և չարտչար պարտւում է (371 թ.): Այս վերջին ճակատամարտից յետոյ Բիւզանդիայի և Պալռակաստանի միջեւ զինագաղար է կնքւում:

Պապի վարած Պապի վարած բաղամականութիւնը կամ առժամանակ տիրում է խողալութիւն, որը հնարաւորութիւն է տալիս ամրապնդելու երկրի քաղաքական դրութիւնը: Չնայած իր երիտասարդ հասակին՝ Պապը ցուցաբերում է պետական-վարչական դրութիւններ. նրան մեծ չափով օգնում է Մուշեղ Մամիկոնեան սպարապետը: Մնալով բիւզոնդական կայսրութեան դաշնակից՝ Պապը միաժամանակ ձգտում է անկախ ու ինքնուրոյն քաղաքականութիւն վարել իրար դէմ մրցող Բիւզանդիայի և Պարսկաստանի հանդէպ:

Պապ թագաւորն առաջին հերթին վերականգնում է Հայաստանի դինուրական ուժը, որը բոլորովին հիւծուել էր պարսիկների դէմ երկարութեւ պատերազմեր մղելու հետեւանքով: Այնունեածեւ նա միջոցներ է ձեռք առնում Հայաստանի ծայրամասերում դեռ Արշակ Բ.ի ժամանակ ապատամբած նախարարութիւններն իր իշխանութեանը ենթարկելու համար: Այդ նպատակով սպարապետ Մուշեղ Մամիկոնեանն արքունական զօրքով յարձակուում է ապստամբ նախարարների երկրների՝ Աղձնիքի, Ծոփքի, Կորդուքի, Տմորիքի, Արցախի վրայ և նրանց նորից հպատակեցնում թագաւորին: Այսպիսով, Պապը Կարողանում է խորտակել կենտրոնախոյս նախարարների ուժը և նրանց ենթարկել իր միահեծան իշխանութեանը:

Միեւնոյն նպատակով Պապ թագաւորը պայքար է սկսում նաեւ հայ եկեղեցականութեան դէմ, որը ներսէս կաթողիկոսի գլխաւորութեամբ միշտ միջամտում էր թագաւորի քաղաքական գործերին: Եկեղեցին իր հոգեւոր դասով լայնածաւալ կալուածների ու անոգին նիւթական Կարքատութիւնների տէր էր Յենուելով իր անտեսական ուժի վրայ՝ նա հնարաւորութիւն էր ստանում գիմադերելու թագաւորի վարած քաղաքականութեանը: Ուստի, եկեղեցու անտեսական ու քաղաքական ուժը թուլացնելու նպատակով, Պապը ձեռնարկում է մի չարք միջոցառումների: Նա սահմանափակում է վանքերի թիւը, վերացնում է միաբանութիւնները, կրծատում է եկեղեցական պաշտօնեանների թիւն ու նրանց եղային եկամուտները, բանագրաւում է եկեղեցիների ու վանքերի կալուածների մի մասը եայն:

Քէօդական
Եերդասակարգային
պայքարի սրումը և
Պապի սպանութիւնը

Պապի ինքնուրոյն ու համարձակ քաղաքականութիւնը և մանաւանդ նրա ուժեղ պայքարը հոգեւորականութեան և հոկառակորդ նախարարների ձգտումների դէմ—դժգոհութիւնն են առաջացնում նախարարների ու հոգեւորականութեան շարքերում: Թագաւորի դէմ ուղղուած այս թշնամական արամագրութիւնն է:

աւելի է սրւում հետեւեալ հանգամանքների շնորհիւ . Պապի հետ արքուն նիքում ընթրելուց յետոյ, Ներսէս կաթողիկոսը յանկարծակի մեռնում է : Մահուան պատճառը վերագրում են Պապին, որպէս թէ սա թունաւորել է նրան : Այս գէպքն այնքան ուժեղ ազդեցութիւն է ունենում, որ Պապի հաւատարիմ սպարապետ ու պետական շինարարութեան համագործակից Մուշեղ Մամիկոնեանը հեռանում է նրանից և միանում Բիւզանդիային : Բիւզանդիան այդ ժամանակ գծգոն էր Պապից՝ նրա վարած ինքնուրոյն քաղաքուկանութեան համար : Նախարարներն ու բարձր հոգեւորական ներկայացուցիչները, աեսնելով իրենց ազդեցութեան և եկամուտների նուազումը՝ սկսում են դաւեր լարել և բանասրկութիւններ յերիւրել երիտասարդ թագաւորի շուրջը : Գաղտնի կերպով անհիմն ամբաստանութիւններ են ուղարկում Բիւզանդիա, զրպարտելով Պապին որպէս անհաւատարիմ ու դաւաճան դաշնակցի, որ իրը թէ հակուել է Շապուհի կողմը : Այդ դաւադրական ամբաստանութիւնների ազդեցութեան տակ կասկածամիտ Վաղէս կայսրը որոշում է վերացնել նրան : Այդ մտադրութեամբ Վաղէսը գաղտնի կարգագրութիւն է ուղարկում Հայաստանի բիւզանդական կայազօրի հրամանատար Տրայանոսին, որ խորամանկութեամբ կամ բանութեամբ վերջ տայ Պապի գոյութեանը : Տրայանոսի հրաւէրու Պապը միամտաբասր ճաշկերոյթի է գնում նրա մօտ և խնջոյքի ժամանակ տմարդի ու նենդ կերպով սպանւում է :

Պապի սպանութիւնից յետոյ Հայաստանի թագաւորական իշխանութիւնը Բիւզանդիայի կողմից յանձնուում է Վարազդատին (374—377թ.թ.), որ Արշակունիների տոհմից էր : Սրբ կարծատեւ թագաւորութեան ժամանակաշրջանում չափազանց սրուեցին ներքին ու արտաքին հակասութիւնները, որոնք վտանգի էին ենթարկում Արշակունիների դիմաստիայի իշխանութիւնը : Մուշեղ Մամիկոնեան սպարապետի գլխաւորութեամբ մի շարք նախարարներ գծգոն էին նոր թագաւորի պարսկասէր քաղաքականութիւնից և կողմակից էին Բիւզանդիային : Մինչ թագաւորն ու նախարարներն զբաղուած էին ներքին պայքարով, որի ընթացքում սպանւում է Մուշեղ Մամիկոնեանը, Պարսկաստանը գաղտնի բանակցութիւններ է սկսում Բիւզանդիայի հետ՝ Հայաստանը երկու պետութիւնների միջեւ բաժանելու մասին : Սակայն Վաղէս կայսրը մերժում է այդ առաջարկը :

Վարազդատի և նախարարների միջեւ սրուած պայքարից օգտառմ է Մահուէլ Մամիկոնեանը, որն ստանձնուում է սպարապետութեան պաշտօնը : Սա ազստամբելով Վարազդատի դէմ՝ կարողանում է գահընկէց անել նրան : Թագաւորական իշխանութիւնը պարսից թագաւորի համաձայնութեամբ անուանապէս յանձնուում է Պապի անչափահաս որդիներին՝ Արշակին ու Վաղարշակին, իսկ ինքը՝ Մանուէլ Մամիկոնեանը խնամակալ կոչումով դառնում է երկրի փստական պետը :

Մանուէլ Մամիկոնեանի մահից յետոյ պետութեան խնամակալութեան պաշտօնը վերանում է, և Հայաստանի թագաւորը է յայտարարւում Պապի մեծ որդի Արշակ Գ.ը (383—389 թ. թ.): Սա շարունակում է հռոմէասէր քաղաքականութիւնը, որով առիթ է տալիս պարսկական օրիէնտացիա ունեցող հայ նախարարներին դիմելու Շապուհ Գ. թագաւորին (383—388 թուականներին) և խնդրելու գահից հեռացնել Արշակ Գ.ին ու նրա փոխարէն նոր թագաւոր նշանակել: Շապուհն օգտուելով այս առիթից՝ Հայաստանի թագաւորը է նշանակում Խոսրով Գ.ին (386—391 թ. թ.), որ դարձեալ Արշակունիներից էր: Երբ Խոսրով Գ.ը մտնում է Հայաստան, Արշակ Գ.ը, չկարողանալով նրան դիմադրել, իրեն կողմնակից նախարարներից շատերի հետ քաշւում է Հայաստանի արեւմտեան մասը, Եկեղեց գուառը, որտեղ հռոմէական ազգեցութիւնն ուժեց էր: Այսպիսով, Հայաստանում միաժամանակ հանդէս են գալիս երկու թագաւորներ: Այդ բոլորի հետեւան քով Արշակունեաց Հայաստանը ծայր աստիճան թուլանում և խաղալիք է դառնում երկու մեծ պետութիւնների ձեռքին:

Հայաստանի բաժանումը

Վաղէսին յաջորդեց Թէոդոս կայսրը, նա չէր հանդուրժում Պարսկաստանի միջամտութիւնը Հայաստանի գործերին, ուստի զօրք է ուղարկում իրեն կողմնակից Արշակ Գ.ին պաշտպանելու համար: Պարսկաստանն էլ պատրաստութիւն է աեսնում գէնքով օգնելու իր կողմից նշանակուած Խոսրով Գ. թագաւորին: Սակայն այդ երկու պետութիւնների միջեւ գործը կռուի չի հասնում, այլ նրանք բանակցութիւններ են սկսում Հայաստանի իրենց մէջ բաժանելու: Այդ միտքը, որ յղացել էր Շապուհ Բ.ը, այժմ նորից առաջ է քաշում նրա թոռ Շապուհ Գ.ը: Բիւզանդիան ընդունում է Պարսկաստանի առաջարկը՝ Հայաստանը բաժանել երկու պետութիւնների միջեւ: 387 թ. նրանց միջեւ դաշնագիր է կնքում, որի համաձայն՝ Հայաստանի ամբողջ տերիտորիայի $\frac{4}{5}$ մասը, արեւելեան բաժինը, անցնում է Պարսկաստանի, իսկ $\frac{1}{5}$ մասը, արեւմտեանը՝ Բիւզանդիային: սահման է ընդունում Կարին—Նիրկերտ—Մծրին գիծը:

4. ԱՐԾԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Հայաստանի բաղակական դրաբիւնը բաժնումը

Թիւզանդիայի և Պարսկաստանի միջեւ բաժանուելուց յետոյ, Հայաստանը մի առժամանակ շարունակում են կառավարել Արշակ Գ. և Խոսրով Գ. թագաւորները: Այդ բաժնումով հայ ժողովրդի դրութիւնն աւելի է վատթարանում: Երկրի այդ բաժանումը թուլացնում է հայ ժողովրդի ազգային միամնականութիւնն ու համագործակցութիւնը: Միեւնոյն ժամանակ Հայաստանի քաղաքական այդ բաժանումը չնպաստեց վերացնելու հայ ազնուականութեան ներդասակարգային հակասութիւն-

ները, ներքին այդ երկպառակութիւնը հասնում է այն աստիճանին, որ Արշակ Գ. պատերազմ է յայտարարում Խոսրովին: Այս պատերազմում Արշակը պարտուելով՝ ստիպուած է լինում քաղուել Եկեղեց գաւառը, որտեղ կարծ ժամանակից յետոյ մեռնում է (389թ.):

Արշակ Գ. ի մահից յետոյ Արեւմտեան Հայաստանը վարչականօրէն միացւում է կայսրութեանը և այնուհետեւ կառավարւում է կայսրի կողմից նշանակուած տեղակալով, որ կոչւում էր կոմիս: Այսպիսով, վերջ է արւում Արշակունիների թագաւորութեանն Արեւմտեան Հայաստանում:

Ասսանեաններն զգոյշ քաղաքականութիւն էին վարում
Արեւելիան Արեւելիան Հայաստանում, որի հետեւանքով դեռեւս
ձայասանի մօտ կէս դար շարունակում է գոյութիւն ունենալ Ար-
դրութիւնը շակունիների դինաստիան: Արեւելեան Հայաստանը
հնուց ի վեր եղել էր հայ ժողովրդի քաղաքական և
կուլտուրական կանոնը, ազգային զարգացման բուն հայրենիքը: Ուստի
հայ ժողովրդի լաւագոյն ներկայացուցիչների ձգտութիւնը էր՝ ամէն կերպ
պահպանել Արեւելիան Հայաստանի քաղաքական գոյութիւնը, մանաւանդ,
երբ Արեւմտեան Հայաստանը, զրկուելով ազգային քաղաքական իշխա-
նութիւնից, բռնի միացուել էր բիւզանդական կայսրութեանը:

Արեւմտեան Հայաստանի քաղաքական վիճակի այդ խիստ փոփոխու-
թիւնը մեծ հիսաթափութիւն է առաջացնում յունական բաժնի նախա-
րարների և այնտեղ գաղթած ուրիշ հայ նախարարների մէջ: Դժգոհելով
բիւզանդական նենք քաղաքականութիւնից, այդ նախարարների մեծ մա-
սը, նախապէս ստանալով Խոսրով Գ. ի համաձայնութիւնը՝ վերագաւնում
է Արեւելիան Հայաստան: Այսպիսով, Խոսրով Գ. ի ազգեցութիւնն ու քա-
ղաքական դիրքն զգալիօրէն ուժեղանում են: Այսուհետեւ Խոսրով Գ. ը
փորձում է բանակցութիւններ վարել Բիւզանդիայի հետ Արեւմտեան Հա-
յաստանի կառավարութիւնն իրեն յանձնելու, խոստանալով կայսրին հա-
ւատարիմ լինել և հարկ վճարել: Այդ քաղաքականութեամբ Խոսրովը
նպատակ ունէր վերականգնել միասնական Հայաստանը, մի հանգումանք,
որ չէր համապատասխանում Շապուհ Գ. ի քաղաքականութեանը: Վերջինս
տեղեկանալով Խոսրով թագաւորի քաղաքական այդ ձգտումների մասին,
նրան հրաւիրում է Պարսկաստան և զրկելով թագաւորական իշխանու-
թիւնից, արգելում է նրան վերադառնալ Հայաստան և հայոց թագաւոր է
նշանակում Խոսրովի եղբայր Վասմշապուհին: Վասմշապուհի թագաւո-
րութեան շրջանում (391—414թ.թ.) Արեւելիան Հայաստանը գրեթէ 25
տարի շարունակ հանգիստ վիճակում էր գտնւում: Հէնց այս շրջանում
ստեղծւում են հայկական տառերը: Այդ հանգամանքը մեծ չափով նպաս-
տում է ազգային կուլտուրայի զարգացմանը:

Արշակունի
քազաւրարիսան
վերացումը
Արեւելեան
Հայաստանում

Վասմշապուհ թագաւորի մահից յետոյ Սասանեան Յազ-
կերտ Ա. թագաւորը Խոսրով Գ.ին թոյլ է տալիս վե-
րադառնալ Հայաստան և նորից ստանձնել թագաւորա-
կան իշխանութիւնը։ Խոսրովը միայն ութ ամիս թա-
գաւորելուց յետոյ մեռնում է։ Յազկերտ Ա.ը., այլեւ
չփառահանալով Արշակունիներին, Խոսրովի մահից յե-
տոյ Հայաստանի թագաւոր է նշանակում իր որդի Շապուհին։

Շապուհը, սակայն, Հայաստանում թագաւորեց միայն 4 տարի (416—419 թ. թ.)։ Նա չկարողացաւ ամրացնել իր իշխանութիւնը Հայաստա-
նում։ Հայ նախարարներն արհամարհանքով ու թշնամանքով էին վերա-
բերում դէպի նոր թագաւորը, մանաւանդ որ նա մի ապիկար և թուլա-
մորթ մարդ էր։ Շապուհը հօր մահուան պատճառով շուտով ստիպուած ե-
ղաւ հեռանալ Հայաստանից՝ պարսից գահը ժառանգելու համար։ Սակայն
նա սպանում է պալատական դաւադիրների ձեռքով։ Պարսկաստանում
թագաւորում է Յազկերտ Ա.ի միւս որդին՝ Վուամ Ե.ը.։ Գահի չուրջը
տեղի ունեցած խռովութեան միջոցին հայերն ապստամբում և իրենց
երկրից դուրս են քշում պարսկական զօրքը, սպանելով նրա հրամանա-
տարին։ Վուամ Ե.ն ստիպուած է լինում զիջել ու հաշտուել հայ նախա-
րարների հետ։ Հայաստանի թագաւոր է նշանակում Վասմշապուհի որդի
Արտաշէս Դ.ը (423—429 թ. թ.), որը յայտնի է նաեւ Արտաշիր անու-
նով։

Վուամ Ե.ը, ժամանակաւորապէս հաշտուելով Հայաստանի թագաւո-
րութեան գոյութեան հետ, ներքուստ ձգտում էր իրականացնելու իր
նախորդների քաղաքական նպատակները, այն է՝ վերացնել Արշակունի-
ների դինաստիան և Հայաստանը միաձուլել Պարսկաստանի հետ։ Այդ ուղ-
ղութեամբ նա սկսում է գործադրել պարսկական վաղեմի նենգ դիւնա-
գիտական միջոցները։ Հայ նախարարների մէջ նա թշնամանք է հրահրում
Արտաշէս թագաւորի նկատմամբ։ Պարսից արքայի խարդաւանքներին ա-
ռատ նիւթ էր տալիս և ինքը՝ երիտասարդ Արտաշէսը, որ անփորձ և
անընդունակ լինելով երկիրը կառավարելու՝ աւելի շատ անձնատուր էր
լինում իրախճանքների ու թեթեւամիտ կեանքի։ Արտաշէսից դժգուն կայ
նախարարները դիմում են Վուամ թագաւորին և, մի շարք մեղադրանք-
ներ բարդելով Արտաշէսի վրայ, պահանջում են նրան հեռացնել գահից։
Սասանեան արքան էլ հէնց այդ բանին էր սպասում։ Նա իր մօտ կանչե-
լով Արտաշէս թագաւորին, զրկում է նրան թագաւորական իշխանու-
թիւնից և Հայաստանում այլեւս ոչ ոքի թագաւոր չի նշանակում։

Այսպիսով, վերջնականապէս վերացւում է Արշակունիների դինա-
տիան, կործանուում է հայ թագաւորութիւնը, և Արեւելեան Հայաստանը
միացւում է Պարսկաստանին։ Արեւելեան Հայաստանը դառնում է պար-
սկական իշխանութեան հպատակ մի երկրամաս, որը շարունակում է կա-
ռավավարուել Սասանեան արքաների կողմից նշանակուած մարզպաններով։

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՅԻԱԼ-ՑՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՆ

ԱՐՃԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՇԲՁԱՆՈՒՄ

Արշակունիների ժամանակ Հայտառանում աւելի են ձայ Էկողալականութիւնները և նոգեւորակունները, իսկ անազատների մէջ՝ գիւղացիներն ու քաղաքային բնակչութիւնը իշխող դասակարգի ազնուական վերնախաւին պատկանող ֆէոդալները կոչւում էին նախարարներ, ուստի Հայաստանի քաղաքական ու սօցիալական կառուցուածքը, որ ֆէոդալական էր, սովորաբար անուտնուում է նախարարական: Նախարար բառը նշանակում է նահանգի, երկրի պետ, աէր: Նախարարական տոհմը գլխաւորողը կոչւում էր նահապետ կոմ տանուեր, իսկ տոհմի միւս անդամները կոչւում էին սեպուհ:

Տահագործուող գիւղացին կոչւում էր տիեզական:

Հայ ազնուականութիւնը, որ Արտաշիսեան թագաւորութեան ժամանակաշրջանում գտնուում էր իր կազմաւորման պրոցէսում, հետզհետէ լայնածաւալ հողեր է ձեռք բերում և Արշակունիների թագաւորութեան ժամանակ վերջնականապէս ձեւաւորուում է որպէս նախարարական դասակարգ: Այդ ֆէոդալ-նախարարական հասարակութեան սօցիալ-տնտեսական յարաբերութիւնների վրայ էլ հիմնուած էր հայ պետականութիւնը:

Ամէն մի նախարար իրեն պատկանած տերիտորիայի իշխանն էր, կամ, ինչպէս հին հայ պատմագրութեան մէջ է ասոււմ, իր երկրի «տէրն» էր: Նրա իշխանութիւնը տարածւում էր իր գաւառոի ներքին քաղաքական ու սօցիալ-տնտեսական յարաբերութիւնների վրայ: Նա ունէր իր սեփական զօրքը, դատ էր տեսնուում և ներքին իրաւական կարգեր սահմանուում: Նա տուրքեր ու հարկեր էր հաւաքում հպատակ բնակչութիւնից և արտատնտեսական ճնշման միջոցով շահագործում էր գիւղացիութեան աշխատանքը: Գիւղացիները ֆէոդալի համար կատարուում էին երկու տեսակ պարտականութիւն: Առաջինը, որ ծագումով աւելի հին է, կոռն էր, այն է՝ շաբաթուայ որոշ օրեր աշխատել կալուածտատէր նախարարի անտեսութիւններուում: Դա աշխատապարտ հարկ էր Երկրորդը բահեան էր, այն է՝ կալուածտատէր նախարարին գիւղացին վճարում էր իր անհատական անտեսութեան արտադրանքի որոշ մասը, սովորաբար մէկ տասերորդը, բայց շատ անգամ՝ է՛լ աւելի: Սա արդիւնավեար հարկ էր: Բացի դրանից՝ կային նաեւ պարհակեներ, այն է՝ ըստ պահանջի կատարել ձրի պարտադիր աշխատանք հասարակական զանազան շինարարութիւնների վրայ, օրինակ՝ ճանապարհների, կամուրջների, ամրոցների, քաղաքի պարիսպների, ջրանցքների կառուցման, անտառներ տնկելու աշխատանքներում և այլն:

1000 մ

- Յ. Հայաստան Արտաշիսեան դինաստիայի վերջին շրջանում** 53 - 57
Արտաւազդ թ. - 53, Կրասովի արշաւանքը - 53, Անտոնիոսի արշաւանքը - 55, Արտաշէս թ. - 56, Արտաշիսեան դինաստիայի անկումը - 56:
- 4. Հայաստանի սօցիալ-անտեսական դրույթին Արտաշիսեան բազաւորութեան ժամանակաշրջանում** 57 - 58
Տիրապետող դասակարգ - 57, շահագործուող դասակարգ - 57, առեւտուր և բաղարներ - 58:
- ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ - ՀԱՅԱՍՏԱՆ ԱԲՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԴԱԿՈՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ** 59 - 97
1. Արշակունիների բազաւորութեան իմեմումը 59 - 64
Հայաստանը հոռմ-պարթեւական մրցութեան առարկայ - 59, Տրդատը եւ Կորբուլոնի արշաւանքը - 60, Պետոսի արշաւանքը - 61, Ժանդէայի դաշնաբութիւնը - 62, Տրդատը Հոռմում - 62, Արշակունիների դինաստիայի հիմնումը Հայաստանում եւ Տրդատ Ա. - 63:
- 2. Հայաստանը թ. և Պ. դարերում** 65 - 72
Տրայանոսի արշաւանքը - 65, Հայաստանի բաղարական վերականգնումը - 66, Կարակազա կայսրի արշաւանքը - 66, Պարթեւական դինաստիայի անկումը եւ Սասանեանները - 67, Հայաստանը Սասանեան իշխանութեան տակ - 68, Հայաստանի ազատագրումը - 69, բրիստոնէութեան մուտքը Հայաստան - 69, Միլանի հրովարակը եւ Բիւզանդիան - 71, Տրդատ Գ.ի դաշնադրութիւնը Բիւզանդիայի հետ - 72:
- 3. Հայաստանը Պ. դարում** 72 - 81
Խոսրով թ. Կոտակ եւ Շապուհ թ. - 72, Տիրանի թագաւորութիւնը - 73, Արշակունիների պետութեան ներքին հակասութիւնները - 74, Արշակ թ.ի թագաւորութեան սկզբնական շրջանը - 75, Աշտիշատի ժողովը եւ Ելեղեղեցու ազգեցութեան ուժեղանալը - 75, նախարարական ապստամբութիւններ Արշակ թ.ի դէմ - 76, Արշակաւան - 76, հայ-պարտկական պատերազմներ. Արշակ թ.ի մահը - 77, պարսիկների անյաջողութիւնը - 78, Պապի վարած բաղարականութիւնը - 79, Գէոդաչական ներգասակարգային պայքարի սրումը եւ Պապի սպանութիւնը - 79, Հայաստանի բաղարական դրութիւնը Դ. դարի վերջին - 80, Հայաստանի բաժանումը - 81:
- 4. Արշակունիների բազաւորութեան անկալմը** 81 - 83
Հայաստանի բաղարական դրութիւնը բաժանումից յետոյ - 81, Արեւելեան Հայաստանի դրութիւնը - 82, Արշակունի թագաւորութեան վերացումը Արեւելեան Հայաստանում - 83:
- 5. Հայաստանի սօցիալ-անտեսական դրույթին Արշակունիների շրջանում** 84 - 90
Հայ ֆէոդալականութիւնը - 84, հողատիրութիւն - 85, ֆէոդալական ծառայութիւն - 85, ֆէոդալական երարփիա - 86, զործակալութիւն - 87, շահագործուող դասակարգը - 88, առեւտարք - 88, արհեստներ - 89, բաղարներ - 90:
- 6. Կուլտուրա** 91 - 97
Նախարիստոնէական կուլտուրան - 91, ճարտարապետութիւն եւ քանդակագործութիւն - 91, ժողովրդական բանահիւսութիւն - 93, գոլթաներիներ եւ գուշաններ - 94, թատերական խաղեր - 95, հայ հեթանոսական կրօնը - 95:

ԳԱԱ Եիմնարար Գիտ. Գրադ.



FL0465527


A II
83884



Սահմալու համար դիմել՝
Յ. Մէթէրենի,

30 Ֆուլս Ա. Պողոսայ,

Գահիրէ :



PRINTED IN EGYPT BY

SAHAG-MESROB PRESS,
25 Sharia Tewfik, Cairo, Egypt.